





ԶԱՄԻԱԾԻՆ

1982

Դ



ԼԹ
ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՑ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Մարտի

1982





ՀՐԱՄԱՆԱԻ


Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ


ՎԵՀԱԾԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԴԻՐԱՍԻՄԱՆ
ՀԱՄԱԵՎՐԵՍԴԵԱՆ
ԶՈՌՈՐԵԱՆ
ԴԵՐԵՍԻՄԱՆ



ԻԿՈՆ
ԶԾԶԻ





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՋԸ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1982 թ. ապրիլի 11)

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալներ Մեր,

Աստուծո ողորմությամբ, երբ գարնան լուսը մի անգամ ևս բացվում է աշխարհի վրա, Մենք հույժ երջանիկ ենք, համայն մեր հավատացյալ ժողովրդին որ ի Հայաստան և որ ի սփյուռք աշխարհի, ավետելու՝ ճառագայթումը մեր բոլորի հոգիներից ներս՝ հարության լուսի՝ մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի:

Այսօր, նյութական տիեզերքի լուսը մխալսւում է ոգեկան տիեզերքի լուսի հետ: Աստվածային անիմանալի այս խորհուրդը, երբ այս պահին մեզանից ամեն մեկը փորձում է ապրել իր հոգու խորքում, նաև Սուրբ Էջմիածնի բազմադարյան կամարներից դեպի վեր, դեպի երկինք է բարձրանում՝ հաղթական երգը Քրիստոսի հարության:

Սիրելի հավատացյալներ, ձեզ և մեզ մեծ ավետիս, այո՛, ճշմարտապես հարյալ Քրիստոս ի մեռելոց:

Ձգում ենք, տեսնում ենք՝ ինչպես չքնաղ մի երազանքի մեջ՝ լույս պատկերը՝ հարություն առած Աստվածորդու:

«Հաւատամք ի մի Տէր Յիսուս Քրիստոս որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ և որ չարչարեալ, խաչեալ, թաղեալ յերրորդ ատուր յարուցեալ գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր,, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան»:

Հիսուսով Փրկչագործությունը կանխագուշակել էին արդեն Հին Ուխտի սարգարեները, լինելով արտահայտիչը բոլոր ժամանակների՝ արդարության և խաղաղության ծարավի մարդկանց ու ազգերի: Իսկ Սիմեոն Ծերունին, Աստուծո տաճարում, քառասնօրյա մանուկ Հիսուսին իր չորացած բազուկներով վեր բարձրացնելով բացականչել էր՝ «Արդ արձակեա՛լ զծառայս քո Տէր ըստ բանի քում ի խաղաղութեան, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց» (Ղուկ. Բ 30—32):

Սուրբ ավետարանիչները և առաքյալները ևս ի լրումն ժամանակների իրենց աստվածաշունչ գրություններով, քարոզություններով և ձեռագ գործերով,

եկան վկայությունը բերելու հարության հրաշքի տիեզերականության, որով Հիսուս, փրկչագործական իր անտեսության մեջ ընդգրկել էր համայն մարդկությունը:

Այսպես, Պետրոս առաքյալ առաջինը եղավ, որ Երուսաղեմում իր արտասանած ճառում ոգեկոչեց Աստուծո խոստումը Աբրահամին, թե նրա հաջորդներից մեկով պիտի օրհնվեն երկրի բոլոր ազգերը: «Հիսուս Նազովրեցուն, այն մարդուն, որին Աստված ձեզ ներկայացրեց զորությամբ, նշաններով և զարմանալի գործերով նրան անօրենների ձեռք մատնելով, փայտի վրա մեխեցիք և սպանեցիք. նրան Աստված հարություն տվեց, քանդելով մահվան կապանքները» (Գործ. Բ 22—25):

Իսկ Պողոս առաքյալ, Փրկչի խոսքը տարածելու իր առաքելության վկայությունը բերելով, բացականչում է՝ «Հայտնվեց այժմ, մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի երևալով, նա որ կործանեց մահը և լուսավոր դարձրեց կյանքն ու անմահությունը Ավետարանի միջոցով» (Բ Տիմ. Ա 10), նա որ եկավ ավետելու «խաղաղություն հեռաւորաց և մերձաւորաց» (Եփես. Բ 17):

Սիրելի ժողովուրդ, Հայաստանյայց մեր Մայր Եկեղեցին, Առաքելական մեր Եկեղեցին, Հարության Եկեղեցի է, քանի որ Քրիստոսի հարությունը հիմնաքարն է մեր հավատքի, քանի որ հարության ստուգությամբ լուսավորվում է մեր գիտակցությունը, զարթնում են մեր հոգու ուժերը և գործում է մեր կամքը՝ ընդդիմանալու մեղքին և խափանելու սարսափը մահվան:

Հիսուսի հարությունը հաղթությունն է և փառավորումը կյանքի, ընդդեմ մահվան, հաղթությունը և փառավորումը՝ բարո՝ ընդդեմ չարիքի ու մեղքի: Հիսուսի հարության հրաշքը գերագույն առհավատչյան է՝ հավիտենական կյանքի քրիստոնեական մեծ հույսի:

Հիսուս, մեռելներից առաջինը վերածնված, հանդիսանում է յուրաքանչյուր քրիստոնյայի անմահության հույսը: «Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց. քանպի մարդով եղև մահ և մարդով յարութիւն մեռելոց» (Ա Կորնթ. ԺԵ 20—22):

Մարդու կյանքի վերանորոգման, մարդու հոգու կատարելագործման, մեղքի կուպանքներից ապատագրման տեսանկյունից դիտված, Հիսուսի կյանքը, չարչարանքները, մահը և ապա հաղթական հարությունը, իրողություններ են և խորհուրդներ, որոնք մեր հոգու մեջ զարթնեցնում են չարիքին ու մեղքին դիմադրելու մղումը, հանուն արդարության պայքարելու և զոհաբերվելու ուժը, և մեր գիտակցության մեջ պայծառանում է ճշմարտությունը, որ մարդկային այս աշխարհում, իրապես արժեքավոր ոչինչ չի կարելի ստեղծել առանց տքնության, առանց նվիրումի, առանց զոհաբերումի: Ինքը Հիսուսը բացահայտում է այս ճշմարտությունը ասելով՝ «Ամեն ամեն ասեմ ձեզ. եթե ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթե մեռանիցի բազում արդիւնս առնէ» (Հովհ. ԺԲ 24—25):

Հիսուսի զոհաբերության խորհուրդի վրա հիմնված է Եկեղեցին: Նա կյանքի կոչված է նրա սուրբ արյամբ (Գործք Ի 28): Այսպես է որ Եկեղեցին խորհրդանշում է մեզ համար Հիսուսի տևական ներկայությունը մեր մեջ, մեր կյանքում, մանավանդ պատարագի սրբազան արարողություններով:

Շարունակելով Մեր խորհրդածությունները Հիսուսի մահվան և հարության մասին, չենք կարող չհաստատել թե՛ նաև մեր ժողովուրդը, հայ ժողովուրդը՝ հարության ժողովուրդ է: Դարեր, երկար դարեր, ազգի ու հայրենի պետության հարության հույսով՝ ապրած, տանջված ու ամեն տեսակի չարիքների ու բռնությունների դեմ մաքառած ժողովուրդ է նա: Մահվամբ մահը կոխած ու

«իր քաջ որդվոց սուրբ արյունով» վերածնած, հարություն առած ժողովուրդ է նա:

Չենք կարող չհիշել մեր ազգի նահատակությունը 1915-ի սև թվականին և ապա երեք տարի անց, հրաշքի համապոր նրա նոր կյանքի լուսաբացը Մայիսյան Սարգսրապատով, և Հայաստանի հանրապետության կազմավորումով, եղբայրական ժողովուրդների մեծ միության մեջ: Այո՛, մահվան և հարության խորհուրդը ապրեց նաև հայ ժողովուրդը, որ կյանքի նոր ուժերով պրահված, ինքնավստահ ու լավատես, վերաշինեց դարերով քանդված իր մայր երկիրը, բուժեց իր վավականների խորը վերքերը, նոր լույսերով, նոր երգերով բեղմնավորեց իր կյանքը, ծաղկեցրեց իր ազգային մշակույթը, և որ այժմ հաստատ քայլերով հառաջ է ընթանում դեպի իր առավել պայծառ ապագան, իր ազգային արդար երազանքներով գոտեպինդ:

Հանուն ի՛ր վերածնունդի, հանուն իր նո՛ր կյանքի ու իր ապագայի, հայ ժողովուրդն ու իր Մայր Եկեղեցին այսօր ունեն մի գերագույն ըղձանք, որ պատերազմի արհավիրք այլևս երբեք չտեսնեն նրանք, որ այլևս չկործանվեն շեներն ու քաղաքները և աղոթքի Տները հայոց, որ խորտակվեն բոլոր տեսակի վեճերն ու գործիքները մահվան, որ համայն աշխարհում հաղթող լինի ոգին խաղաղության իշխան՝ հարուցյալ մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի:

Պատերազմը համագումարն է բոլոր տեսակի չարիքների, բոլոր տեսակի մեղքերի: Իսկ «թողական մեղաց մահ է» (Հռոմ. 2 23):

Հայ եղբայրներ ու քույրեր, հայաստանցի թե պանդոխտ վավականներ Մեր, Զատկական ուրախությամբ ողջունեցե՛ք իրար ավետիսովը Քրիստոսի հարության, ավետիսովը մեր Մայր Եկեղեցու և մեր մայր ժողովրդի վերածնունդի:

Այլ և «եղբայրսիրութիւն հաստատեցի առ ձեզ» (Եբր. ԺԳ 1) և «վիսաղաղութեան ցիետ երթայք ընդ ամենեսին և ցարբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր» (Եբր. ԺԲ 14):

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Ամեն:





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՋԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (25 ապրիլի 1982 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեցին»:

Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք այտի մխիթարվեն, Հոգւո մխիթարություն այտի գտնեն:

Այսպես է խոսում մեր Փրկիչը Քրիստոս: Եվ իրոք այդ մխիթարությունը գտնում են բոլոր նրանք, ուշ թե կանուխ, ովքեր տառապել են ու զոհվել այս աշխարհում, վասն արդար մի իդեալի, վասն մարդասիրական մի գաղափարի:

Հիսուս Նոյն իր լեռան քարոզում երանի՛ է տալիս նաև բոլոր նրանց, ովքեր հալածվում են արդարության համար:

Ահա այդ եղավ պարագան նաև մեր ժողովուրդին: Պատմության ընթացքում բազում անգամներ, բայց մանավանդ մեր դարու սկիզբին, 1915—1916 թվականներին, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, Արևմտյան Հայաստանում նահատակվեց մի ամբողջ ժողովուրդ, մեր հայրերը, մեր մայրերը, մեր քույրերն ու եղբայրները, անվեն և անմեղ խաղաղ մի ազգաբնակչություն, մոտ երկու միլիոն հայեր, հայ քրիստոնյաներ զոհ դարձան Օսմանյան կայսրության կազմակերպած ցեղասպանության:

Հայտնի վիպասան Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրերը» վեպում, եղեռնի ահավոր այդ օրերին, հերոսներից մեկը բացականչում է. «Այս երկնքի տակ, այս աշխարհում այլևս հնարավոր չէ իբրև հայ ապրել»: Եվ իրոք, թվում էր, թե հայ ազգը բնաջնջվել էր լիով և նրա անունը այիտի հիշվեր միայն պատմության մոռացված էջերում: Առաջին համաշխարհային պատերազմից

հետո անմիջապես, առաջին օրերին, այդ էր պզգամունքը վերապրողներին: Սակայն իրականացավ Հիսուսի նախատեսությունը, նրա պատգամը և կարճ ժամանակ անց հայ ժողովուրդը սկսեց մխիթարվել ու նոր կյանքի դիմել:

Եկավ պատմական մեծ դեպքը՝ Սարգարապատի հաղթանակը, որ նոր ճանապարհի բացեց մեր ազգի պատմության մեջ և գրեթե հրաշքի համազոր պայմաններում հայ զորքը հաղթությամբ պսակվեց, հիմքը դրվեց հայ պետականության և ահա 60 և ավելի տարիներ է ի վեր մեր Մայր Հայաստանը ապրում է վերածնունդի պայծառ մի ժամանակաշրջան՝ համախմբելով իր ազգի զավակները հետպիսեռ իր մայր հողի վրա, և զարգացնելով ոչ միայն իր տընտեսությունն ու քաղաքաշինությունը, այլ նաև ծաղկեցնում իր ազգային մշակույթը:

Կարող ենք անվարան ասել, որ հայ ժողովուրդը իրապես «մահուամբ զմահ կոխեալ», այսինքն մահով մահը հաղթեց, վերածնվեց, հարություն առավ գերեզմաններից և այսօր լավատես և ինքնավստահ դիմում է դեպի իր է՛լ ավելի պայծառ ապագան:

Նույնը կարող ենք ասել նաև սփյուռքի հայ ժողովրդի մասին, որ այսօր մոտ երկու միլիոն հայեր է համրում: Նրանք էլ իրենց եկեղեցական կյանքով, իրենց կրթական հաստատություններով, մշակութային-ազգային կազմակերպություններով, միություններով, իրենց ողջ գործունեությամբ ներկայացնում են նույն պատկերը վերածնունդի, ազգային վարթունքի:

Ահավասիկ, սիրելի ժողովուրդ, մեր մխիթարությունը: Սակայն միայն այսքանով չէ, որ մենք մխիթարվեցինք: Եղեռնի ընթացքում մենք կորցրինք ոչ միայն մի ամբողջ ժողովուրդ, այլ նաև մեծ ստեղծագործ դեմքեր. տաղանդավոր բանաստեղծներ, գրագետներ, գիտնականներ, բարձրաստիճան հոգևորականներ, հասարակական գործիչներ, որոնք մեր ազգի ուղեկանության արտահայտիչներն էին: Այդ տեսակետից ևս մեր ժողովուրդը մխիթարվեց, որովհետև Սարգարապատի հաղթանակից հետո, նոր տաղանդներ ծնվեցին զարմանալի փայլատալումով նույնիսկ, ինչպես է Եղիշե Չարենցի պարագան օրինակ: Եղիշե Չարենց համադրումն է նահատակ Սիամանթոյի և Վարուժանի, իր փոթորկոտ հոգիով, իր հզոր տաղանդով, իր հայկական հարապատ ոգով, հայոց ազգի ոգեկանության ընդերքներից ժայթքող մի հրաբուխ, որ ողողեց ամբողջ մեր ժողովուրդի կյանքը սրանից տակավին 60 տարիներ առաջ և որ մինչև հիմա փայլում է իբրև հանճարեղ բանաստեղծ: Բայց ոչ միայն Եղիշե Չարենց, նաև շատ-շատեր, մինչև Պարույր Սևակ՝ հիշելով միայն մահացածները, ու նաև արտասահմանում ծնունդ առին մի քանի գրական տաղանդներ, ինչպես Համաստեղ և ուրիշներ, որոնք եկան մեզ մխիթարելու: Այդ հաղթական երթը, այդ գրական-գեղարվեստական, գիտական վերածնունդի ընթացքը շարունակվում է նաև այսօր, մեր Սովետական Հայաստանի իրականության մեջ:

Հայոց վերածնունդի հաղթական երթին պատկանող տաղանդավոր գրագիտուհի պետք է նկատենք նաև Մարիետա Շահինյանը: Ճիշտ է, նա հայերեն լեզվով չգրեց, ռուսերեն լեզվով ստեղծագործեց, բայց հայ ոգեկանության, հայ մտածողության, հայ ոգու արտահայտություն եղավ նա, որ իր ուրույն նպաստը բերեց ընկերվարական, մարդասիրական գաղափարների հաղթանակի ճանապարհի վրա: Նրա կյանքն ու գործը պայծառ արտահայտությունն էր, արվարության համար դարերով հալածված հայ ժողովուրդի:

Կարող ենք Մարիետա Շահինյանը նմանեցնել Վիլյամ Սարոյանին, որ նույնպես հայարեն չգրեց, սակայն խորապես հայ մարդ մնաց սկիզբից մինչև վերջ, մինչև իր վերջին շունչը:

Այսպիսով ահա նաև Մարիետա Շահինյան իր գեղարվեստական տաղանդով, իր բոցավառ ջունջով մարմնավորեց նույն հայ վերածնության ոգին:

Մարիետա Շահինյան, ծնված հեռավոր Նոր Նախիջևանում, Ռոստովի մոտ, հայ ընտանիքի հարկի տակ, շատ երիտասարդ հասակից նետվել էր մեծ հեղափոխության հորձանքի մեջ, հերոսական նվիրումով և իր ամբողջ կյանքը, մինչև ինստուն և ավելի տարիներ գրիչը ձեռքին պայքարեց իր սիրած իդեալների համար, միշտ հավատարիմ մնալով հայ ժողովրդի վերածնունդի ոգուն և հայ ազգի երազներին:

Մենք մի քանի անգամներ բախտը ունեցած ենք ծերունավարդ գրագիտուհու հետ կրոցելու և զգացած ենք իր մեջ այդ ապրումները: Այդ երևում է նաև իր առաջին մեծ վեպերից մեկի մեջ: «Հիդրոցենտրալ» վեպը, որ գրած է, ինչպես գիտեք, քսանական թվականներին, ինքը անձամբ Հայաստան գալով, որպեսզի հետևի առաջին հիդրոկայանի կառուցման աշխատանքներին: Այդ գործը մենք կարդացել ենք վաղուց: Մարիետա Շահինյանը այդ վեպում պատկերացրել է թշվառ վիճակը, որի մեջ ապրում էր տակավին այդ տարիներին հայ ժողովուրդը, դարավոր ավերներից, հալածանքներից, կոտորածներից հետո, երբ հարյուր-հազարավոր գաղթականներ Վասպուրականի, Մշո, Կարսի շրջաններից եկել էին ուտաբոբիկ, դեպի Հայաստան՝ իրենց կյանքը փրկելու: Նա նկարագրում է հայ մարդկանց ապրուստի ու աշխատանքի աներևակայելի դժվարությունների և պրկանքների մասին: Բայց բոլորը ոգեշնչված են շինարար մի իդեալով, վերականգնելու, սկսելու վերաշինել դարերով քանդված հայրենիքը հայոց:

Հետագայում նաև այլ հրատարակությունների մեջ Մարիետա Շահինյան խոսեց Հայաստանի մասին, վերջին գրքերից մեկում հատուկ գլուխ հատկացնելով Հայ Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր և ազգային-հարևանս սիրական զործունեության:

Բազմատաղանդ գրագիտուհի, համամարդկային ավելի տեսիլքներով տոգորված անձնավորություն, Մարիետա Շահինյան ամենագնահատված հեղինակներից մեկը հանդիսացավ թե՛ մեր ժողովուրդի և թե՛ համայն Սովետական Միության ժողովուրդների համար:

Մեզ համար պատիվ է և մխիթարություն, որ այսպիսի մի մեծ տաղանդ հայ ժողովուրդը նվիրեց հեղափոխության գաղափարին, նվիրեց Սովետական Միության ժողովուրդներին, նվիրեց մարդկության: Որովհետև Մարիետա Շահինյանի անունը աշխարհով մեկ հռչակված անուն է այսօր, բավալաթիվ լեզուներով թարգմանված:

Ահավասիկ, այսպիսի մի անձնավորություն կորցրեցինք այս վերջին ամիսներին: Ես ասացի կորցրեցինք, որովհետև նա մահացավ, բայց իրականության մեջ Մարիետա Շահինյանը մեզ համար կորուստ չէ, այլ մի մնայուն մեծ ունեցվածք, բոլորիս հպարտանքին արժանի:

Մենք այսօր, իր ընտանիքի փափագով և մեր ցանկությամբ, ս. պատարագից հետո հոգեհանգստյան պաշտոն պիտի կատարենք՝ աղոթելու հանգույլի հոգևուն խաղաղության և լուսավորության համար:

Թող Տերը օրհնի նրա հիշատակը և պայծառ պահի և՛ շրկնքում, և՛ այստեղ: Նրա պայծառ անունը և գործը միշտ անմոռաց և անթառամ պիտի մնա մեր ժողովուրդի սրտում, մեր ժողովուրդի կյանքում, այժմ և միշտ:

«Երանի՜ սգաւորաց, քի նոքա մխիթարեցին»:

Քույր Եկեղեցիներ



ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթողիկ եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),
Ղաթի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Ե-ԻՆ (Կահիրե),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),
Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 ԺՈՒՍՏԻՆՆԻՆ (Բուխարեստ),
 Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
 Անտիոքի առաքի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 ԻԳՆԱՏԻՈՍ ՋԱՔՔԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս):
 Անտիոքի և համայն Արևելքի հույն կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին
 Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
 Անտիոքի առաքի կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),
 Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
 միաբնակցող, Նորին Գերաշնորհություն ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻՆ (Լոնդոն),
 Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
 ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
 Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
 ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
 Վարչակալի և համայն Լեհաստանի միաբնակցող, Նորին
 Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻՆ (Վարչակալ),
 Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միաբնակցող, Նորին Գերաշնորհություն
 ԴՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա),
 Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
 ԽՐԻՍՏՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոպոլիս),
 Անտիոքի մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն
 ԱՆՏՈՒԱՆ ՊԻԵՐ ԽԲԵՇԻՆ (Բեյրութ),
 Մարսելի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
 ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
 Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
 ՖՐԱՆՅ ՔՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),
 Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին
 Ամենապատվություն կարդինալ
 Ժ. Գ. Մ. ՎԻԼԵԲԲԱՆԴՈՒՆ (Վատիկան),
 Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
 ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻՋԵՐԻՆ (Փարիզ),
 Լոնդոնի Եպիսկոպոս, Նորին Գերազանցություն
 ՋԵՐԱԼԴ ԷԼԻՍՈՆԻՆ (Լոնդոն),
 Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
 ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԸՆԱՐԻՆ (Լիոն),
 Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
 Նորին Գերազանցություն ՅԱՆԻՍ ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
 Էստոնական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
 Նորին Գերազանցություն ԷԴԳԱՐ ԽԱՐՔԻՆ (Տալլին),
 Ֆրանչիսկյան միաբնության կուստոդ
 ՄԱՌԻԲԻԼԻՈ ՍԱԿԿԻՆ Երուսաղեմ),
 Խաղաղության Համաքրիստոնեական Կոնֆերանսի գլխավոր քարտուղար,
 Նորին Սրբապետություն ՔԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
 Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար
 դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև),

Պապական նմիրակ և Հռոմի Սուրբ Աթոռի մշտական ներկայացուցիչ
Միացյալ Ազգերի կազմակերպության մոտ, Նորին Գերաշնորհություն
ԺԱՆ ՌՅՈՒՊ արքեպիսկոպոսին (Ժնև),

Միխայրյան ուխտի արքանայր, Գերապայծառ Հայր

ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),

Միխայրյան ուխտի արքանայր, Գերապայծառ Հայր

ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Մեր Տիրոջ և Փրկչի Հարության լուսավոր ավետիսով ուրախ ենք Ձերոյ Սրբության բերելու Մեր եղբայրական հարգալից սիրո ողջույնը և Մեր սրտից բխած մաղթանքը, որ հարուցյալ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի սիրո և խաղաղության պատվիրանը, լուսավորի հոգիները մեր օրերի մարդկանց և պետությանց ղեկավարների, որպեսզի խափանվեն չարն ու մահը և խորտակվեն պատերազմի բոլոր վեճերն ու գործիքները:

Պատերազմը համազումարն է բոլոր չարիքների և բոլոր մեղքերի: Իսկ «թողան մեղաց մահ է, այլ ջնորքն Աստուծոյ կեանք յափտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռոմ. 2 23):

«Երանի խաղաղարարաց զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:

Ձառկական ջերմ պաշտամունքով հղում ենք Ձերոյ Սրբության Մեր սերը ի Քրիստոս և մաղթանքը, որ երկար տարիներ միշտ քաջառողջ շարունակեք Ձեր հովվապետական սրբական առաքելությունը ի շինություն Ձեր պատմական մեծ Եկեղեցու հավատացյալների հոգևոր կյանքի:

Խաղաղություն Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ամեն:

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՐԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


Ս. Էջմիածին

*
*
*

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր Եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկած ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգրն քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ըստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ
ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ
ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ,
ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Միածնաեջ Սուրբ Սեղանեն, լոյս ուրախությամբ կբերենք Ձերդ Սրբության մեծ ավետիսը հրաշափառ Հարության Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի, որ խաչափայտին վրա խափանեց մեղքը և իր դատարկ գերեզմանով հաղթեց մահվան, ցոյց տալով մարդկության, մեզի ամենուս՝ ճանապարհը փրկության, ճանապարհը անանց կյանքի:

Այս սուրբ ժամուն Մեր մաղթանքն է որ մեր Եկեղեցւոյ վաճակները իրենց սրտերը լայն բացած, քաղցրությամբ ընդունին կենարար շնորհները Չատկական՝ հառավել շինություն իրենց հոգիներուն, հառավել կենսագործում Ավետարանի պատվիրաններու իրենց ընտանեկան և ընկերային կյանքին մեջ:

«Ձի թողակն մեղաց մահ է, այլ շնորհքն Աստուծոյ կեանք յափտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռոմ. 2 23):

Մեր եղբայրական սիրոյ ողջույնը Ձերդ Սրբության, տիրախնամ պատմական Աթոռիդ ուխտապահ միաբանության և համայն հայ հաւատացյալ ժողովուրդին:

Միրելիք Մեր, Չատիկ է այսօր՝ «գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ. ի բաց արասցուք այսուհետև զգործսն խաւարի, և զգեցցուք զվէնն լուսոյ» (Հռոմ. 13 12): Ամեն:


Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից պզգմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ըստացված պատասխան շնորհավորականների համար:





ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
 ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԲԱՐԵՐԱՐ ՏԻԱՐ ԱՐՇԱՎԻՐ ԿԼՈՐԻԿՅԱՆԻՆ՝
 «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
 ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԱՐՇԱՎԻՐ ԿԼՈՐԻԿԵԱՆԻՆ,
 ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
 ՈՂՋՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Փ ա ր ի վ

Նախախնամողն Աստուծոյ ողորմութեամբ հայ քրիստոնէական հաւատքի բազմադարեան կեդրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, մեր օրերուն վերաջինութեան ու ծաղկումի նոր շրջան մը կ'ապրի, շնորհիւ՝ նաեւ մեր հաւատաւոր պաւակներու բարոյական եւ նիւթական արտաբոխ նուիրաբերումներուն:


Այսօր, Մենք յոյժ երջանիկ ենք որ երբեմնի մեր պատանեկան երազ տարիներու հարապատներէն, Դուք եւս կը հանդիսանաք առատաձեռն բարերարներէն մին, Մայր Աթոռիս տպարանին տրամադրելով տպագրական կարեւոր մեքենաներ, իբրեւ արտայայտութիւն ձեր որդիական հոգատար վերաբերումի դէպի Սուրբ Էջմիածին եւ դէպի մեր Մայր Եկեղեցին:


Սրտանց Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք ձեզի եւ բարձր գնահատելով ձեր մեծահոգի պարգեւը, ձեզի կը շնորհենք «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» Ա կարգի շքանշանը, Մեր օրհնութիւններով հանդերձ, մաղթելով, որ պայն կրէք ձեր կուրծքի վրայ արդար պարծանքով, կենաց երկար, երկար տարիներ, միշտ քաջառողջ, միշտ նուիրուած հայաջէն ձեր ծրագիրներու կենսագործման:

«Քանզի ո՛վ է մեր յոյս կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ի Տէր առաջի Տեառն մեր Յիսուսի Քրիստոսի» (Ա Թեսաղ. Բ 19): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուաւ կոնդակս ի 22 մարտի
 1982 Փրկչական ամի,
 եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԱ
 ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
 ՀՄՐ. 1120





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և առաջնորդ Ս. Ներսես եպ. Պոպապալյանի միջնորդությանը, բարեհաճել է Իր հայրապետական բարձր գնահատությանն արժանացնել Լոնդոնի հայոց եկեղեցու Համայնքային Խորհրդի չորս անդամների և Համայնքային Խորհրդի Օժանդակ Տիկնանց Հանձնախմբի չորս անդամուհիների եկեղեցանվեր գործունեությունը ու նրանց պարգևատրել «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով:

«Աստուծոյ ողորմութեամբ, Մենք Հայրապետ Ամենայն Հայոց երջանիկ ենք հաստատելու, թէ բազում տարիներ շարունակ ինքնալսօժար նուիրումով ու բարի եղանակով մասնակցած էք Լոնտոնի Համայնքային Եկեղեցական Խորհուրդի գործունեութեան, ձեր կարեւոր նպաստը բերելով համայնքի եկեղեցական ու ազգային կեանքի յառաջընթացքին:

Մենք եւս սրտանց կը գնահատենք ձեր եկեղեցանուէր գործունեութիւնը եւ սիրով ընդառաջելով Անգլիոյ հայոց հայրապետական պատուիրակ Գերաշնորհ Ս. Ներսես եպիսկոպոս Պոպապալեանի միջնորդութեան, այսու Մեր կոնդակով կը շնորհենք ձեզի «Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ» շքանշանը, մաղթելով, որ զայն կրէք ձեր կուրծքին վրայ բազում երկար տարիներ արդար պարծանքով, քաջառողջութեամբ եւ ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգով եւ յաւէտ օրինեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ». ամէն»:

Հայրապետական օրհնության կոնդակի և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի են արժանացել պարոնայք՝

1. Հակոբ Փալամուտյան
 2. Հարություն Այվալյան
 3. Միքայել Փաշայան
 4. Սիմոն Ալեքսանյան
- Իսկ Տիկնանց Օժանդակ Հանձնախմբից՝ տիկնայք՝
1. Մարգարիտ Շիջմանյան
 2. Սևան Գրիգորյան
 3. Ֆլորա Ապաճյան
 4. Օֆելյա Գույումճյան:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ
ՏԻԿԻՆ ԱՐԱՔՍԻ ՄԵՈԹԵՄԵՏՅԱՆԻՆ՝ ՆՐԱ ՀԱՆՐՈԳՈՒՏ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 40-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԱԶՆՈՒՄՓԱՅԼ ՏԻԿԻՆ ԱՐԱՔՍԻ ՄԵՈԹԵՄԵՏԵԱՆԻՆ,
ՀԱՐԱԶԱՏ ԴՍՏԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՈՂԶՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ժ ը ն ե ի

Յոյժ երջանիկ ենք, որ մեր ազգի վառակներուն մէջ կը գտնուին ապնուա-
հոգի անձնատրութիւններ, որոնք իրենց բարոյական եւ նիւթական օժանդա-
կութիւնը կը նուիրաբերեն, որպէսզի հետզհետէ աւելի շէն ու պայծառ դառ-
նան մեր առաքելական Սուրբ Եկեղեցին եւ ազգային բարեսիրական հիմնարկ-
ները:

Մեզ յայտնի է, որ դուք, որպէս գթասիրտ եւ հաւատաւոր վառակը մեր
Սուրբ Եկեղեցին, աւելի քան քառասուն երկար տարիներ հանրօգուտ գործու-
նէութիւն ծաւալած էք Եգիպտոս Աղքատախնամի եւ Հայկական Բարեգործա-
կան Ընդհանուր Միութեան մէջ, նուիրաբերելով ձեր եռանդն ու ապնիւ աշխա-
տանքը մեր ազգի կարիքներուն:


Ջերմօրէն գնահատելով ձեր այս վաստակը, սոյն Մեր կոնդակով Սուրբ
Էջմիածնէն ձեզի կը յղենք Մեր օրհնութիւնը և բարի մաղթանքները, աղօթե-
լով, որ Աստուած ձեզ եւ ձեր բոլոր սիրելիներուն պարգեւէ լիակատար առող-
ջութիւն, ընտանեկան երջանկութիւն եւ երկար ու արեւոտ տարիներ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգով եւ յաւետ օրհնեալ ի Տեառնէ եւ ի
Մենջ». ամէն:

Կարգադրող

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 7 մարտի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 1118



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 2-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում քննության է առնվում նաև Մայր Աթոռի 1981 թ. բյուջեի կատարողականը և 1982 թ. բյուջեի նախագիծը:

Այս հարցի շուրջ զեկույց է կարդում Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ և գլխավոր հաշվապահ տիար Գառնիկ Քեհյայանը: Ձեկուցումից հետո ժողովի անդամների միջև տեղի է ունենում մտքերի փոխանակություն: Մայր Աթոռի գլխավոր հաշվապահը պատասխանում է նաև ժողովականների մի շարք տնտեսա-ֆինանսական հարցերին:

Գերագույն Հոգևոր խորհուրդը իր գոհունակությունն է արձանագրում այն. Գառնիկ Քեհյայանի կատարած տնտեսա-ֆինանսական օգտակար և ազնիվ աշխատանքի համար և խնդրում Վեհափառ Հայրապետին Իր ուշադրությանը արժանացնել նրա բարեխիղճ ծառայությունը:

Ապրիլի 4-ին, կիրակի.—Ծաղկավարդ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի

վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մովսիս վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Օրհնեալ որ գայ թագատորդ յանուն Տեառն, խաղաղութիւն յերկինս և փառք ի բարձունս» (Ղուկ. ԺԹ 38) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում «Դոնբացեք»-ի արարողություն:

Ապրիլի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Նույն օրը Բեյրութից Մայր Աթոռ վերադարձավ Տ. Հակոբ քնն. Գյուկչյանը, որը մարտի 24-ից Վեհափառ Հայրապետի կարգադրու-



թյամբ և Բեյրութի Կրոնասեր-Տիկնանց Համալսմանում հրավերով գտնվում էր Բեյրութում մասնակցելու համար Համալսմանում տալիս հանդեսին և փոխանցելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունը:

*
*
*

Ապրիլի 8-ին, հինգշաբթի.—Առաջ հինգշաբթի. Յիշատակ ընթերցեց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր, առավոտյան, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Հայկապոսն արք. Նաջարյանը:

«Հայր մեր»-ից առաջ Ս. Հոսիկ արքեպ. Սանթրոքյանը ընթերցում է Ս. Բարսեղ Հայրապետի Հաղորդության նվիրված ճառը:

*
*
*

Նույն օրը, երեկոյան ժամը 17.30-ին, Մայր տաճարում կատարվում է «Ունալուայի» կարգը:

Ժամը 19.30-ին սկսվում է Հիսուսի «սուկալի չարչարանաց և խաչելութեան» հիշատակին նվիրված Ավագ ուրբաթի արարողությունը կամ «Խառնաման» կարգը:

«Փառք ի բարձունս»-ից հետո «Տէ՛ր, Տէ՛ր, ընդէր թողէր քիս» բնաբանով քարոզ է խոսում Ս. Հայկապոսն արք. Նաջարյանը:

Ս. արարողությունը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
*
*

Նույն օրը Մայր Աթոռ է այցելում կաթոլիկ, օրթոդոքս և բողոքական դավանություններին պատկանող ֆրանսիացի, բելգիացի և չվեյցարացի հավատացյալների քառասուն հոգուց բաղկացած խումբը՝ առաջնորդությամբ Դոմինիկյան միաբանության անդամ և Լիոնի «Սենտ Իրենե» կենտրոնի ղեկավար հայր Ռենե Բուպերի:

Ուխտավորների սույն խմբին մաս էր կալում Մարսելի ավետարանական համայնքի վերապատվելի Հարություն Հելվաճյանը:

Առավոտյան ժամը 10-ին Վեհարանում եվրոպացի ուխտավորները պաշտոնական հանդիպում են ունենում Ամենայն Հայոց Հայրապետի հետ: Նորին Սրբությունը բարիգալստյան ջերմ խոսք է ուղղում ներկաներին՝ ողջունելով Հայաստանի պատմական սրբավայրերը ուխտի գալու նրանց քրիստոնեական բարի մտածումը, և ապա հակիրճ ծանոթություններ է տալիս նրանց Հայ Եկեղեցու պատմության և այսօրվա կյանքի մասին:

Այնուհետև եղբայրական սիրովիր մթնոլորտում Հայոց Հայրապետի և ուխտավորների միջև տեղի է ունենում ջերմ կրույց՝ էկումենիկ ոգով:

Ժամը 11-ին եվրոպացի հավատացյալները Մայր տաճարում ներկա են լինում Ավագ հինգշաբթի օրվա պատարագին և բոլորն էլ պատարագիչ քահանայի ձեռքից Ս. Հաղորդություն ընդունում:

Երեկոյան ժամը 17.30-ին նրանք Մայր տաճարում ներկա են լինում նաև «Ունալուայի» արարողությանը, հոգեկան մեծ բավարարությամբ:

Մայր Աթոռում գտնվելու առիթով եվրոպացի ուխտավորները այցելում են մայրավանքի թանգարանները, ծանոթանում Մայր Աթոռի շրջափակում գտնվող հուշարձաններին, լինում են Չվարթնոցում, Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե վանքերում:

Նույն օրը էկումենիկ խմբի անդամները հրաժեշտ են տալիս Վեհափառ Հայրապետին և երախտագետ սրտով տոգորված մեկնում Մայր Աթոռից:

*
*
*

Ապրիլի 9-ին, ուրբաթ.—Առաջ ուրբաթ. Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր, ժամը 12-ին, Մայր տաճարում կատարվում է «Կարգ Խաչելութեան» արարողությունը:

Երեկոյան ժամը 18-ին, «Թաղման կարգ»-ից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Մայր տաճարի շուրջ կատարվում է եռադարձ «Թափօր թաղմանն» արարողությունը:

*
*
*

Ապրիլի 10-ին, շաբաթ.—Առաջ շաբաթ. Ճրագալույց Չատկի.

Այսօր, երեկոյան, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Ստեփանոս արք. Չաքալյանը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Ս. Չատկի նախատոնակի արարողությունը, և Մայր տաճարում հնչում է Հարության մեծ ալեկոսը՝ «Քրիստոս յարեալ ի մեռելոց...»:

Ապա վանական սեղանատանը Մայր Աթոռի միաբանները և հոգևոր ճեմարանի ուսանողությունը միասին ձաջակում են Չատկի նավակատիքի ընթերցմը:

Նույն օրը, առավոտյան, Մայր Աթոռ և Հայոց Հայրապետին է այցելում Սովետական Միությունում Իսպանիայի արտակարգ և լիազոր-դեսպան Լուիս Գիլեռնո Պերինատը՝ իր հարգելի տիկնոջ հետ:

Վեհափառ Հայրապետի և հարգարժան դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ կրույց՝ բարեկամական մթնոլորտում:

Հաջորդ օրը, հավարտ ս. պատարագի, հարգարժան դեսպանը տիկնոջ հետ կրկին անգամ այցելում է Վեհափառ Հայրապետին և Վեհարանում շնորհավորում Նորին Սրբության Ս. Ջատիկը՝ Հարության տոնը:

Ապրիլի 12-ին, երկուշաբթի.—Յիշատակ մենելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Եղիշե քին. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն «վասն համօրէն ննջեցելոց»:

Նույն օրը Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում հյուրաբար Հայաստանում գտնվող Լիբանանի Սայդա քաղաքի համալսարանի մի խումբ դասախոսներ, այդ թվում՝ դոկտ. Ֆուադ Շահինը, դոկտ. Մուհամմեդ Համադը և դոկտ. Ժորժ Քաթարան, որոնք հետաքրքիր կրույց են ունենում Նորին Սրբության հետ:

Ապրիլի 17-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում սրբազան հորը, հանուն Վեհափառ Հայրապետի, դիմավորում է Ս. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը:

Ապրիլի 18-ին, կիրակի.—Խրկնազատիկ (Նոր կիրակի).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Ջատիկ արք. Ավետիքյանը և «Հայր մեր»-ից առաջ

քարոզում «Սիրեցես Վեր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մտաց քոց: Եւ սիրեցես զընկեր քո, իբրև զանձն քո» (Մատթ. ԻԲ 37—39) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ապրիլի 20-ին, երեքշաբթի.—Այսօր, ԱՄՆ-ում տարեկան իր արձակուրդը անցկացնելուց հետո, Մայր Աթոռ է վերադառնում Գերագույն Հոգևոր խորհրդի ատենապետ Ս. Սիրո արքեպ. Մանուկյանը:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում սրբազան հորը դիմավորեց Ս. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը:

Ապրիլի 21-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Ապրիլի 23-ին, ուրբաթ.—Այսօր, առավոտյան, Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում Սովետական Միությունում Ավստրալիայի արտակարգ և լիազոր-դեսպան Դեյվիդ Ուայթ Էվանսը՝ իր հարգելի տիկնոջ հետ:

Հայոց Հայրապետի և հարգարժան դեսպանի միջև տեղի է ունենում բարեկամական ջերմ կրույց:

Նույն օրը հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում «Հայաստանի բնական և արհեստական նորահայտ քարանձավները» թեմայի շուրջ տեղի է ունենում դասախոսություն և լուսապատկերների դիտում:

Դասախոսությունը կարդում է Հայաստանի քարայրագիտական կենտրոնի տնօրեն տիար Էդվարդ Սարգսյանը:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին ներկա է լինում Ս. Սերովբե արքեպ. Մանուկյանը, որպես անդամ:

Ապրիլի 25-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ կիրակի).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Նարեկ քին. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը (Քարոզը տես՝ «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 6):

Ապրիլի 26-ին, երեքշաբթի.—Այսօր, Վե-

հափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, Փարիզ՝ իր պաշտոնատեղին է վերադառնում Ս. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Ապրիլի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:


Հավաքույթին ներկա էր նաև Մարսելի հայ ավետարանական համայնքի հոգևոր հովիվ վերապատվելի Հարություն Հելվաճյանը:





ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ. ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՆՄԱՐ ԿՐԱԿԻ ԱՌԱՋ

(1982 թ. ապրիլի 24)



ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՎԱԹՍՈՒՆՅՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՇՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24, շաբաթ...

«Յիշատակ բիւրատր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի».

Մայր հայրենիքում թե սփյուռքի ողջ տարածքի վրա դարձյալ նշվեց հայ տառապանքի և մեր իսկաքական նահատակության տարելիցը, և հարգանքով հայությունը բովանդակ իր գլուխը խոնարհեց սուրբ և անմոռանալի հիշատակի առաջ իր այն պավակների, որոնք նախնյաց հայրենասիրական ոգով ու հավատքով ընկան «վասն Յիսուսի և Հայրենեաց» մղվող պայքարում, և զոհ գնացին 1915 թվականի թուրքական բարբարոսների կողմից նյութված և գործադրված Ի դարի առաջին և անլուր ցեղասպանությանը:

1915 թվական... ապրիլ ամիս. ապրելու ամիս և ոչ նահատակվելու...

«Ահավոր բան մը այնտեղ կկատարվի մութին մեջ...

Կասյանեն ապգ մը ամբողջ, որ կյանք ուներ և ջնորհ»:

Թշնամին արևմտահայության վրա արձակեց «ամբողջ չարիքին աշխարհին, ոտքի հանեց բովանդակ հրեշտությունը ի քուն» և ծրագրեց ողջ-ողջ գերեզմանել հայությունը, նրա պատմական հողերի վրա, ուր նա դարեր ու դարեր ապրել ու ստեղծագործել էր:

Բայց կատարվեց պատմության անսուտ հրաշքը: Ահավոր այդ եղեռնից վաթսույոթ տարիներ հետո էլ ապրում և ստեղծագործում է հայ ժողովուրդը թե՛ իր վերածնված մայր հայրենիքում և թե՛ սփյուռքի տարածքի վրա:

Անցան այդ տարիները: Կատարվեց կա-

տարվելիքը: Հայության մեծ վիշտը՝ նահատակությունը, վերածվեց գոյատևման ուժի, ստեղծագործական կամքի, կրկին ապրելու և հավերժելու անկոտրում հավատքի և վճռականության:

Դարեր շարունակ հայ ժողովուրդի կենսափիլիսոփայությունն է եղել իր նահատակությունը վերածել հաղթանակի, խաչելությունը՝ հարության, եղեռնը՝ ազգային վերածննդյան...

«Մահումը պմահ կոխեաց»:

Երբեք և երբեք չի ընկճվել հայ ժողովուրդը պատմության ընթացքում իր գլխին եկած դաժան ու արյունոտ հարվածներից: Հայության ուժի և հավերժության գաղտնիքը այս գիտակցության մեջ է:

Եկել ու անցել են փոշու նման մեր հայրենի երկրի և հայ սրտերի վրայով բարբարոսներն ու դահիճները, բայց նրանք երբեք չեն կարողացել իրենց խավար հոգին հանել, հասցնել Արարատի աննվաճ բարձունքին: Մնացել է հայ ժողովուրդը, ապատության, լույսի բարձունքին ձգտող մեր բարի ու աշխատասեր ժողովուրդը:

1982 ապրիլ 24:

Երևան: Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա վեր է խոյանում Ապրիլյան հայ նահատակաց հիշատակին նվիրված հուշարձանը իր երկինք սլացող սյուներով, որոնք խորհրդանշում են հայ ժողովուրդի այսօրվա ազգային վերածնունդը, հայրենի պետության ապահով ու խաղաղ հովանու ներքո:

Ժամը 11-ն է: Հայոց Հայրապետը, ուղեկցությամբ Տ. Սիոն, Տ. Սերովբե, Տ. Արսեն սրբապանների և Մայր Աթոռի երիտասարդ վարդապետների և սարկավագների, այցելում

է Ծիծեռնակաբերդ և Ապրիլյան եղեռնի պո-
հերի հիշատակին ծաղկեպսակ դնում նրանց
հուշարձանին, ապա մի պահ կանգ է առնում
հավերժական կրակի առաջ և «Հոգւոց» ար-
տասանելով լռությամբ հարգում է նահա-
տակների հիշատակը:

Ներկա է նաև ՀՍՍՀ Մինիստրների
խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի
խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ
Հասրաթյանը:

Ժամը 12-ն է: Մայր տաճարում, Նահա-
տակաց Սուրբ Սեդանի վրա, պատարագ է
մատուցում հոգևոր ձեմարանի տեսուչ Տ.
Եվնիկ քին. Պետրոսյանը և «Տե՛ր Աստված,
քո ժառանգության վիճակը մի մատներ
նրանց ձեռքը, որոնք ոչինչ են... Հիշի՛ր մեզ,
Տե՛ր, և մի անտեսեր մեզ մեր նեղության ժա-
մանակ» (Եսթեր ԺԴ 11—12) բնաբանով
սրտառու քարոզ է խոսում՝ ոգեկոչելով
սուրբ հիշատակը մեր նահատակների:

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայ-
րապետը՝ շրջապատված սրբական արքե-
պիսկոպոսներով, Մայր Աթոռի միաբանու-
թյամբ:

Արարողությանը ներկա են նաև Մայր
Աթոռի ողջ աշխատավորությունն ու հալա-
տացյալների խումներում բազմությունը, ո-

րոնք եկել են իրենց գլուխը խոնարհելու նա-
հատակաց հիշատակի առաջ:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայ-
րապետը, ի գլուխ եկեղեցական թափոռի, ա-
ռաջնորդվում է մայրավանքի հյուսիսային
կողմում կառուցված Ուխտի և Աղոթքի նա-
հատակաց հուշարձանը և նախագահում հո-
գեհանգստյան արարողությանը:

Նահատակաց հուշարձանը ծածկվել է
թարմ ծաղիկներով:


Նույն օրը, ժամը 15-ին, հոգևոր ձեմարա-
նի ուսանողությունը, ծաղիկներ ի ձեռին,
տեսչական կազմի ուղեկցությամբ, բազմա-
հազար ժողովրդի հետ, բարձրանում է Ծի-
ծեռնակաբերդ:

Երևան: Ժամը 19-ն է: Ողջ հանրապետու-
թյան մեջ հայտարարվել է **Լռության րոպե**:

Հայրենաբնակ ողջ հայությունը մեկ սիրտ
և մեկ հոգի հպարտ լռությամբ իր հարգան-
քըն է մատուցում Ապրիլյան եղեռնի մեր ան-
մոռաց նահատակների սուրբ հիշատակին:

Մինչև երեկո շարունակվում է մարդկային
երթը դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքը:

Փա՛ռք ու հարգա՛նք քեզ, երբեմնի նահա-
տակ ու այսօր հրաշափառապես վերածնված
Հայոց աշխարհ, ու քե՛զ, ալ՛գ իմ սիրելի,
ժողովո՛ւրդ հայոց:





ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՔԱՐՅԱՆ

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐՎԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ըստ Ավետարանների վկայության, ապրիլի 6-ը, Ավագ Հինգշաբթին, հանդիսանում է պատմական ու նշանակալից մի օր Հիսուսի երկրավոր կյանքի վերջում:

Մեր եկեղեցական օրացույցում այդ օրվա դիմաց նշանակվել են մի շարք տնօրինական իրադարձություններ և հանդիսավոր ելույթություններ, ինչպիսիք են Յիշատակ ընթերցեց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Ոստալուայ, Տերունական ընթրիք և սիրոյ կտակ:

Մեր շարականները ևս ամբողջությամբ նվիրված են Ավագ Հինգշաբթի օրվա այդ հոգևոր իրադարձություններին, ինչպիսիք են՝ «Վերաձգողն երկնից», «Արծաթսիրտ թեմամբն մոլեալ Յոդա», «Արկողղ վոյս որպէս Վոթօց», «Այսօր կանգնեցաւ առաքան մկրտութեան», «Այս խորհուրդ լցաւ», «Սիրտ իմ սասանի», «Այսօր անձառ» և այլ շարականները:

Հիսուսը ցանկացել է Ս. Հարության հրաշափառ դեպքը կանխող յոթնյակին՝ այսինքն Ավագ Շաբաթվա ընթացքում, բացառիկ ու հանդիսավոր հանգամանք տալ իր երկու տնօրինություններին. առաջինը՝ Ծաղկավարդի օրը վերջին անգամ լինելով իր հաղթական մոտեքին Երուսաղեմ՝ շեշտելու համար մեսիական իր հանգամանքը մանավանդ հրեաների համար, և երկրորդը՝ իր փրկագործ չարչարանաց ու խաչելության խորհրդին՝ համայն մարդկության փրկության համար:

Մոտ էր հրեական պատիկը կամ «Բաղարջակերաց» տոնը, «յորժամ զպատիկն զենուին» (Մարկ. ԺԴ 12): Հիսուսը ջերմ ցանկություն է հայտնում իր աշակերտների հետ կատարել, վերջին անգամ լինելով, պատկի

կամ պասեքի տոնը, որը մեծագույն տոնն էր հրեաների համար:

Աշակերտները Երուսաղեմում Հիսուսի գաղտնի աշակերտներից մեկի «մեծ ու վարդարուն վերնատան» մեջ պատրաստում են պատկական, ավանդական սեղանը:

Երեկոյան Հիսուսը աշակերտներով գալիս է վերնատուն և նստում պատկական սեղանի գլուխը: Նա օրվա այս հանդիսության նպատակը նշում է տրտում մի նախապագացմով. «Որքան ցանկացա այս պասեքը ուտել ձեզ հետ, քանի դեռ չեմ չարչարվել: Բայց ասում եմ ձեզ, թե այլևս չեմ ուտելու սրանից, մինչև որ պասեքը չկատարվի Աստուծո առջայության մեջ» (Ղուկ. ԻԲ 15—16):

Այնուհետև հանդարտորեն ոտքի է կանգնում, հանում է իր սովորական, արտաքին զգեստները: Վերնատան մի անկյունում նախապես պատրաստ էր կոնք, կոյժ, ջուր ու ղենջակ, օրինական սրբության լվացումը կատարելու համար: Մեջքին կապում է մի մեծ ղենջակ, վերցնում է ջրով լի կոնքը և խոնարհելով աշակերտների առաջ, հերթով լվանում է նրանց ոտքերը և ղենջակի ծայրով չորացնում: Աշակերտները «ավելի ջլարած, քան թե ուրախացած» ու անակնկալի եկած հակամայից համակերպում են ու լռում:

Ճաշից առաջ ոտքերի լվացումը կատարում էին տան սպասավորները: Իսկ այդ հանդիսավոր և բացառիկ առիթով ոտքերի լվացում կատարում էր Հիսուսը, որոշ դաստիարակչական նպատակով:

Ոտքերի լվացումից հետո Հիսուսը հագնում է իր սովորական զգեստը և կրկին բալվում պատկական սեղանին:

Սկսվում է պատկական ընթրիքը (Մատթ. ԻԶ 20. Մարկ. ԺԴ 17. Ղուկ. ԻԲ 14):

Ձատկի տոնախմբությունը նվիրվել էր եգիպտական գերությունից հրեաների ազատության և Սինայի անապատում նրանց քառասուն տարիների թափառումին, Ավետյաց երկիր մտնելուց առաջ:

Ձատկական սեղանին դրվել էին մի խորոված ամբողջ գառ, բաղարջ հաց, անապատի դժվարությունները հիշեցնող դառնահամ խոտեր, այլ կերակուրներ և ավանդական խորոսեր, վանապան մրգերից քացախով և այլ համեմունքներով պատրաստված բանդակը՝ մրգերի հյութից պատրաստված խըմիչք:

Հիսուսը արարողական առաջին բաժակը (Ղուկ. ԻԲ 15—18) բարձրացնում է և, այն խմելուց հետո, հերթով փոխանցում է աշակերտներին: «Առէ՛ք վայր և բաժանեցե՛ք ի ձեզ»: Այնուհետև Հիսուսը վերցնում է երկրորդ բաժակը, բաղարջ հացը և խորոված գառը մաս-մաս անելով, տալիս է աշակերտներին, որովհետև «պատկական գառան ոսկորները պետք չէ որ փշովեն» (Ելք. ԺԲ 16):

Հիսուսը սույն ընթրիքի պահին հաստատում է Եկեղեցու մեծագույն և սրբալիագույն խորհուրդը. վերցնում է նաև սեղանից մի կտոր բաղարջ հաց, օրհնում է այն, բաժանում երկու մասերի և բաշխում իր աջ ու ձախ կողմերում նստած աշակերտներին, ասելով. «Առէ՛ք, կերե՛ք, այս է մարմին իմ»: Ապա գինու բաժակը ևս վերցնելով, օրհնում է այն, գոհություն է մատուցում Աստուծո և իր խոսքը ուղղելով աշակերտներին ասում է. «Արբե՛ք ի դմանե ամենեքեան, զի ա՛յդ է արին իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու, ի թողութին մեղաց» (Մատթ. ԻԶ 26—28. Մարկ. ԺԴ 22—24. Ղուկ. ԻԲ 19—20):

Հիսուսի թելադրությունն էր այս առթիվ որպես իր մարմնի և արյան խորհուրդը, ամեն անգամ այդ կատարել, «առ իմոյ յիշատակի»:

Պողոս առաքյալ, խորհրդածելով Ս. Հաղորդության խորհրդի հաստատման մասին, գրում է. «Քանիցս անգամ թե ուտիցեք զհացըս վայս և զբաժակս ըմպիցեք, զմահն Տեառն պատմեցեք... (Ա Կորնթ. ԺԱ 24—26):

Երբ ավարտվում է ոտնավայի և Ս. Հաղորդության խորհրդի հաստատմանը նվիրված հանդիսությունը, պատկական սեղանի շուրջ սկսվում է Հիսուսի հրաժեշտի հուլիչ խոսքերն ու սիրո կտակի պատգամը:

Փրկիչը բացատրում է իր կատարած ոտնավայի հոգևոր նշանակությունը, երբ ինքը որպես իր աշակերտների «ոսուցիչն ու վարդապետը» լվաց նրանց ոտքերը և ցույց տըվեց իր օրինակով ու գործով ճշմարիտ խնարկության գերազանց դասը. «Եթե ես, որ

ձեր Տերն ու Վարդապետն եմ, լվացի ձեր ոտքերը, դուք էլ պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ, որովհետև ես մի օրինակ տվի ձեզ, որ, ինչպես ես ձեզ արեցի, դուք էլ նույն ձևով անեք» (Հովհ. ԺԳ 13—15):

Հիսուսը ավարտելուց հետո ոտքերի լվացման մասին իր բացատրականը, մի պահ լռում է: Այդ հանդիսավոր պահին նրա մըտքով է անցնում Սաղմոսի տխուր մարգարեությունը մարդկային ապերախության և նենգության մասին. «Նա, որ ինձ հետ հաց էր ուտում, միաժամանակ ինձ դավաճանում էր» (Սաղմ. ԽԱ 10):

Հիսուսը ապա տիրապետելով իր հույու-մին, բացահայտում է Հոտայի մատնությունն ու դավաճանությունը. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզնից մեկն ինձ մատնելու է» (Հովհ. ԺԳ 21):

Հուդան իսկույն հասկանում է, որ Հիսուսի ակնարկությունը իր մասին է: Եվ մինչ աշակերտները մատնվել էին խռովքի՝ Հիսուսի այս ցնցող հայտնության վրա, նա լքում է պատկական սեղանը և դուրս է փախչում:

Հովհաննես ավետարանիչը հրաշալի կերպով է բնութագրում Հոտայի մատնության թողած ընդվզեցուցիչ պահի տպավորությունը: Նա Հոտայի մեկնումից հետո գրում է. «Եւ գիշեր էր» (Հովհ. ԺԳ 30):

Արդարև, Հոտայի աշակերտության երեք տարիների ընթացքում նրա խավար հոգու մեջ չէին կարողացել թափանցել Հիսուսի սիրո, բարեկամության, ներողության պատգամների լույսերը:

Այդ գիշեր Հոտան հավիտենապես բաժանվում էր իր սիրո Մեծ Վարդապետից, նաև ֆիզիկապես: Նրա հոգու մեջ իջել էր խավարը, որը հուր-հավիտյան կործանում էր նրան: «Արտասուելի Յուդայի» (ջարական) «հոգեկան աշխարհի վրա կիջներ նաև գիշեր մը, որ առավոտ պիտի չունենար այլևս»:

Ոտնավայի արարողության և դրա հոգևոր, դաստիարակչական նշանակությանը մեծ ուշադրություն է տվել Եկեղեցին: Ավետարանը և Եկեղեցու հայրերը, առաքյալների ոտքերի լվացման ակտը համարել են «Հիսուսի հետ մասնակցության նշանակ և դրա զանցառությունը՝ Հիսուսի հետ մասնակցության վերկում» (Հովհ. ԺԳ 6—10), ինչպես այդ պատահել էր ըստ Ավետարանի վկայության Պետրոս առաքյալի հետ, որը վիճում էր Հիսուսի հետ իր ոտքերն էլ լվանալու առիթով. «Եթե քո ոտքերը չլվանամ,—ասում էր Հիսուսը,—ինձ հետ մաս չես ունենալու» (Հովհ. ԺԳ 8):

Այս իմաստով Եկեղեցու հայրերը Ոտնավայի Եկեղեցու խորհուրդների կարգն են անցկացրել:

Ոսնալվայի հիշատակը հանդիսավորապես կատարելու հեղինակը նկատվում է Ս. Եփրեմ Ասորի Հայրապետը (306—379):

Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը (1066—1105) երբ գտնվում էր Կ. Պոլսում, Ս. Եփրեմ Ասորու «վկարգն ոտնալուային» ասորերենից թարգմանում է և մոծում Հայ Եկեղեցու մեջ:

Հայ Եկեղեցին ամեն Ավագ Հինգշաբթի հետմիջօրեին ավանդական շուքով կատարում է ոսնալվայի կարգը:

Միայն Հայ Եկեղեցուն հատուկ է ոսնալվայի պահին ոտքերի օրհնած յուղով օծելու կարգը ևս: Տերունական ընթրիքի ժամին, ոտքերի վազման հետ օծումի հիշատակություն չկա ավետարաններում:

Սակայն, ավետարանների մեջ երկու անգամ հիշվում է Հիսուսի ոտքերի անուշահոտ յուղով օծման պարագան, մեկը Կափառնայում գլուղում, «մեղավոր կնոջ» կամ Մարիամ Մագդաղենացու կողմից (Ղուկ. Է 36—50), մյուս օծումը Բեթանիայի մեջ, Ծաղկավարդից մեկ օր առաջ, Ղապարոսի հարությունից հետո, երբ նրա բարեկամ Սիմոն Բոթոտի տանը ընթրիք էր տրվում ի պատիվ Հիսուսի, որտեղ ներկա է եղել նաև Հիսուսի մայրը՝ Ս. Աստվածածինը: Ընթրիքի ժամանակ Ղապարոսի բույր Մարիամը կատարում է Հիսուսի ոտքերի օծումը (Մատթ. ԻԶ 8—13, Մարկ. ԺԴ 4—9, Հովհ. ԺԲ 4—8). «Մարիամը մի լիտր ալնիվ նարդոսի թանկարժեք յուղ վերցնելով՝ օծեց Հիսուսի ոտքերը և իր մազերով էլ սրբում էր նրա ոտքերը. և տունը լցվեց յուղի բույրով» (Հովհ. ԺԲ 3—4):

Հիսուսի վրա կատարված երկու օծումների մեջ կար մեծ տարբերություն ըստ մեկնիչների. «մեկը (Կափառնայում) մեջ եղածը՝ ցղման արտահայտություն էր, իսկ մյուսը՝ ուրախառիթ երախտագիտության մը նշանը: Մեկուն մեջ արցունք կտիրեր, մյուսին մեջ՝ ցնծալից զվարթություն: Մեկուն մեջ մեղաց թողություն կշնորհվեր, մյուսին մեջ սուրբ սիրտը կգովվեր» (Մաղաքիա արքեպ. Օրմանյան):

Հայ Եկեղեցին ահա Ավագ Հինգշաբթի օրը, Հիսուսի մահից վեց օր առաջ, Բեթանիայում կատարված օծումը կցել է ոսնալվայի կարգին: Այդ մասին Հիսուսը վկայում

է. «Նա իմ հանդեպ մի բարի գործ կատարեց... Նա իմ թաղվելը կանխեց: ...Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ամբողջ աշխարհում, ուր էլ որ այս Ավետարանը քարոզվի, պիտի պատմվի դրա հիշատակին նաև այն՝ ինչ որ դա կատարեց» (Մատթ. ԻԶ 10—13):

Չատկական ընթրիքի սեղանի ավարտին Հիսուսը արտասանում է իր հրաժեշտի կամ իր՝ աշխարհից վերջին բաժանման խոսքերը և հայտնում է աշակերտներին իր «սիրոյ կտակը» (Հովհ. ԺԴ 1—31, ԺԵ 1—18 և Զ 1—33):


Հիսուսի վերջին խոսքերը, որոնք արտասանվում են սեղանի վրա, վերջանում են քաջալերական, խրոխտ ու հուսալից տոնով. «Ընդ իս խաղաղութիւն ունիցիք, յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցաւրոք, զի ես յաղթեցի աշխարհի» (Հովհ. ԺԶ 33):

Հիսուսի «սիրոյ կտակը» ավարտվում է նաև վերջին կամ «Քահանայապետական աղոթքով, հավատացյալների և գալիք քրիստոնյա սերունդների համար լավատես ու սրտառու մաղթանքներով (Հովհ. ԺԵ 1—26):

Հիսուսի այն վերջին աղոթքում հանդես է գալիս նրա «Հոգին, սիրո և միության հոգին, որ այս աշխարհի մեջ Ավետարանի հաղթանակը պիտի արդյունավորե և հանդերձյալ աշխարհին մեջ երանության փառքը պիտի պատրաստե: Այս է փրկագործության ահեղ խորհրդոյն գաղտնիքը: Չայնակցինք և մենք, և մաղթենք, որ Հիսուսի սրտաբուխ խնդրանքները ամենուն վրա իրականանան և Եկեղեցվո միությունը հաղթանակե» (Մաղաքիա արքեպ. Օրմանյան):

Չատկական սեղանի վրա, Հիսուսի արտասանած «սիրոյ կտակ»-ից և նրան հաջորդող հոգեկից աղոթքից հետո, Ավագ Հինգշաբթի գիշերը Հիսուսը ոտքի է կանգնում, օրհնում սեղանը և իր աշակերտների խմբի հետ պասեքի նվիրված սաղմոսներ երգելով, անցնում են Կենտրոնի ձորից և հասնում Զիթենյաց լեռան ստորոտ, Գեթսեմանի պարտեզ, ուր և տեղի է ունենում Հիսուսի մատնությունն ու ձեռքակալությունը (Մատթ. ԻԶ 47—56, Մարկ. ԺԴ 43—52, Ղուկ. ԻԲ 47—53, Հովհ. ԺԸ 1—10):





ԱՎԱԳ ՇԱԲԱԹՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ

Այս տարի ևս Մայր Աթոռում ավանդական շուքով կատարվեցին Քրիստոսի երկրավոր կյանքի վերջին յոթնյակի կամ Ավագ Շաբաթուն նվիրված եկեղեցական արարողություններն ու հոգևոր հանդիսությունները:

Ավագ Շաբաթը իր խորհրդով ու կրոնական նշանակությամբ, աստվածաշնչական ընթերցումներով, հոգեգրավ շարականներով, որոնք Ս. Սահակ Պարթևի գրչին են պատկանում, մեր եկեղեցու, ինչպես նաև ողջ քրիստոնեության համար հանդիսանում է կարևորագույն և սրբական յոթնյակը, որպես Քրիստոսի Չարչարանքների և Խաչելության, Հարության և Հաղթանակի շաբաթը:

Ավագ Շաբաթը, ըստ մեր եկեղեցական տոնացույցի, սկսվում է կիրակի օրը, Ծաղկավարդի կամ Քրիստոսի Երուսաղեմ հաղթական մուտքի տոնակատարությամբ և ավարտվում է հաջորդ կիրակի օրը, Փրկչի հրաշափառ Հարության կամ Չառնի արարողությամբ:

Ապրիլի 11, կիրակի.—Չառնի: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Վաղ առավոտվանից բազմահազար ուխտավորներ, եկած Երևանից, հանրապետության վանական շրջաններից և միութենական այլ քաղաքներից, լցրել են Մայր տաճարն ու մայրավանքի շրջափակը:

Գարնանային պայծառ առավոտ էր: Հայրենի բնությունը՝ Վաղ Գեղեցիկության շնչով ու բույրով էր հագեցած:

Ժամը 11-ին հնչում են Մայր տաճարի վանգերը՝ ավետելով Քրիստոսի հրաշափառ Հարությունը:

Վեհարանում Հայոց Հայրապետը, զգես-

տավորված, եկեղեցական թափորով, վանգերի տոնական դողանքների ներքո, հանդիսավորապես և խոունեամբ հավատացյալների խանդավառ արտահայտությունների ներքո, առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու զատկական սուրբ պատարագը:

Մայր տաճարը լիքն է աղոթավոր հավատացյալներով:

Տաճարի Ավագ բեմի դիմաց, ատյանի կենտրոնում, տեղ են գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, մայրավանքի պատասխանատու աշխատողները, իսկ ձախակողմյան դասում ուխտավորներ, այլ հրավիրյալներ և շուրջ 300 արտասահմանցի հայ ուսանողներ:

Ս. պատարագին ներկա է նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Ս. Սեղանին սպասարկում են Մայր Աթոռի միաբան վարդապետներն ու սարկավագները:

Ս. պատարագը շարունակվում է հանդիսավորությամբ մինչև «Հայր մեր»:

Քարույի պահն է: Հայոց պատարագից Հայրապետը, տալով Քրիստոսի Հարության կենդանարար ավետիսը, շնորհավորում է համայն հայության, որ ի հայրենիս և ի ըսփյուռս աշխարհի, Չառնիկը և խոսում ոգեշունչ և գեղեցկահյուս մի քարոյ՝ նվիրված օրվա մեծ տոնին և նրա խորհրդին:

Նույն օրը, երեկոյան ժամը 24-ին, Հայոց Հայրապետի զատկական քարույը ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հայոց Հայրապետի՝ Քրիստոսի Հարու-

թյան նվիրված քարոզը լույս է տեսել «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Ս. պատարագի ավարտին հավատացյալներից շատերը երկյոտված բարեպաշտությամբ Ս. Հաղորդություն են ստանում Հայոց Հայրապետի ձեռքից:

Եկեղեցական արարողությունից հետո Հայոց Հայրապետը թափոռով առաջնորդվում է Վեհարան, որտեղ մի անգամ ևս շնորհավորում է հայ ժողովրդի և մանավանդ Վեհարանում ներկա սփյուռքահայ ուսանողների Հարության տոնը, որոնք եկել էին աջահամբույրով ստանալու Հայոց Հայրապետի օրհնությունն ու լսելու իրենց ուղղյալ հայրապետական պատգամը:

Հայոց Հայրապետի Ս. Հարության տոնը շնորհավորելու էր եկել նաև հյուրաբար Երևանում գտնվող Իսպանիայի արտակարգ և լիազոր-դեսպան մեծահարգ Լուիս Գիլեռմո Պերինատը:

Ժամը 15-ին, օրվա մեծ տոնի առիթով, Վեհարանի սեղանատանը տրվում է ավանդական վատկական ճաշկերույթ, որին մասնակցում են 30 հրավիրյալներ:

Ջատկական ճաշկերույթին ներկա են Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի ղեկավար պաշտոնյաները, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողով

վի և Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամները:


Ճաշկերույթի ընթացքում Հայոց Հայրապետի վատկական տոնը ջերմորեն շնորհավորում են Ս. Հուսիկ, Ս. Արսեն սրբալանները, հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Եվնիկ քին. Պետրոսյանը, ճարտարապետ դոկտ. Վարապետ Հարությունյանը, Արարատյան թեմի թեմական խորհրդի նախագահ գրող Վալտեր Արամյանը:


Հայոց Հայրապետին շնորհավորում է նաև, օրվա տոնի առիթով, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Բոլոր ներկաները հիտնկայա բաժակ են բարձրացնում Հայոց Հայրապետի կենաց արևշատության և Մայր Աթոռի պայծառության ու անսասանության համար:

Վերջում Հայոց Հայրապետը շնորհակալության և օրհնության խոսք է ասում արտահայտված ջերմ և ազնիվ շնորհավորանքների համար և բաժակ բարձրացնում բոլոր ներկաների քաջառողջության և նրանց եկեղեցյանվեր ու հայրենաշեն գործերի հաջողության համար:

Ջատկական սուրբ սեղանն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և աղոթքով:





ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՇՈՒՇԱՆԻԿԻ

Ե դարի մեր մատենագիրների և պատմիչների գործերով մեզ են հասել Ս. Սանդուխտ կույսի, Ս. Հռիփսիմյանց կույսերի և Ս. Շուշանիկի վարքագրությունները:

Շուշանիկը Ս. Սահակ Պարթևի թոռն էր, նրա Սահականուշ աղջկա դուստրը: Շուշանիկի հայրն էր քաջն Վարդան Մամիկոնյանը: Հոր թելադրությամբ Շուշանիկը ամուսնանում է վրաց Բդեշխ Աշուշայի որդի Վազգեն իշխանի հետ:

Շուշանիկը որոշ տարիներ համերաշխությամբ ապրում է իր ամուսնու հետ: Այնուհետև Շուշանիկի և Վազգենի միջև տեղի է ունենում ընտանեկան վորեղ մի բախում՝ հավատքի հողի վրա:

Վազգենը, քաղաքական նպատակներով, կամավոր կերպով ընդունում է պարսկական զրադաշտական կրոնը: Շուշանիկը, որպես ընտանեկան և քրիստոնեական ամուր դաստիարակություն ստացած հայ հավատավոր կին, որոշում է չդավաճանել իր պապերի հավատքին և, հակառակ իր ամուսնու պնդումներին, անհողդողդ է մնում քրիստոնեական և հայկական իր հավատքի վրա:

Շուշանիկի վարքագրությունը պատմական է և վերաբերում է Ե դարի երկրորդ կեսին, պարսկական տիրապետության շրջանին, երբ Տիպոնը հետապնդում էր քրիստոնյաների հավատափոխությունը:

Վազգենը, հուսահատված՝ Շուշանիկին դավանափոխ դարձնելու իր մտադրությունից, նրան բանտարկում է Ուիրեթի բանտում, ենթարկում անլուր չարչարանքների, որոնց հետևանքով էլ Շուշանիկը սիրով ընդունում է նահատակության փառապսակը:

Երկու տարի առաջ, Շուշանիկի սույն պատմական վարքագրության հիման վրա,

վրաց հայտնի արվեստագետ և թատերագիր Մերվիշվիլին այն վերածում է «Շուշան» անունով ողբերգության:

Թբիլիսիում «Շուշան» պիեսի ներկայացումը, վրաց հայտնի դերասանների կատարումով, անցնում է մեծ հաջողությամբ:

Այդ բեմադրությունը մայիսի 29-ին ներկայացվեց Երևանի դրամատիկական թատրոնում:

Բեմադրությանը ներկա է լինում նաև Հայոց Հայրապետը:

Հաջորդ օրը, կիրակի, «Շուշան» ներկայացման բեմադրիչը և Թբիլիսիի վրացական թատրոնի դերակատարները այցելություն են տալիս Ս. Էջմիածին և Վեհարանում ստանում Հայոց Հայրապետի օրհնությունները և բարձր գնահատանքի արտահայտությունները, «Շուշան» պիեսի փալյուն ներկայացման առիթով:

Մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում «Վկայաբանություն Սրբոյն Շուշանկան դստեր մեծին Վարդանայ» վարքագրության աշխարհաբար թարգմանությունը, որը կատարել է հոգևոր ճեմարանի գրաբար լեզվի դասախոս Երվանդ Մելքոնյանը ըստ «Հայոց հին և միջնադարյան արձակի քրեստոնատիա» գրքի (Երևան, 1981, էջ 355—368): Բնագրային բացթողումները լրացված են ըստ Իլիա Աբուլաձեի «Յակոբ Յուրտաեցի վկայաբանություն Շուշանկայ» (Թբիլիսի, 1938) քննական հրատարակության:

Մեր Եկեղեցին, որպես նահատակի, կատարում է Շուշանիկի տոնը Վարազա խաչի պահքի երեքշաբթի օրը:

ԼՍԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եվ պարսից թագավորության ժամանակ Վազգեն Բղեշյալ՝ Աշուշա Բղեշի որդին, արքունի դուռ գնալով ուրացավ քրիստոնեությունը և ընդունեց պարսկական կրոնը կամավորապես և ոչ թե ստիպված կամ բռնությամբ: Նրա կինն էր Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի դուստրը և Հայոց Հայրապետ Սուրբ Սահակ Պարթևի թոռը՝ նրա Սահականուշ դուստրից: Ծնողները նրա անունը դրել էին Վարդենի, և հետո հորջորջումով վերանվանվեց Շուշանիկ, որ իր մանկությունից բարեպաշտ էր և աստվածավախ: Իր ամուսնու վրա ի անառակ վարքի համար հավատացյալներին աղաչում էր աղոթել Աստծուն, որպեսզի թերևս զգաստանա, իսկ երբ արքունի պալատ գնաց, հոգս էր անում և կասկածում, որ կուրանա Քրիստոսին:

Այդպես էլ արեց ամբարիշտը՝ ուրանալով ճշմարիտ Աստծուն. երկրպագում էր կրակին, ուխտ էր դնում սատանայի հետ և պարսիկ կին էր խնդրում թագավորից: Եվ [թագավորը] հավատում էր նրան և իր կնոջ մորը կնության էր տալիս նրան և խոստանում էր առաջին կնոջն ու որդիներին դարձի բերել մոգության կրոնին: Ամբարշտությամբ վերադառնում էր իր աշխարհը և իրենից առաջ իր աշխարհի լուր էր ուղարկում իր գալուստի և դարձի մասին:

Եվ մեկը ներկայացավ Շուշանիկ տիկնոջը՝ ողջույն տալու իր ամուսնու կողմից, և Շուշանիկը ասաց, թե՝

— Իսկապես ո՞ղջ է հոգով:— Մարդուն երդվեցնում էր կենդանի Աստծով: Նա ասում էր արցունքների մեջ.

— Քո ամուսինը ուրացավ ճշմարտությունը, երկրպագեց ատրուշաններին և ընդունեց պարսկական կրոնը:

Եվ տիկինը ընկավ գետին, դառնորեն լաց էր լինում, ուրացած ամուսնուն եղկելի էր համարում Աստծու առջև և ողբում էր որդիներին: Շատ ողբերից ու հառաչանքներից հետո վեր կենալով գնում էր եկեղեցի, իր հետ էր տանում որդիներին, քանի որ նա ուներ երեք որդիներ և մի դուստր, ծունկի էր գալիս Սուրբ Սեդանի առաջ և այսպես էր խոսում.

— Տեր Աստված ամենակալ, երկնքի, երկրի և նրանց մեջ գտնվող արարածների արարիչ: Դու ապատության այսպիսի օրենքներ հաստատեցիր քո Միածին Որդու միջոցով, քո օրհնյալ խոսքով՝ քո օգնական ծառաների միջոցով արձանագրված կենսաբեր Ավետարանով, ջրով ու հոգով վերստին և նոր ծնունդով՝ դառնալու և անվանվելու համար լույսի և արևի որդիներ, մաքրվելու համար գիշերային և ախտավոր ծնունդից, որ մարմնապես տղամարդուց և կնոջից է ա-

ռաջ գալիս, և արժանանալու համար լուսավոր ծնունդի այցելության, որ Հիսուս Քրիստոսով է: Արդ, ես իմը չեմ համարում սրանց, որոնք մարմնապես ծնվել են ամբարիշտ մարդուց, իբրև մահկանացուներ՝ մահկանացուից, և չեմ ասի, որ իմն են: Տեր, եթե սըրանց արժանի ես համարում մնալու քո ճշմարիտ ու Հոր, Որդու և Սուրբ Հոգու միջոցով վերստին ծնունդիդ մեջ, և քո տերության առաջ՝ իմ բազմիկների վրա արդարությանը սնված, ճշմարտությամբ պահիր սըրանց ուղիղ հավատքի և բարի գործերի մեջ՝ զգաստությամբ, արդարությամբ և աստվածապաշտությամբ ապրելու երկրում, և չախշտեն արարածներին, այլ՝ արարչիդ, որ օրհնյալ ես հավիտյան, ամեն: Որովհետև ուրացողը ամբարշտությամբ լցված գալիս է կորուստյան վիհերում որսալու ինձ և իմ ծնունդներին: Եվ արդ, Հիսուս Քրիստոս, որ Տեր ես և Աստված, քեզ եմ հանձնում ինձ և իմ որդիներին, և պատրաստ եմ ես չարչարվել և մեռնել քո սուրբ անվան համար և չհամաձայնվել ուրացողին և պիղծ կողակցի կամքին:

Եվ առավոտից մինչև երեկո երանելին եկեղեցում արտասուքներով շատ պաղատանքներ էր մատուցում բոլորի Տիրոջը: Եկեղեցու պաշտոնյաները կատարեցին երեկոյան պաշտամունքը, և բոլորը սգակցում էին և զգուշանում էին որևէ բան խոսել այն մասին: Եվ նա վեր կենալով մտավ մի փոքրիկ տնակ, որ եկեղեցու մոտ էր, և ամբողջ գիշերը անհանգիստ լալով և ողբալով աղոթում էր Աստծուն՝ անձի դառնության պատճառով բոլորովին ոչինչ չճաշակելով, և չէր համարձակվում որևէ բան ասել մերձավորներին:

Այդ ժամանակ եպիսկոպոս չկար Բղեշի տանը, բայց տիկնոջ դռան երեցը համարձակվում էր սփոփել նրան ահավոր վտանգի համար և ասում էր երանելուն.

— Հիշիր Աստծուն և նրա հոյսով մխիթարիր քեզ, որ համբերություն է տալիս տառակուսողներին և կյանք նրանց, որոնք թուլացել են հոգով: Ինքդ քեզ սփոփիր Քրիստոսով և կովիր բարի մարտը, որով կաս և մարտնչում ես, մխիթարությամբ լքիր անցավոր բաները և հուսով մոտեցիր Աստծուն, որ ամենակարողն է. թեև և ոչ մեկին չունենաս հարապատ, սակայն ընտանեբար հոգ կտանի քեզ:

Եվ շատ այլ խոսքերով քաջալերում և մխիթարում էր նրան:

Եվ մերձավորները համարձակվելով կապվել նրա հետ աղաչում էին կերակուր ընդունել, և նա լսում էր, մի քիչ կերակուր և ընկալելի ճաշակելով գոհանում էր Տիրոջից, և

ամբողջ գիշերը աղոթքներով, սաղմոսերգությամբ և Սուրբ Գրոց ընթերցումով էին անցկացնում: Եվ մրրկված, տարակուսած և խռովված սիրտը փոքր-ինչ կապոտրվում էր Աստծու հոյսով: Եվ առավոտյան արարողությունը կատարելիս օրհնություն էին տալիս Աստծուն:

Եվ դռան քահանան մոտենալով ասաց տիկնոջը.

— Քանի որ ուրացողը պատերապմ է հարուցել քո դեմ, ի՞նչ ես մտածել և ի՞նչ պիտի անես նրա՝ դստեր հետ միավորության համար, որին պետք է կնության առնի պարսկական օրենքի համաձայն, և որդիներին ճշմարիտ Աստծուց հեռացնելու և խավարի որդիներ դարձնելու համար, ինչպես ինքն է, և այն բոլոր չարիքների համար, որ պետք է ցույց տար սոգերի դրոմամբ և չարի ապրեցությամբ, առել արդարությունը, սիրել անօրենությունն ու ամբարշտությունը, որպեսպի ամեն ինչում մեղք գործի:

Տիկինը պատասխանեց և ասաց.

— Այս բաները վտանգում են իմ անձը, իմ տղաների և դստեր համար հոգս են և տառապանք, որովհետև գիտեմ ամուսնու ամբարշտությունը, այդ պատճառով էլ ջարտանակում եմ սուգը և կտոր-կտոր են լինում արցունքներով: Ո՛վ կտար ջուր իմ գլխին և արցունքի աղբյուրներ՝ իմ աչքերին, օթևան անապատում, որպեսպի լաց լինեի իմ ամբարիջտ և ուրացող, անբժշկելի ամուսնու համար, իմ վավակների տագնապի համար, որ այլափոխվում են՝ աստվածաճանաչությունից անաստվածգիտություն, լույսից խավար փոխադրվելով: Ո՛վ չի ողբա կորստի մեծ լուրը, որ լսվում է: Ո՛ր ականջները կդիմանան կորստի լուրին, որ մխիթարության մասնիկ անգամ չունի: Ո՛ր աչքերը կտանեն ամբարիջտ և Աստծուն ուրացող ամուսնու տեսքը: Ո՛ր խոսքը կկարողանա պատմել այսպիսի աղետների թշվառությունն ու վտանգը: Մահվան ի՞նչ համբավ է, որ այսպես գեհենի է մատնում հոգին և մարմինը: Ո՛ր մահացածն է, որ երկրում մխիթարության մասնիկ չի թողնում իր մերձավորներին: Ինչպե՞ս սրանցով մերժեմ սուգը, և իմ անձը մխիթարվի մի քիչ: Որքան է վտանգը, և դեռ բոլորից ավելի պետք է զգալ ահագին հեծությունը: Ով մարդիկ, ասացե՛ք, ո՞ր հանճարեղն ու իմաստունն է, որ կարողանա լուծում գտնել պատահածներին: Ինչո՞ւ, Տեր, հեռու կանգնեցիր և անտեսեցիր քո աղախնուն նեղության պահին, տագնապների մեջ և վտանգի ժամանակ, քանի որ բացի Աստծուց այլ տեղից մխիթարություն չկա, ոչ վերակացուներ, ոչ մերձավորներ, ոչ սիրելիներ, ոչ ծառաներ, ոչ աղախիներ, ոչ օտարներ, ոչ պան-

դոխտներ, ոչ հեռավորներ, ոչ մոտիկներ և ոչ ոք երկրավորներից: Կորալ հավատքը, հատավ, սպառվեց ամեն հոյս երկրից և մարդկանցից, բայց կսպասեմ ամենակալ Աստծուն, որ կփրկի ինձ, աղավառ պես թևեր կտա ինձ, որպեսպի թևերով թռչելով հասնեմ և դադար առնեմ անապատում, ուժ առնեմ վերին խնամակալությունից և փոքր ինչ սթափվեմ իմ մրրկված սրտնեղությունից և վիատությունից: Եվ ինչպես ինքը իր իմաստությամբ և մարդասիրությամբ գիտե, ես պատրաստ եմ իմ անձը տալ բանտի, կապանքների և կտտանքների, որով կնեղի ինձ ուրացողը, որպեսպի ապրեմ Աստծով և մեռնեմ նրա անվան համար, և չեմ թողնի իմ Հայոց լուսավորիչ հայրերի ավանդությունը և չեմ գայթակղվի իմ հակառակորդների կողմից, որոնք վիրավում են իմ անձի և Հոր, Որդու և Սուրբ Հոգու խոստովանության, երկրպագության և փառաբանության ճշմարիտ ավանդի դեմ, և ես Տիրոջ շնորհով ու կորությամբ անջարժ, անդողվելի և հաստատուն կմնամ և ուրացողի հետ չեմ միավորվի ու չեմ պղծվի: Մաքուր և արդար վարքով մեծ համբերությամբ ենթակա և հպատակ կլինեմ Աստծու փառքի և մեր Տեր Հիսուս Քրիստոսի փառաբանության համար, որ ուզում է, որ բոլոր մարդիկ ապրեն և հասնեն ճշմարտության ճանաչման:

Եվ այլ բազում խոսքերով ողորմագին կերպով ողբում էր իր որովայնի ծնունդներին և ամբարիջտ ամուսնու վայրենությունը, որ գալիս էր պատերապմ հարուցելու ճշմարտության դեմ և որոգայթ դնելու և՛ որդիներին, և՛ դուստրերին որսալու կորստի մեղքերի վիհի մեջ՝ պարսկական օրենքով, ուրացությամբ և պղծությամբ: Եվ ինքն իրեն մխիթարում էր Աստծու հոյսով, հիշում էր, թե ինչ է պատմվում սաղմոսերգության մեջ. «Իմ անձը չէր ուզում մխիթարվել, հիշեցի Աստծուն և ուրախացա»: Եվ այսպես քաջալերեց ինքն իրեն և անմիջապես տրտմությունը ուրախության փոխարկեց:

Այն ժամանակ ուրացած Բղեշից գալիս էր Վրաց աշխարհ՝ իր տուն, կանչեց իր եպիսկոպոսներին և քահանաներին, խոսում էր նրանց հետ մեղմությամբ և պարզևներ էր խոստանում և առաջվանից ավելի բարի էր դառնում.

— Մի խորջեք և մի վիատվեք իմ տերությունից, — ասում էր: Եվ պատգամ էր ուղարկում տիկնոջը՝ ետ կանգնելու իր կամքից և համաձայնվել նրա կամքին և աշխարհի փառքը վայելել առաջվանից ավելի շատ: Եվ նրանք եկան, Բղեշիս եղբայրն էլ նրանց հետ, որի անունը Ջոշիկ էր. բոլորը արցունքների մեջ վարանում էին ասել ուրացո-

դի պատգամները, և բազմազան ու հաճախակի հետո եպիսկոպոսն ու Ջոզիկը մի կերպ սկսեցին պատմել Բդեշխի կողմից ասվածները:

Եվ նա եպիսկոպոսին ասաց խստագույն ձայնով.

— Եվ այդ դո՞ւ ես հրամայում միաբանել ամբարիշտ և Աստծուն ուրացող մարդու հետ և այսպիսի բաներին թելադիր ես լինում և մտախաբ: Ավաղ ինձ՝ թշվառիս, որ խորհրդաւոր չգտնվեց ինձ համար: Ճանաչեցե՞ք ամբարիշտի նենգությունը, թե ինչպես է խարդախում ինձ դեպի կորստի վիհը, մի ընդունե՞ք նրա [ասածները], որ որսում է խաբեությամբ, բայց ես չեմ խաբվում իմաստության ինձ առաջնորդելով դեպի արդարություն: Լսիր առաքելական խրատը, որ մարգարեական խոսքն է հիշեցնում. «Ելե՛ք նըրանց միջից, և մեկնե՛ք, ասում է Տերը, և պիղծերին մի մոտեցե՛ք, որովհետև ով մերձենում է պոռնիկին, [նրա հետ] մեկ մարմին է, և ով մերձենում է Տիրոջը, մեկ հոգի է [նրա հետ], իսկ որտեղ Տիրոջ հոգին է, այնտեղ ապատ է մեղքից: Եվ ես, ասում է, կընդունեմ ձեզ և ձեզ Աստված կլինեմ, և դուք ինձ որդիներ ու դուստրեր կդառնաք, ասում է ամենակալ Տերը»: Իմ սիրելիներ և վերակացուներ, իսկ եթե մենք այս ավետիսը ունենք, ո՞վ ինձ կբաժանի նրանից, որ պիտի փրկի ինձ հավիտենական կրակից, ուրացողի հաղորդակցությունից, որին որսաց սատանան նրա կամքով: Եվ ես ամենայն սրբությամբ և արդարությամբ պաշտեմ կենդանի Աստծուն և ընդունեմ բոլոր չարչարանքներն ու վտանգները, որ բերելու է ինձ վրա Աստծուն ուրացողն ու արդարության թշնամին:

Եպիսկոպոսն ասաց.

— Քո ասածները ճշմարիտ են, բայց այս պետք է մտածել, թե չարը առավել բարկություն ու նախանձ կբորբոքի և չարություն կավելացնի վերակացուների և ժողովրդի վրա, բայց եթե վեր կենալով գաս, թերևս անօրենի բարկությունը մի փոքր իջնի:

Բդեշխի եղբայրը նույնպես աղաչում էր: Եվ երբ բոլորը ստիպեցին և թախանձեցին երանելուն, համաձայնվում էր նրանց կամքին և ասում.

— Ձեր կամքը կանեմ և ես գիտեմ, որ չարչարանքներ է բերելու գլխիս: Յուրաքանչյուրը իր տեղը կգնա և ինձ մենակ կըթողնեք, ես միայնակ չեմ, որովհետև իմ Տերը, որի վրա եմ դրել հույսս, ինձ հետ է, քանի որ Տերն է իմ օգնականը, ես չեմ վախենա, թե ի՞նչ կանի ինձ չարը:

Եվ վեր կացավ, գնաց նրանց հետ և մղտեւով ապարանք չէր համաձայնվում գնալ

իր սենյակը, այլ վազվում էր մի փոքր տնակում և աղոթում էր Տեր Աստծուն և ասում.

— Տեր իմ Աստված, հույսս քեզ վրա եմ դրել, գթա ինձ, որ օգնական ես անօգնականներին, տարակուսողներին՝ վատահոթյուն, անհույսներին՝ հույս, և սգավորներին՝ մխիթարություն, խռովյալներին՝ բերկրանք, տառապյալներին՝ հատուցում, վատակամներին՝ հանգիստ, չարչարվածներին՝ պորացուցիչ, կապալներին՝ արձակող, նավարկողներին՝ նավահանգիստ, որբերին՝ հայր, վատատոհմիկներին՝ տոհմ, և քեզ հուսացողներին՝ ապավեն և մեծ հույս: Ինձ պորություն, ժուժկալություն և դիմացկունություն տուր, երբ ուրացողը չարի ապրեցությամբ սրամտությամբ բարկանա ինձ վրա, որպեսզի ինձ պահեմ սրբությամբ, անարատությամբ և ճշմարիտ հավատքով, որովհետև դու ինքդ գիտես, Տեր իմ, որ իմ մանկությունից ատեցի ու անարգեցի մեղքը և քո օրենքները սիրեցի: Հիշիր քո ծառաներին՝ իմ հայրերին, որոնց պարմն եմ ես, որոնք սիրեցին քեզ, ով ճշմարիտ Աստված, և նրանց բարեխոսությամբ օգնիր ինձ այս պատերազմում, որ իմ առջև է: Եվ ոչ մի օգնական չունեմ, ո՛չ հայր, ո՛չ եղբայր և ո՛չ այլ ոչ մերձավորներից, որ հարապատրեն հոգա իմ մասին: Այլ դու, Աստված իմ, հայր և առաջնորդ, մի պրկիր քո աղախնուն քո խնամքից և ողորմությունից, ինձ ուժ տուր իմ դժվար ընթացքը ավարտել, նմանվել իմ հայրերին և նրանց հանգստին ու վիճակին ծառանգորդ լինել: Եվ արդ հույսս քեզ վրա է, որ Սուրբ Հոփսիմիկն փրկեցիր թագավորի բարկությունից և նրան ամոթի մեջ թողիր, և ինձ՝ քո անարժան աղախնուն փրկիր ուրացողի բարկությունից, որովհետև քոնն է հաղթանակը, և ես պիտի հաղթեմ:

Եվ աղոթք կատարելով այդ տնակում մընում էր երեք օր անկերակուր, անըմպելի, և գիշեր ու ցերեկ անդադար սաղմոսերգությամբ և աղոթքներով լցվում էր հոգևոր կերակրով: Եվ երրորդ օրը, երբ ընթրում էին, ուղարկեց իր եղբորը՝ Ջոզիկին, տիկնոջը ընթրիքի հրավիրելու: Տիկնիկը չէր համաձայնվում, բայց բազմա աղաչանքներից և փառաբանական խոսքերից հետո գնում էր լալով և տրտմությամբ: Եվ ուներ մի փոքրիկ Ավետարան, որն իր նախահայր Սուրբ Սահակին էր, այն իր հետ էր և նրանով գաղտնորեն աղաչում էր Աստծուն: Չկերավ և չխմեց այդ դիվական ընթրիքից, այլ լուռ արտասվում էր՝ հիշելով Աստծու կողմից խոստացված բարիքներն ու հոգևոր վայելքները՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Եվ վեր կենալով գնում էր իր տեղը:

Եվ Բդեշխը սրտնեղած բորբոքվում էր

բարկությամբ, և երբ յուրաքանչյուրը իր տեղը գնաց, ուղարկեց, նորից կանչեց նրան իր մոտ: Իսկ նա չկամեցավ գնալ: Վեր կացավ, ինքը գնաց գազանացած և ծառաների հետ նրան քարջ էր տալիս տեղում, իսկ նա աղաղակում էր և ասում.

— Տեր Հիսուս, օգնիր ինձ.

Եվ սաստիկ հարվածում էր նրան գավապանով, և ոչ ոք չէր կարող բարկությունը հանգցնել: Այն ժամանակ յուր էին տալիս եղբորը, որ գալով չէր կարողանում իջեցնել բարկությունը. նրան էլ արհամարհանքով դուրս էր անում և սաստկացնում էր սարսափելի և անողորմ հարվածները, մինչև նրա վրա ողջ տեղ չմնաց բրածեծ անելուց: Եվ նա կար ինչպես մեռել, իսկ Բդեջիւը ավելի վայրացած՝ անարգում էր նրա Աստծուն ու հայրերին: Եվ երբ հոգնեց և թուլացավ շատ հարվածներից, հրաման տվեց երանելուն քարջ տալ իր տեղը, և նրան մահացած էր համարում: Առավոտյան վեր կենալով գնաց երանելուն տեսնելու: Երբ տեսավ, որ կենդանի է, պահապաններ կարգեց՝ հրամայելով թույլ չտալ տղամարդկանցից կամ կանանցից որևէ մեկը նրա մոտ մտնի, որպեսզի նույն չարչարանքով մեռնի: Եվ կերակուր էր հրամայում՝ զարու հաց և ջուր: Իսկ երանելին ոչնչից չէր դժգոհում, այլ գոհություն էր հայտնում Աստծուն, որ նրա անվան համար արժանի եղավ չարչարանքներ ընդունել և փրկվեց ուրացողի հաղորդակցությունից, ինչպես որ նա էր ուզում, և հույսը դնում էր Աստծու փառքի համար կատարվածի վրա:

Եվ նա գնում էր աշխարհիկ գործերին:

Հետո գալիս էր դռան քահանան և խընդրում պահապաններին, որ տեսնի երանելուն: Իսկ նա չէր կարողանում կանգնել ամբողջ մարմնի սաստիկ այտուցներից և արյունից, որ ճապաղել էր նրա ջուրջ: Եվ քահանան լալիս էր դռնուրեն: Եվ երանելի տիկինը ասում էր:

— Մի լար ինձ վրա, որովհետև ամեն մարդ չի արդարանում Աստծու առաջ առանց փորձության և չարչարանքների, ոչ էլ Փրկչի ջնորքին է լքում և առանց ողորմության թողնում որևէ մեկին, որ հույսը նրա վրա է դրել: Ես այս չարչարանքներով մաքրվեցի ամբարիշտ ամուսնու պիղծ անկողնուց: Եվ ես ուրախ եմ չարչարանքներին համար, որ հասն ինձ, որովհետև այս չարչարանքներով պիտի արժանանամ իմ հայրերի բարի ժառանգության, որ Հիսուս Քրիստոսով է, և այդ բոլորի համար գոհություն տվեցի նրան և կտամ միշտ:

Եվ երանելուն աղաչում էր կերակուր ուտել, և նա թեև ուզում էր, սակայն սաստիկ

հարվածների պատճառով չէր կարողանում: Եվ ապա հավիլ մի քիչ կերավ, մի քանի օր հետո մի փոքր լավացավ և անդադար՝ տիվ ու գիշեր աղոթում էր, որտեղ բանտարկել էին նրան: Եվ ճաշակում էր մի քիչ զարու հացից և ջրից:

Այդ ժամանակներում ինչ-որ տեղից սարսափ էր վրա գալիս, և նրա որդիներին տանում էին Կուր գետից անցկացնելու՝ ինչ-որ բերդ տանելու համար և երեխաներից մեկը գահավիժում էր [գետի մեջ], մեծ սուգ էր տիրում Բդեջիւին և Երկրին: Եվ երանելի տիկինը գոհություն էր հայտնում Աստծուն ասելով.

— Թեպետ մարմնապես մեռավ, բայց և հոգեպես փրկվեց իր ուրացող հոր որոզայթից: Եվ Վրաց նախարարն ու մարպպանը գալիս էին Բդեջիւի մոտ՝ մխիթարելու նրան երեխայի համար և լուծելու սուգը: Նա լուր էր ուղարկում տիկնոջը, որ վեր կենա և վնդանից գնա եպիսկոպոսի ապարանքը, որ եկեղեցու մոտ էր, և մի սենյակում մնա պահապաններով, մինչև որ մարպպանն ու նախարարը յուրաքանչյուրը իրենց տեղը գնան: Նա ուրախությամբ կատարում էր հրամանը: Գնալով իր անձը վարդարում էր կրոնական պգեստով, ավելի ու ավելի հոժարությամբ էր առաքինանում պահքով, աղոթքներով և լուսավոր կարգերով, մինչև որ բոլորը վարմանում էին երանելի տիկնոջ նահատակության քաջության վրա: Որովհետև այնպես կայուն էր աստվածասիրությամբ, որ ոչինչ նրան չէր տկարացնում ճգնությունից, քանի որ երանելու անձը վարդարված էր բոլոր բարի գործերով՝ սուրբ էր, մաքուր, ճշմարիտ, ուղիղ, խոնարհ, ողորմած, աղքատասեր, աշխատասեր, գործասեր, արդյունաշատ, ընթերցասեր, լսող, անոխակալ, անընչասեր, անփառասեր, այլև աստվածասեր, հանձարեղ, իմաստուն, խորհող, արդարադատ, աստվածապաշտ, հեռու բոլոր չար բաներից, արժանի՝ յերկնային կոչման համաձայն խորհելու, և անարատ կենցաղով իր կյանքը վարելու էր արժանավորապես՝ Քրիստոսի Ավետարանի համաձայն: Եվ եղավ, երբ մեծամեծներից յուրաքանչյուրը վերադարձավ իր տեղը, Բդեջիւը երանելի տիկնոջ մոտ մարդ էր ուղարկում աղերսական խոսքերով, որպեսզի ետ կանգնի այդպիսի կամքից և համաձայնվի իր կամքին, և առաջվանից ավելի շատ պարզկներ, հարստություն և պատիվ էր խոստանում: Նա հանձն չէր առնում այլևս չքնակվել ուրացողի հետ: Եվ իր վարդերն ու պատվական հագուստները տվեց, որ տանեն Բդեջիւին, և պատասխանեց.

— Ի՞նչ ունի կիսելու հավատացյալը անհավատի հետ, և ինչ կապ ունի լույսը խա-

վարի հետ, ինչ միաբանություն կարող է լինել Աստծու տաճարի և սրկալի միջև: Ես, որ մաքրվեցի այն չարչարանքներով, որ բերեցիր ինձ վրա բարկությամբ և այդ միավորության պատճառով: Ես ինձ ընծայեցի Քրիստոսին. ոչ փառք, ոչ հարստություն, ոչ պատիվ, ոչ էլ մարդկանցից [տրվող] բաներ՝ փափկություն և հեշտություն: Ես չարչարանքներով կգնամ աշխարհից և կներձենամ մեծ Թագավորին, և այնտեղ կլցվեմ այն լույսով, որն այստեղ փոքր-ինչ ընդունում եմ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրությամբ: Այսպես կամ, պգուշավորապես կմնամ արդար խորհուրդի մեջ և չարագործի աթոռին չեմ նստի: Ինչ որ անելու ես, արա, ես պատրաստ եմ մեռնել, քան վանց առնեմ իմ հայրերի ավանդությունը:

Եվ կարասին ու վարդը տանելով նրան, պատմեցին, ինչ որ ասաց երանելին:

Եվ ամբարիշտը ավելի էր բարկանում և ըստառնում էր չարչարել Քրիստոսի երանելի աղախնուն. ցատմից չէր ներում, այլ վեր կենալով և իր ծառաներից շատերին իր հետ վերցնելով՝ ինքն էր գնում և նրան գտնում էր եկեղեցում ու չէր ներում, այլ մտնելով՝ սաստիկ հարվածում էր նրան գավապաններով, բռնում էր մազերից և քաշում եկեղեցուց դուրս: Եվ ոչ ոք չէր համարձակվում բռնել և գայլից պատել Քրիստոսի գառնուկին: Սակայն քահանաներից մեկն ասում էր. «Ինչն'ու ես այդպես անողորմ չարչարում»: Իսկ նա նրա վրա էր թափում բարկությունը և շատ սաստիկ հարվածում էր նրան: Ամբողջ ժողովուրդը, առհասարակ՝ տղամարդ և կին, ճիշդ բարձրացնելով լաց էին լինում, և նա բոլորին դիմում էր հարվածներով, ինչպես չար և վայրենի գազան: Եվ երանելուն քարջ էր տալիս գետնով, փչերի, սրածայր փայտերի ու քարերի մեջ և ապա հրամայում էր ապարանք տանել. նրա մարմինը պատառ պատառ էր լինում, որովհետև գետինը շատ կոշտ էր և արյուն էր հոսում նրանց և գետինը արյամբ ծածկված էր երևում նայողներին:

Եվ հասնելով ապարանք՝ նորից էր անցնում հարվածների՝ առավել քան առաջին անգամ, իսկ Քրիստոսի երանելի աղախինը ոչինչ չէր խոսում, այլ իրեն հանձնել էր Աստծուն և ժողովությանը ու մեծ ուժով կանգնում էր, և ոչինչ համարեց քարջ տալն ու բրածեծ անելը, որովհետև հագուստը, որ իր մարմնին և գլխի վրա ուներ, քարջ տալուց ընկնում էին վրայից և մերկ գլխով ու պատառոտուն պեղծավոր պատապարում էր իր անձը և գոհություն էր հայտնում Աստծուն իր գլխով անցածների համար: Եվ ամբարիշտը չէր ամաչում ու չէր գթում, այլ չարի աղոթե-

ցությամբ բարձրանալով ինչպես մի սաստիկ հեղեղատ՝ ուզում էր ողողել և ապականել երանելու սրբությունն ու լուսավոր վարքը և ասում էր.

— Թող օգնի քեզ Քրիստոս և քո հայրերի աղոթքը, որոնց վրա ես դրել քո հույսը: Եվ երանելու ոտքերն ու ձեռքերը կապել էր տալիս երկաթյա կապանքներով, հրամայում էր նետել բանտ, շղթա գցել վիպը, պատին երկաթե ցից խփել և շղթան դրան կապել: Կնքում էր կապանքներն ու շղթաները: Պահապաններ էր նշանակում մեծ ահով և ըզգուշությամբ պահելու նրան և ամենևին ոչ մեկին չթողնել, և կերակուր էր հրամայում, գարու հաց և ջուր: Եվ ասում էր.

— Այժմ ուրախացյ՛ր, քանի որ ստացար այս չարչարանքներն ու դառն կապանքները, որոնցով պիտի խոշտանգեմ քեզ մինչև մահ:

Պատասխանեց տիկինը և ասաց.

— Ուրախ եմ այդ չարչարանքների համար, որ պատճառեցիր ինձ, քանի որ կարծանանամ իմ հայրերի սուրբ ժառանգության, որ նախատում ես նրանց և Աստծուն, ով Աստծուց օտարացած և արդարության թշնամի, որովհետև ինչքան ավելացնում ես տանջանքներս, ավելացնում ես իմ ուրախությունը, որ չի անցնի, քանի որ այս ժամանակավոր նեղությունները ինձ համար մեծ փառք են նախապատրաստում, որ հավիտյանս չի սասանվի: Եվ դու Աստծու դատարանից վրեժ կստանաս նրա գալստյան ժամանակ:

Եվ ամբարիշտը ոչ մի պատասխան չէր տալիս, այլ վարմանում էր երանելի տիկնոջ ժողովության և համբերության վրա, կապանքների մեջ թողնելով՝ գնում էր աշխարհիկ գործերին: Եվ երեք օր հետո գալիս էր դռան քահանան, բաներ էր տալիս պահապաններին և մտնում էր երանելի տիկնոջ մոտ և տեսնում էր նրան կապանքների մեջ՝ ուրախությամբ և զվարթությամբ լեցուն և անդադար սաղմոսերգության մեջ, համբուրում էր երանելու կապանքները և երանի էր տալիս նրան, որ այսպիսի համբերություն ունեցավ Աստծու համար, և ասաց.

— Երանելի ես դու կանանց մեջ, իսկապես բարի արմատի բարի շառավիղ եղար. սրանից հետո հավատացյալները արդար խոսքերով երանի կտան քեզ, որովհետև Աստծու հույսով վանեցիր ամբարշտին և Սուրբ Հռիփսիմեի պես անուն և ոգի ժառանգեցիր, ինչպես նաև պսակներ՝ բոլորի Տիրոջից:

Երանելի տիկինն ասաց.

— Ես արժանի չեմ երանության, պսակների և սրբերի ուրախության, որոնք չմեր-

ձեցան ամբարիշտ մարդու: Իսկ ես ապրեցի ամբարիշտ ամուսնու հետ և որդիներ ծնա՝ ապականության և ամբարշտի ձեռքով կորցրտի համար: Ես արդարությամբ սնեցի և հույս ունեի խրատներով և տիրոջ իմաստությամբ նրանց Աստծու մերձավորներ դարձնել, բայց անպզամի սերմերը արժանի չեն բարի բույս լինելու: Բայց կա մի բան, որ ես չարչարանքներով և երկաթե կապանքներով սրբվեցի՝ ուրացողի մերձավորությունից և հայտնի դարձավ բոլորին, որ իմ ձեռքում էր վերծ մնալ տանջանքներից ու կապանքներից, որով խոջտանգում են ինձ: Եվ արդ ես անհույս չեմ նրանցից, ում վստահեցի, որով հետև թիկունքս հանձնեցի հարվածների և ծնոտս՝ ապտակների, երեսս ամոթից չըռեցի, և իմ տերը ինձ օգնական կլինի, և ես չեմ վախենա, թե ի՞նչ կանի ինձ մարդը: Արդ այսպես պիտի շարունակեմ՝ պոռոշության, կատարյալ կարգով ու կրոնով, ինչքան որ շունչ կա, իմ մարմնում, որպեսզի թերևս պատահեմ սրբերի դասին և մտնեմ յուսավոր հարկ:

Եվ բախանան շատ ուրախացած սուրբ տիկնոջ համբերությամբ վերադառնում էր իր վանքը, և ամեն օր գաղտնորեն հետևում էր կապանքներին: Եվ Բդեշխը հեռանում է ձուրա պահակի կողմերը: Բդեշխի եղբայրը այդ սահմաններում չէր, երբ երկրորդ անգամ չարչարանք ու դժնյա կապանքները բաժին էին ընկնում սրբին, լսելով շատ էր տխրում, և գնալով աղաչում էր արձակել կապանքները: Շատ օրեր էին անցնում, և հապիվ էր համաձայնեցնում շղթաները արձակել միայն պարանոցից: Իսկ ոտքերի համար երդվել էր չարձակել մինչև նրա մահվան օրը: Եվ այսպես կապանքներով ու տառապանքներով, սովով, ծարավով ու նեղությամբ անցկացնում էր բանտի վեց տարիները: Եվ վեց տարում չէր դադարում կրոնի ամրությունից, որով առաքինանում և ճգնում էր պատվ ու աղոթքով, տքնությամբ և արցունքներով, այդ ու ցերեկ անդադար սաղմոսերգությամբ, ծեծված մարմնով և դառն կապանքներով, բավարարվելով գարու հացով և ջրով: Եվ Սուրբ Զատիկի պահքին շաբաթներով ոչինչ չճաշակեց, բայց միայն շաբաթ և կիրակի օրերին ճաշակում էր կենարարի մարմնից և արյունից: Եվ մի քիչ բանջար էր ճաշակում: Եվ նրա առաքինության համբավից շատերը՝ տղամարդիկ, կանայք և աշխարհական ուխտավորներ գալիս էին տեսնելու, նրանից լսելու պարկեշտ և արդար վարքի մասին: Եվ շատերին հորդորում էր թողնել աշխարհը և ինչ որ կա աշխարհում և գնալ անանցանելի կյանքի ետևից: Եվ աստված նրա աղոթքներով այցելում էր շատ տարակուսյալներին՝

անորդիներին՝ որդիներ, դիվահարներին՝ բժշկություն, ախտավորներին՝ առողջություն, և բոլոր վշտացածներին՝ մխիթարություն, և յուրաքանչյուրին ըստ իր անձի: Աստուծո խնամակալությունից պարզվեցին էր շնորհում իր սուրբ աղոթքներով: Եվ ամեն մարդ, որ գալիս էր նրա մոտ, լիացած և ուրախությամբ էր վերադառնում, և որտեղ լավում էր սրբի համբավը, նրա միջոցով փառավորվում էր Տիրոջ անունը: Այդ պատճառով էլ, անվանի մոգերից մի պարսիկ կին, որ բորոտ էր և ոչ մի բուժում չէր գտել բժիշկներից, սրբի համբավից գալիս և ընկնում էր սուրբ տիկնոջ առաջ և բուժում էր հայցում: Եվ երանելին ասում էր.

— Եթե հալատաս ճշմարիտ Աստծուն և թողնես պարսից կրոնը, աղոթքներով կխնդրեմ Տիրոջից և կբուժվես և կճանաչես իմ Աստծու մեծ պորությունը:

Պարսիկ կինն ասաց.

— Հավատում եմ քրիստոնյաների Աստծուն:

Հրամայեց մկրտել նրան, և անմիջապես մաքրվեց բորոտությունը, փառք էր տալիս Աստծուն, օրհնում էր Աստծուն, խոստովանում էր ամենասուրբ Երրորդությունը, հեռանում էր պարսկական կրոնից և ընտելանում էր Աստծուն, որով բժշկություն գտավ, որ և ինքն էլ պատմում էր մոգերին և մոգայետներին:

Եվ Բդեշխը լսելով այս բոլորը՝ վայրանում էր: Եվ չորս տարի հետո վերադառնում էր հեռավոր ճանապարհից և գալիս էր, ուր տիկինն էր, և անմիջապես ծանր հարվածներով և տանջանքներով նեղում էր սրբին, բարկանում էր և պահապաններին ասում.

— Չպատվիրեցի՝ ձեզ պոռոշ լինել և ոչ մեկին չթողնել նրա մոտ: Նրան գանահարում էր մահու չափ և հրամայում էր երանելուն առավել ևս նեղել բանտի կապանքներում: Եվ այս բոլորից հետո ամբարիշտը չկարողացավ հասնել իր նպատակին, որ ըսպատում էր: Խարդավանքի էր դիմում, գրտնում էր մի կախարդ կին և ջանում էր նրա միջոցով հեռացնել գեղեցիկ կրոնից: Եվ կինը հանձն էր առնում: Բդեշխը մի տարի դիվական ցնորքներով մարտնչեց նրա դեմ և չկարողացավ ոչինչ անել, այլ ավելի էր ականատես լինում Աստծու կամքի արտահայտությանը: Եվ դրանում ևս ամոթով մնալով՝ ետ չէր կանգնում իր նանիր մտածումներից, թեև ետ էր մղվում առաքինուց, ինչպես մեքենան ամուր պարսպից: Նաև իր որդիներին էր ուրացնում և շնորհում պարսից թագավորին, որպեսզի առավել պատիվ ստանա արքայից: Տեղեկացնում էր նաև տիկնոջ մասին, թե «Վարդանի դուստրն է, որ ընդ-

դիմացավ պարսից արքային և այդ պատճառով կտտում եմ նրան և տանջում մինչև մահ, որովհետև չհամաձայնվեց պաշտել արքայի աստվածներին ինչպես իր աշխարհավետ հայրը:

Բայց էլ ինչ պետք է պատմել նրա չարաբորությունները, որ ամեն ինչում մեղք գործեց, քանի որ, թեև վեց տարի ջատ ջանաց, ոչնչով չկարողացավ հաղթել՝ Քրիստոսի հույսի պատճառով: Մարմնի վրա [կրած] հագուստը քորձ էր, վրայից անտիոքյան պարեգոտ, սնարին մաշկյա մի փոքրիկ բարձիկ, մի փոքրիկ աղոթատեղի: Նա բոկոտն էր: Կերակուրը գարու հաց էր և ըմպելիքը՝ ջուր, մանավանդ ջատ անգամ առանց կերակուրի էր մնում և ամեն ինչով մնում էր իր սուրբ հայրերի ավանդի մեջ, որպես կատարյալ՝ կատարյալների հետ, արհամարհում էր բոլոր վտանգները, որոնք մարտնչում էին նրա դեմ: Եվ ջատ անգամ հաղորդակցում էր վերին տեսիլքների, որոնք քաջակերում էին նրան Կորանալ այդ մարտում: Եվ բոլոր բարի կարգերում առաջադեմ էր:

Եվ, երբ մտան հարվածների, կապանքների և բանտի յոթերորդ տարին, երանելին հիվանդացավ անհնարին տանջանքներով՝ սաստիկ ճգնության պատճառով, որ կրեց անօրենից: Եվ Բղեջիկ եղբայրը՝ Ջոջիկը, գալիս-երկրպագում էր սուրբ խաչին, որ տիկնոջ առաջն էր: Եվ իր կնոջ հետ ծոնկի էր գալիս Քրիստոսի սուրբ աղախնու առաջ, որպեսզի օրհնություն ստանա նրանից: Բազում ողբով և արտասուքներով խոստովանում էր մեղքերը և թողություն էր խնդրում նրանից: Եվ նա սովորեցնում էր սիրել արդարությունը և ատել անիրավությունը, «Եվ կանես ամեն բարի գործ, որ մեղքերի դեմ է, որ ընդունելի է Աստծու կողմից, որ արդարության պտուղ է: Եվ օրհնություն կստանաս Աստծուց և եկեղեցու առաջնորդներից: Եվ բարեգործությունից հետո այլևս մեղք չգործես, որպեսզի ևս մի չար բան չպատահի քեզ»: Եվ այլ բազում հորդորական խոսքերով խրատում էր նրան և օրհնում: Եվ նրան ուղարկում էր նրա տեղը:

Գալիս էր նաև եպիսկոպոսների գլուխ Սամվելը, նաև Հովհան Եպիսկոպոսը քահանաներով և սարկավագներով, որոնք երանելու քաջակերողներն էին և նեղության մասնակից, որպեսզի նրան ուղարկեն մեծ տառապանքից դեպի նավահանգիստ՝ Քրիստոս, նույնպես և Վրաց աշխարհի նախարարներ, ապատներ, տիկիներ և այլ սեպուհներ, որպեսզի մասնակցեն երանելու ուղարկմանը և հաղորդվեն երանելի Շուշանիկի օրհնությանը: Եվ բոլորը խնդրում էին երկաթե

կապանքները՝ իբրև սրբի հիշատակի նըշխար: Իսկ նա ասաց.

— Ես դրան արժանի չեմ, բայց թող Աստուծո կամքը լինի, արեք, ինչպես ուզում եք,— և օրհնեց բոլորին և ասաց. «Ամենալի Քրիստոս թող ձեզ լցնի հոգևոր օրհնությամբ և վայելչությամբ»:

Եվ տան համար գոհություն էր հայտնում եպիսկոպոսին, ինչպես դայակին կամ հորը: Եվ այսպես հրաժեշտ առնելով բոլորից և բոլորին օրհնելով Քրիստոսով, աղաչում էր գնալ այնտեղ, որտեղ առաջին անգամ քարշ տվեցին նրան. «Եթե արժանի լինեմ այդ անել», ասում է:

Եվ այսպես բաժանվելով բոլորից և բոլորին օրհնելով Քրիստոսով, բոլոր հավաքվածների հետ ամենասուրբ Երրորդության հաղթանակի գոհաբանությունն էր վեր առաքում, որպեսզի չարչարանքով բաժանվի երկրից և հասնի երկնավորին, որին ձգտում էր երանելին:

Եվ աղոթելով Սուրբ Աստծուն և տարածելով իր ձեռքերը ասաց. «Տեր Աստված, գոհ եմ քեզանից, որ ինձ՝ անարժանիս, արժանի դարձրիր չարչարանքով ավարտել իմ ընթացքը: Արդ, դո՛ւ, որ հոգիների ընդունող ես, բոլոր արարածների արարիչ և փրկիչ և կեցողիչ, ընդունիր իմ հոգին, արժանի դարձրու ինձ քո սիրելիների հետ հանգստի հասնել քո հավիտենական խորանին, որ պատրաստել ես քո սիրելիների համար, որտեղից մերժված են ցավը, տխրությունը, հեծեծանքն ու այն ամենը, ինչ աշխարհի արդյունք է, և փոքր նեղությունը, կապանքներն ու բանտը քո անվան համար ընդունեցի ի հաճույս քեզ, ինձ էլ ընդունիր, արժանի դարձրու սրբերի հատուցման, իմ հայրերի՝ քո սիրելիների, որոնք յուրաքանչյուրը ըստ իրենց կարգի պաշտեցին քեզ, ո՛վ ճշմարիտ Աստված: Եվ մեռնում եմ քո փառավոր և սուրբ անվան համար: Եվ արդ, ի՞նչ եմ թվարկում իմ նեղությունները, քո՝ մարդասերիդ շնորհի վրա դնելով հույսս՝ հոգիս անվանում եմ քո ձեռքը»: Եվ այս ասելով հոգին ավանդեց ամենակալ Աստծու ձեռքը: Բոլորը արտասվելով լաց էին լինում և մեծ երկյուղածությամբ օրհնություն էին տալիս մեր Տեր Աստծուն:


Եվ եպիսկոպոսն ու բոլոր հավաքվածները ամփոփելով մարմինը՝ լվացին պարկեշտ կանանց ձեռքով և անուշահոտ յուղով ու խոնկով անհրաժեշտը կատարելով և պատելով մաքուր կտավով՝ սաղմոսներով, օրհնությամբ, հոգևոր երգերով, շնորհներով և վառվող մոմերով դրեցին պատրաստված տեղը, ինչպես Քրիստոսի սուրբ աղախինը պատ-

վիրեց նրանց: Եվ ամբողջ գիշերը օրհնում և փառաբանում էին Տեր Աստծուն մինչև ճաշու ժամ:

Եվ հետո, քաղոց (մայիս) ամսի տասնյոթին՝ Սուրբ Հուշանիկի մահվան օրը, պատարագ էին մատուցում և մեծ տոն կատարում: Եվ կարգ հաստատեցին ամեն տարի բազմամբոխ ժողովրդով սրբի հիշատակը կատարել ամենասուրբ Երրորդության փառքի և փառաբանության համար: Եվ Տերը ոչ քիչ բծշկություն էր կատարում սուրբ տիկնոջ բարեխոսությամբ:

Սա է Սուրբ Հուշանիկի նահատակության նկարագրությունը, որ այսպես ընծայվեց Հոր, Որդուն և Սուրբ Հոգուն, այսպես մերձեցավ Քրիստոսին և այսպես դարձավ Սուրբ Հոգու օթևան և բնակարան, վախճանվեց ամենասուրբ Երրորդության փառքի համար և բոլոր սրբերի հետ անթառամ փառքի պսակով պսակվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսով, որին վայել է փառք, իշխանություն և պատիվ Հոր և ամենասուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:





ԵՐԲ ՍՈՒՐԲ Է ԱՐՄԱՏԸ

«Եթե սկիպըն սուրբ է, և զանգուման. և եթե արմատն՝ ապա և ոստըն» (Հռոմ. ԺԱ 16):

«Եթե սկիպըն սուրբ է, սուրբ է և զանգվածը. և եթե արմատը սուրբ է, ապա և՛ ճյուղերը»:

Ի լրումն ժամանակաց աշխարհ եկավ դարերով ակնկալված Մեսիան, Աստվածորդին Քրիստոս, որ պիտի փրկեր ամբողջ մարդկությունը՝ իր կենարար լույսը սփռելով աշխարհի և մարդկանց սրտերի մեջ: Քրիստոսի աստվածային հայտնությամբ նոր դարագլուխ բացվեց ամբողջ մարդկության համար: Բայց, դժբախտաբար, հրեաների մեծ մասը չընդունեց Նրան: Հրեաների ակնկալած մեսիան քաղաքական բնույթ ուներ: Այդպես են մտածում հրեաները մինչև այսօր:

Այդ հանգամանքը ցավով է նկատում նաև Պողոս առաքյալը իր «Առ Հռոմեացիս» թղթում: Նա քրիստոնեությունը չընդունած հրեաներին համարում է ծառի արմատից կտրված ճյուղեր, որոնք պիտի չորանան և ոչնչանան: «Բայց դու, որ վայրի ձիթենի էիր, — դիմում է առաքյալը նորադարձ հեթանոսներին, — պատվաստվեցիր նրանց վրա և մասնակից եղար արմատին» (Հռոմ. ԺԱ 17):

Հրեաները հեռացան արմատից, հեռացան իրենց իսկ մարգարեներից, հեռացան Աստուծուց: Եվ նրանց տեղը բռնեցին հեթանոսները, որոնք պատվաստվեցին սուրբ արմատի վրա: «Եվ եթե արմատը սուրբ է, ապա և՛ ճյուղերը»: Պողոս առաքյալը փոխաբերական իմաստով ասում է, որ վայրի ձիթենին պատվաստվեց սուրբ արմատի վրա և առաջացավ պարարտ ու ակնիվ ձիթենի: Եվ պատահական չէ, որ անմիջապես առաքյալը

ավելացնում է. «Մի՛ պարծեցիր ճյուղերով. իսկ եթե պարծենաս, իմացի՛ր, որ ոչ թե դու ես արմատը վեր բռնում, այլ արմատը՝ քեզ» (Հռոմ. ԺԱ 18):

Ամեն ինչի հիմքը և արմատն է կարևոր: Հեթանոսները վայրի ձիթենի էին, անընդունելի, բայց երբ պատվաստվեցին սուրբ և ակնիվ արմատի վրա, ապնվացան, դարձի եկան, պարզարվեցին պարարտ ու փարթամ ճյուղերով: Իսկ այն ճյուղերը, որոնք կտրվեցին մայր արմատից, այդպես էլ չորացան և ոչնչացան:

Քրիստոնեությունը իր վեհ ու ակնիվ գաղափարներով իսկապես դարձել է մի սուրբ արմատ նաև մեր ժողովրդի համար:

Քրիստոնեությունը Հայաստանում սկսվեավորվել է դեռևս Ա դարում, Ս. Թողդեսու և Ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությամբ, սրբագործվել աշխարհում առաջին մարտիրոսուհու՝ Ս. Սանդուխտ կույսի և այլ նահատակների հեղված արյամբ, վերստին հաստատվել Հայոց Հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչի ջնորհիվ: Եվ ահա այդ հիմքի, այդ ամուր ու ակնիվ արմատի վրա է, որ ընձյուղվել են մեր ամբողջ պատմությունը, մշակույթն ու գրականությունը: Այդ սուրբ արմատն էր, որ տվեց մեզ գիր և գրականություն՝ ձեռամբ մեր ժողովրդի մեծագույն ռաիփրաներ հանդիսացող Ս. Մեսրոպի և Ս. Սահակի, և այդպես փարթամորեն աճեց մեր գրի ու գրականության, արվեստի ու մշակույթի պտղաբեր ճյուղը, տվեց հայերեն Աստվածաշնչի «Թագուհի թարգմանություն»-ը, տվեց խորենացու և այլոց Ողբով ողորդված, բայց հերոսապատում մատյանները, Եսնիկ Կողբացու և Դավիթ Անհաղթի

կուտ տրամաբանությունն ու աստվածախոս Սուրբ Նարեկացու սրտահույզ աղերսը:

Մի՞թե այդ սուրբ արմատի վրա չհիմնվեց նաև հայ ազատագրական շարժման ըմբոստ ու սլացիկ ճյուղը, սկսած Ե դարից՝ Վարդան-Վահանյան պատերազմներից, երբ մեր ժողովուրդը մեկ հոգի, մեկ միտք դարձած, պինվորի սրին միացրած քահանայի խաչը՝ ելավ պայքարելու բռնակալի դեմ «Վասն Յիսուսի, Վասն Հայրենեաց» (Եղիշեն), վասն լույսի, վասն հավատի ու արդարության, մինչև Սարգարապատի հերոսամարտը, երբ մեր դարահալած ժողովուրդը, դավաճանված բոլոր մեծ պետությունների կողմից, լքված ու արհամարհված, տակավին երեք տարի առաջ, 1915 թվականի Ապրիլյան եղեռնին, կես մարմին դարձած, Վարդանանց ոգով ելավ ընդդեմ թշնամու և հաստատեց, որ դեռևս պետք է ապրի, պետք է կռվի ու ստեղծագործի, որ պետք է իր նոր խոսքն ասի աշխարհին:

Քրիստոնեության հաստատումով է, որ աճեցին մեր ժողովրդի ինքնությունը հաստատող ամուր ուստերը, որոնք խորհրդանշում են մեր, ժողովրդի պատմությունը, մշակույթը, գիրն ու գրականությունը: Եվ այդ ամուր ուստերն են, որոնք սնունդ ստանալով սուրբ արմատներից, դարձել են հենարանը մեր ժողովրդի ինքնության ու արժանապատվության: Եվ այսօր այն հայ մարդը, որ հեռու է կանգնած մեր ժողովրդի պատմությունից և նրա մշակույթից, ում հոգին չեն բորբոքում Վարդանանց մարտիկների հերոսությունն ու Տեր-Ջորի անսպասելի վայրագ գազանի ճիրաններում հոշոտվող հայ մանկիկների մահվան հառաչանքը, նա ճշմարիտ հայ չէ՝, երբեք, այլ ստրկացած է հոգով: Այդպիսիները այն ճյուղերն են, որոնք կտրվել են մայր ծառից, չորացել, ոչնչացել:

Հայ ժողովուրդը դարերի խորքից եկած ամուր ու փաթթած մի ծառ է, հաստատուն արմատներով: Շատ քամիներ են եկել ու անցել, փոթորիկներ ոռնացել գազանի նման,

սարսափալու ջանքն է շարունակ շողացել նրա գլխավերևում, բայց այդ ծառը միշտ մնացել է հաստատուն, կտրվել են ճյուղերը, թափվել տերևները, բայց միշտ կանգուն են մնացել ծառի արմատներն ու բունը:


Եվ այսօր մեզանից յուրաքանչյուր ոք պետք է ամուր մնա այդ ծառի վրա, չկտրվի նրանից, եթե ոչ՝ կօտարանա, կալասերվի հոգով, կչորանա ու կոչնչանա: Պետք է մեզանից յուրաքանչյուր ոք հավատարիմ մնա հայրենի սրբազնասուրբ ավանդություններին, որոնք կերտվել են մեր ժողովրդի արյան գնով, միշտ հավատարիմ մնա հայ մշակույթին, մեր պատմությանը: Միայն այդ դեպքում կծաղկի ու կբողբոջի մեր ժողովրդի հոգևոր ինքնության խորհրդանիշ հանդիսացող ծառը: Դրա համար պետք է նախ և առաջ հավատարիմ մնալ հայրենի հողին:

Այսօր դեռևս մեր ժողովրդի մի մասը դժբախտ ճակատագրի բերմամբ կտրված է Մայր Հողից: Մայր հայրենիքն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ամեն ջանք ու եռանդ թափում են, որպեսզի չչորանան մեր ժողովրդի մաս կազմող, բայց օտար ավեր ընկած աշդ ճյուղերը և ի վերջո պատվաստվեն մայր հողին: Չէ՞ որ այս մի բուռ հողը, մեր այս փոքրիկ, բայց լուսավոր հայրենիքը ձեռք է բերվել իրենց պապերի արյամբ ու քրտինքով, հայրենիք, որը, անցնելով մահվան ճիրաններից, այսօր վերածնվել է, հարություն առել, բուծել իր անցյալի ահավոր վերքերը, հայրենիք, որ դարերի ընթացքին հոշոտված ու բզկտված, այսօր վեր է բարձրացել հայ շինարարի ստեղծագործ աշխատանքով:

Հայ ժողովուրդը պետք է միշտ հավատարիմ մնա իր հայրենիքին, որպեսզի աճի ու բարգավաճի, ծաղկի ու պտղաբերի, որպեսզի միշտ կանգուն մնա, ամուր ու հաստատուն՝ մեր հավերժության ծառը:

ՎԱՐԴԱՆ ՍՐԿ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
(Հոգևոր ձեմարանի Գ լսարանի ուսանող)





ՏԻՐՈՋ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԽՈՍՔԸ

«Քանզի ամենայն մարմին իբրև վստո է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. խոտն ցամաքեցաւ եւ ծաղիկն թոթափեցաւ. Եւ բան Տեառն մնայ յաշիտեան» (Ա Պետրոս Ա 24) :

Քրիստոսի հրաշափառ հարությամբ մի շարք թերահավատություններ, որ կային նրա աստվածության նկատմամբ, փարատվեցին:

Փրկչի հարությունը եղավ հաստատումը աստվածային այն պատգամների, որոնք ավետիքն էին մարգարեների կողմից Փրկչից առաջ, ինչպես նաև Փրկչից հետո՝ առաքյալների կողմից:

Քրիստոսի համբարձումից հետո նրա աշակերտները, ապրելով Հոգեգալստյան խրախուսիչ պահը, լցված Սուրբ Հոգու շնորհներով, ձեռնարկեցին իրենց առաքելությանը: Նման առաքելություն սկսեց նաև Պետրոս առաքյալը, որի քարոզչական աշխատանքների մասին տեղեկություններ կան «Գործք Առաքելոց»-ում:

Նոր Կտակարանի կանոնի մաս են կապում նրա երկու ընդհանրական թղթերը:

Իր հանձնարարություններով ու հորդորներով, սրբությամբ ապրելու կոչերով ու փրկության հույսի հավատով Պետրոս առաքյալը քաջալերում էր ամենուր առաջ եկած բրիստոնյաներին՝ ոգեկոչելով Եսայի մարգարեի խոսքերը... «Ամեն մարմին նման է խոտի, և մարդու ամբողջ փառքը նման է խոտի ծաղիկի. խոտը չորանում է, ծաղիկն էլ թափվում, բայց Տիրոջ խոսքը մնում է հավիտյան»: Ոգեկոչեց և տվեց մեկնությունը այս խոսքերի, որ մարգարեությունը ոչ թե ըստ մարդկանց կամքի տրվեց երբևէ, այլ Սուրբ Հոգուց է, որ խոսեցին մարդիկ Աստծուց: Դիշտ բացատրություն, որովհետև


այն ժամանակ Տերն ասում էր մարգարեին, որպես Ավետարանչի՝ «Աւետարանիչդ Սիոնի. բարձրացո Վորտեամբ քաղաքառ քո. ահաասիկ Աստուած ձեր, ահաասիկ Տեր, Տեր գայ Վորտեամբ եւ բազուկն տէրութեամբ իւրով. ահաասիկ վարձք իւր ընդ իւր, եւ գործք առաջի նորա» (Խ 9—11): Այն, ինչ ասել էր Տերը մարգարեի բերանով, նույնը քարոզում էր առաքյալը՝ լցված Սուրբ Հոգու շնորհներով:

Պետրոս առաքյալը իր քարոզչության ընթացքում առաջնորդվում էր այն խոսքերով, որ դարեր առաջ արտաբերել էր մարգարեն: Այսինքն երկու դեպքում էլ Տերն ինքն էր խոսում:

Ամեն մարմին նման է խոտի:

Մարմինը անցողիկ է, հոգին՝ հավերժական, սակայն երկրային կյանքում իրար միացած, առաջ եկած ներդաշնակ այդ գեղեցկության երկու մասերը հավերժական հակասության մեջ են: Մարմինը վարդաբլուզված զգացմունքներով ու կրքերով անհունորեն ձգտում է դեպի հեշտասիրությունն ու անցողիկ վայելքներ: Մարմինը, անշուշտ, իր կենարար հյութը ստանում է հոգուց, իր կենսատու լույսը՝ Աստծուց, սակայն միշտ նա հակառակվում է ու հակառակվում: Որքանով որ նա չի ապստամբում, խաղաղ են նրա կրքերը. նա հոգու հետ կապվում է մի անբողջություն, մի ներդաշնակություն. բնության մեջ եղած բոլոր գեղեցկություններից ամենից հրաշալին: Սակայն երբ խախտվում է այդ ներդաշնակությունը, կրքերը օձակերայ գլուխ են բարձրացնում, հոգին ենթարկվում է, և անձը գործում է իր հերթական մեղքը:

Մարմնի անցողիկությունը հետապնդում է անփառունակ վախճան: Այդ է պատճառը, որ առաքյալը այն համեմատում է խոտի հետ:



ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ — ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ

Միացյալ Նահանգների հայոց արևմտյան թեմի առաջնորդի օգնական Տ. Միփան վրդ. Մխայրիսի խմբագրություն ուղարկած հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ Հայաստանյայց Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի ազգային-եկեղեցական և հոգևոր-մշակութային կյանքը գտնվում է գնահատելի ընթացքի մեջ՝ տևապես նորանոր հաջողություններ արձանագրելով:

Թեմական խորհուրդը, ծխական խորհուրդները, Տիկնանց միությունը, դպրաց դասերն ու այլ կապակերպություններ թեմակալ առաջնորդ Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանի նշած թելադրություններով և հայրական խորհուրդներով ավելի ևս կապակերպված՝ մեծապես իրենց օգտակար մասնակցությունն են բերում թեմի և իրենց ծուխների ընդհանուր կյանքին:

Այս տարի ևս, մայիս ամսին, Տիկնանց միությունը ունեցավ տարեկան եռօրյա իր Առանձնացման հավաքույթը, որին, առաջնորդ սրբապան հոր գլխավորությամբ, մասնակցեցին 65 տիկիներ և 7 հոգևորականներ: Հավաքույթի հիմնական նյութն էր «Սեր»-ը:

Առաջնորդ սրբապան հոր ողջունի և քաջալերական խոսքից հետո սկսվում է ծրագրի գործադրությունը, որի ընթացքում կարդացվում են մի շարք դասախոսություններ, այդ թվում՝ «Միտո կանապան տեսակները» (Տ. Արշակ ծ. վրդ. Խաչատուրյան), «Սորվելու և վարժացման սեր» (Տ. Գեորգ քին. Առաքելյան), «Սեր ընտանիքի մեջ» (Տ. Վար-

դան քին. Գասպարյան), «Խառն ամուսնություններ» (Տ. Լևոն վրդ. Աբելյան), «Ինքնության ճանաչում» (տիկին Արաքսի Մենեստյան), «Մայր Եկեղեցվո և Ազգի սեր» (Երեցկին Արաքսի Թաթույան), «Ազգային հիմք և արմատներ» (օրիորդ Մերի Լ. Մենեստյան), «Հայ կնոջ դերը» (Էլիզաբեթ ձաֆարյան) և «Աստվածային և աշխարհային սեր» (Հովսեփ սրկ. Մովսեսյան) թեմաներով:

Հավաքույթի բոլոր մասնակիցները հոգևոր, ազգային և հայրենասիրական ոգով ավելի պորացած վերադարձան իրենց ծուխերը՝ հաստատակամությամբ շարունակելու իրենց ծառայությունը:

Նույն ամսին առաջնորդ Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանի նախագահությամբ տեղի է ունենում նաև հոգևորականների և աշխարհական ղեկավարների եռօրյա Առանձնացման հավաքույթը, որի նպատակն էր՝ որոնել ճանապարհներ առավել ևս պորացնելու Հայաստանյայց Եկեղեցու արդյունավետ գործունեությունը:

Հավաքույթի ընթացքում կարդացվում են մի շարք բանախոսություններ: «Ս. Գրքի ուսումնասիրությունը որպես աղբյուր ներշնչման» թեմայի շուրջ դասախոսություն է կարդում առաջնորդ Տ. Վաչե արքեպիսկոպոսը: Տ. Արշակ ծ. վրդ. Խաչատուրյանը ներկայացնում է «Ս. Ներսես Շնորհալի Հայրապետի կյանքն ու գործը» թեման, Տ. Շահե ավագ քին. Աթուրյանը՝ «Հոգևոր ներհայե-

գողություն կարելի՝ է իրագործել վանքեն դուրս» թեման, տիարք Օշին Քեշիշյանը և փաստաբան Փոլ Կիրակոսը խոսում են աշխարհը հուլող մի շարք հարցերի շուրջ՝ շեշտելով խաղաղ համակեցության և բարվոք հարաբերության գաղափարը:

Տ. Վարդան քին. Գասպարյանը և տիար Ռիչըրտ Տեմիրճյանը խոսում են թեմի երիտասարդաց կազմակերպության մարզական կյանքի մասին:

Եռօրյա Առանձնացման ընթացքում ցուցադրվում են Հայաստանյայց Եկեղեցու ս. պատարագի արարողության վանական մասերը բացատրող երկու կինոժապավեններ:

Արևմտյան թեմի օրենսդիր բարձրագույն մարմինը՝ թեմական-պատգամավորական ժողովը, գումարվում է Սան Տիեկոյի նորած Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում՝ նախագահությամբ առաջնորդ Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանի, ատենապետությամբ հարգարժան Վարդըմ Փոյի, ատենադպրությամբ Տ. Սիփան վրդ. Մխայանի և Տ. Վարդան քին. Գասպարյանի: Տասնյոթ ծովերի պատգամավորներ հրավիրված էին իրենց գործոն մասնակցությունը բերելու համագումարի հաջողությանը:

Առաջնորդ սրբազան հոր ոգևորիչ պատգամն ու թեմական խորհրդի կողմից ներկայացված տնտեսական և վարչական բոլոր տեղեկությունները ընդունվում են ջերմ գնահատությամբ: Արևմտյան թեմի նախաձեռնությամբ վերջերս արևելյան թեմի հետ տեղի են ունենում երկկողմանի խոսակցություն-

ներ, ավելի սերտ գործակցության ոգով, և պաշտոնապես ճշտվում երկու թեմերի աշխարհագրական սահմանները:

Երկրորդ նիստում Տ. Վարդան քին. Թադեոսյանը իր ելույթում շեշտում է Հայաստանյայց Եկեղեցու և հայ մշակույթի կարևորությունը՝ կոչ ուղղելով պատգամավորներին իրենց աշխատանքով և ծառայությամբ պահպանելու հայ ժողովրդի հոգևոր և մշակութային գանձերը:

Թեմական կանոնադրության մեջ մի շարք հոդվածների բարեփոխում կատարելուց հետո, պատգամավորները գաղտնի քվեարկությամբ կատարեցին ընտրություն հետևյալ կազմով.

Սթիվ Գամպուրյան (Ատենապետ Պատգամավորական ժողովի)

Հերի Գալուստյան (Փոխատենապետ)

Տ. Սիփան վրդ. Մխայան (Հայերենի ատենադպիր)

Տ. Վարդան քին. Գասպարյան (Անգլերենի ատենադպիր)

Թեմական խորհրդի անդամ են ընտրվում.

Տ. Մուշեղ վրդ. Թաշճյան

Տ. Տաթև քին. Թաթույան

Վարդգես Պարսամ

Վահագն Հարթ

Դոկտ. Կերի Լյուեճյան

Առաջնորդ սրբազան հոր ջերմ պատգամով և օրհնությամբ ավարտվում է արևմտյան թեմի 55-րդ թեմական-պատգամավորական ժողովը:





ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ — ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 30-ին, ուրբաթ օրը, երեկոյան, Բուենոս Այրեսի Մայր եկեղեցու սրահում արգենտինահայությունը մեծ խանդավառությամբ նշում է համայնքի երկարամյա հոգևոր մշակ Ս. Հարություն ծ. վրդ. Մուշեղյանի քահանայական ձեռնադրության, ինչպես նաև կրթական, գրական ու հանրա-նրվեր գործունեության 40-րդ և արգենտինա-հայ գաղութում ծառայության 30-րդ տարե-դարձները:

Հանդիսությանը մասնակցում էին Բուենոս Այրեսի և Հարավային Ամերիկայի հայաշատ մյուս գաղութները՝ իրենց ներկայացուցիչներով ու շնորհավորանքի լիակամությամբ հեռագրերով և նամակներով:

Երեկոյթի մասնակիցները մեծ ոգևորությամբ ունկնդրում են Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Ս. Ս. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի սրբատառ 13 հունվար 1982 հմր. 1107 կոնդակը՝ ուղղված Ս. Հարություն ծ. վրդ. Մուշեղյանին՝ նրա քահանայական ձեռնադրության 40-ամյա հոբելանի ուրախ առիթով:

Հանդիսության ժամանակ ընթերցվում են նաև Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Ս. Եղիշե արքեպ. Տերտերյանի շնորհավորանքի ու օրհնության խոսքը և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի շնորհավորականն ու պատվոգիրը:

Հոբելյար հայր սուրբի կյանքի, եկեղեցական, կրթական ու գրական գործունեության մասին բանախոսությամբ հանդես են գալիս տիար Գեորգ Սարաֆյանը և Վարդգես ավագ սրկ. Կեռոյանը:



Մի պահ հանդիսությունից

Այնուհետև սրտի իր անկեղծ խոսքն է աւտում նաև Մայր Աթոռի միաբան Ս. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:

Հանդիսության ընթացքում Ս. Հարություն ծ. վրդ. Մուշեղյանին, իր հոբելանների առի-


թով, շնորհավորում և հուշանվերներ են հանձնում ազգային, եկեղեցական, հայրենակցական ու մշակութային մի շարք կապմակերպությունների ղեկավարներ ու անդամներ:


Հանդիսության գեղարվեստական բաժնում ելույթ են ունենում «Կոմիտաս» երգչախումբը, «Գայանե» պարի խումբը, «Թաթուլ Ալթունյան» նվագախումբը, ինչպես նաև ծանոթ և սիրված արվեստագետներ դաշնակահարուհի Պերճուհի Թոքաթյանը, ջութակահար Հեկտոր Դարբինյանը և երգիչ Գրիգոր Մուշանը:

Հորեյար հայր սուրբի բանաստեղծական գործերի ասմունքով մեջ ընդ մեջ հանդես են գալիս Մարի Մումճյանը և Նուբար Լույսմճյանը:

Երեկոյի վերջում շնորհակալության և երախտագիտության իր խոսքն է ասում հորեյար Տ. Հարություն վրդ. Մուշանը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը նույնպես շնորհավորում է Տ. Հարություն ծ. վրդ. Մուշանին՝ ազգային-եկեղեցական գործում իր ամբասիր ծառայության համար, և բարեմաղթում արևոտ երկար տարիներ:





Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՓՈՐՁ ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ

Սույն աշխատությունը հայ միջնադարյան թարգմանական գրականության պարբերացման առաջին փորձն է¹, որի նպատակն է ընդհանուր գծերով վեր հանել այդ գրականության վարձագման ընթացքը և բնութագրել նրա ծաղկման շրջանները:

Իր ողջ գոյության ընթացքում հայ ազգային մատենագրությունն ուղեկցվել է տարբեր լեզուներից՝ հունարենից, ասորերենից, լատիներենից, վրացերենից, հին ֆրանսերենից, արաբերենից կատարվող թարգմանություններով, որոնք հանդիսացել են նրա վարձացումն ապահովող կարևորագույն գործոններից և սնուցման հիմնական աղբյուրներից մեկը: Միջնադարում հատուկենտ թարգմանություններ են կատարվել նաև պարսկերենից, թուրքերենից, եթովպերենից, ռուսերենից, անգլերենից, իտալերենից, լեհերենից և իսպաներենից:

Հնագույն թարգմանությունները նշանակալից դեր են խաղացել հայ ընթերցողի մտահորիզոնի ընդլայնման, հայոց լեզվի

հարստացման և հայկական ինքնուրույն մատենագրության վարձացման գործում: Նրանցում իրենց շոշափելի արտահայտությունն են գտել նաև հայ ժողովրդի դարավոր մշակութային հարաբերությունները այլ ժողովուրդների, առաջին հերթին իրենց անմիջական հարևանների՝ հույների, ասորիների, վրացիների և արաբների հետ: Թարգմանության միջոցով միջնադարյան հայ հասարակության սեփականությունն են դարձել անտիկ փիլիսոփայության ու բնագիտության, քրիստոնեական աստվածաբանության և արևելյան բժշկագիտության բոլոր կարևոր նվաճումները, որոնք հիմք են հանդիսացել սեփական արժեքների ստեղծման համար:

Պատմամշակութային տեսակետից թարգմանական և ինքնուրույն երկերի պանալանումը սոսկ պայմանական նշանակություն ունի, քանի որ թե՛ բովանդակության և թե՛ ձևի առումով նրանք ներկայացնում են միասնական գրական իրողության հավասարարժեք կողմերը: Միջնադարում, ըստ էության, նրանց տարբերությունը բոլորովին չի գիտակցվել, և հայ ընթերցողի կողմից միևնույն պատվին են արժանացել ինչպես ազգային, այնպես և օտար հեղինակները: Դրա վկայությունն են հայկական բազմաազգար ձեռագրերը, որոնցում ինքնուրույն և թարգմանական գործերը հանդես են գալիս կողք-կողքի, առանց տարանջատման, և հազվադեպ

¹ Հ. Ն. Ակիկյանի անտիպ գործերի շարքում («Հանդես ամսօրեայ», 1954, էջ 414) նշված է «Պատմություն հայ թարգմանության օտարալեզու բնագիրներու (408—1800)» 1 հատոր՝ աշխատությունը, որտեղ հավանաբար հայ թարգմանական գրականության պատմությունը որոշակի պարբերացման է ենթարկված:

կարելի է հանդիպել ձեռագիր ժողովածուների, որոնք կազմված լինեն միայն հայ հեղինակների երկերից:

Ինչպես բոլոր արևելաքրիստոնեական գրականություններում, հայ գրականության մեջ նույնպես թարգմանությունները նախորդել են ինքնուրույն մատենագրության ըսկըպնավորմանը: Սակայն անցումը թարգմանական գրականությունից դեպի ինքնուրույն հայ իրականության մեջ տեղի է ունեցել այնքան կարճ ժամանակամիջոցում, որ այսօր էլ պարանք է պատճառում հետապնդողներին: Թարգմանական գործի ձեռնարկումից ընդամենը մի քանի տասնամյակ հետո հայ հեղինակների՝ Մաշտոցի, Կորյունի, Եվնիկ Կողբացու, Փավստոս Բուպանդի, Ագաթանգեղոսի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Ղապար Փարպեցու կողմից ստեղծվեցին բազմաթիվ բարձրարժեք և ինքնատիպ երկեր: Ինքնուրույն մատենագրության ստեղծմամբ, սակայն, թարգմանական գործը Հայաստանում ոչ միայն չդադարեց, այլև հետևիչ տեղ ընդգրկելով ավելի լայն բնագավառներ, գոյատևեց ընդհուպ մինչև նորագույն ժամանակները:

Հայ թարգմանական գրականության պատմությունն իրենից ներկայացնում է մի անընդհատ շղթա, որը, բնականաբար, ունեցել է իր վերելքի և վայրէջքի դարաշրջանները՝ պայմանավորված մշակույթի ընդհանուր պարզացման օրինաչափություններով: Ընդգրկված երկերի բնույթով, հետապնդած նպատակներով և թարգմանչական սկզբունքներով իրարից որոշակիորեն տարբերվում են հայ թարգմանական գրականության ծաղկման հետևյալ հինգ շրջանները.

ա. Դասական թարգմանություններ (ողջ V դար):

բ. Հունաբան դպրոցի թարգմանություններ (V դ. վերջ—VIII դ. սկիզբ):

գ. Կիլիկյան շրջանի թարգմանություններ (XII—XIII դդ.):

դ. Միարարական (ունիթոռական) միջավայրի թարգմանություններ (XIV դ.):

ե. Ուշմիջնադարյան թարգմանություններ (XVII—XVIII դդ.):

Ինչպես տեսնում ենք, սույն դասակարգումից դուրս են մնում VIII դարի սկզբից մինչև XI դարն ընդգրկող ժամանակահատվածը և XV—XVI դարերը, որոնք կարելի է բնորոշել որպես թարգմանական գրականության անկման շրջաններ:

² Դասական շրջանի թարգմանությունների մասին տե՛ս Հ. Գ. Զարբանյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Գ—ԺԳ), Վենետիկ, 1889, Հ. Ն. Ալիսյան, Դասական հայե-

Դասական շրջանի թարգմանությունները² կոչված էին բավարարություն տալու սկզբնավորվող հայ մատենագրության առաջնահերթ պահանջներին, ապահովելու Եկեղեցու գաղափարական և արարողական գործունեությունն ու կրթական գործի կազմակերպումը: Այդ պատճառով առաջին հայ թարգմանիչների ջանքերի մեջ նկատվում է մի այնպիսի նպատակասլացություն, որը գերմանացի հայագետ Ֆ. Ֆինկի բնորոշմամբ իրավացիորեն կարելի է անվանել «մշակույթի փոխանցման գիտակցված ծրագիր»³:

Այդ ծրագիրը պահանջում էր թարգմանել նախ և առաջ Աստվածաշունչը, այնուհետև արարողական գրքերը, հայրաբանական երկասիրությունները, մեկնողական և ջատագովական ուղիստասիրությունները, եկեղեցական պատմություններն ու կանոնները, վարքերն ու վկայաբանությունները, այսինքն՝ քրիստոնեական գիտելիքների այն ամբողջությունը (բիբլիկա, լիտուրգիկա, պատրիստիկա, հերմենևտիկա, ապոլոգետիկա, հիստորիա, կանոնիկա, հագիոգրաֆիա), որն անհրաժեշտ էր Հայոց Եկեղեցու անմիջական կարիքների բավարարման և հայ ազգային մատենագրության պարզացման համար:

V դարից մեկ հասած բազմաքանակ և տարաբնույթ թարգմանական հուշարձանները ցույց են տալիս, որ հայ մատենագրության հիմնադիրները լիովին իրագործել են իրենց առջև դրված խնդիրը, թարգմանություններ կատարելով բյուզանդական և ասորական քրիստոնեական գրականությունների նշված բոլոր բնագավառներից: Հայ թարգմանական գրականության հնագույն և պատմամշակութային ու գիտական տեսակետից ամենակարևոր հուշարձանը Աստվածաշունչն է, որը, ինչպես պարզված է, իր վերջնական տեսքն ստացել է V դարի 30-ական թվականներին: Թափանցելով հայ ժողովրդի հասարակական կյանքի բոլոր ոլորտները, Աստվածա-

րենը և վիեննական Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 13—54. J. Mayltermans, Répertoire de pièces patristiques d'après le catalogue arménien, Ide Venise, «Le Muséon», t. XLVII, Louvain, 1934, p. 265—292. M. Djanachian, Les arménistes et les Mekhitaristes, «Armenica. Mélanges d'études orientales», Venise, 1969, p. 383—445. Ս. Արևշատյան, Հնագույն հայկական թարգմանությունները և նրանց պատմամշակութային նշանակությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 1, էջ 23—37:

³ F. N. Finck, Die armenische Literatur, «Die orientalische Literaturen...» herausgegeben von Erich Schmidt, A. Erman..., Berlin-Leipzig, 1906 S. 285—286.

շնչի թարգմանությունն իր որոշակի կնիքն է դրել ողջ հայկական մշակույթի՝ գրականության, արվեստի, գիտության և նույնիսկ ժողովրդական բանահյուսության վրա: Ամբողջությամբ նրանով են ներծծված միջնադարյան հայ հոգևոր բանաստեղծությունը, մանրանկարչությունը, երաժշտությունը և ճարտարապետությունը: Որոշ առումով գրչության արվեստի պարզացումը ևս կապված է Աստվածաշնչի հետ, որովհետև միջնադարում այն հանդիսանում էր ամենաշատ ընդօրինակվող և տարածվող գիրքը: Աստվածաշնչական բնագրերը սովորաբար արտագրվում էին խոշոր վանքերին կից գործող մասնագիտացված գրչատներում, լավագույն գրիչների ձեռքով, ամենաընտիր մագաղաթի վրա, հանգամանքներ, որոնք չէին կարող բարերար ազդեցություն չունենալ գրչության առաջընթացի գործում:

Աստվածաշնչից հետո առաջին հայ թարգմանիչների կողմից հայերեն են թարգմանվել քրիստոնեական եկեղեցու ամենաականավոր հեղինակությունների՝ սուրբ հայրերի երկերը, որոնց թվում կարելի է հիշատակել Աթանաս Աղեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Եվսեբիոս Եմեսացու, Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Սեբերիանոս Գաբաղացու, Կյուրեղ Աղեքսանդրացու, Եվագրոս Պոնտացու, Կյուրեղ Երուսաղեմացու մեկնությունները, ձառերը և կանոնները, Արիստիդես Աթենացու, Հիպոլիտեսի և Եպիփան Կիպրացու ջատագովություններն ու հակաձառությունները, Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն» ու «Քրոնիկոնը (Ժամանակագրություն)», Ափրահատ Զգոնի, Զենոբ Ամդեցու, Այիթալա Եդեսացու քարոզներն ու թղթերը, Մարութա Նփրկերտցու վկայաբանական ժողովածուն, ինչպես նաև մի շարք ծիսական գրքեր՝ Պատարագամատույց, Ժամագիրք, ձառոց և այլն: Այս պարզ թվարկումն իսկ որոշակի պատկերացում է տալիս առաջին հայ թարգմանիչների ծավալած գրական գործունեության հսկայական ընդգրկման և նրանց ստեղծած այն հոգևոր գանձարանի մասին, որի վրա պետք է հենվեր և որից իր ողջ գոյության ընթացքում պետք է սնվեր հայկական ինքնուրույն մատենագրությունը:

V դարի հայերեն թարգմանությունները կատարվել են բացառապես երկու լեզվից՝ ասորերենից և հունարենից, ընդ որում, ասորերենից կատարված թարգմանությունները ժամանակով նախորդել են հունարենից կատարված թարգմանություններին, թեև իրենց ընդգրկմամբ և ծավալով բավականին փիշում են վերջիններին: Ասորերենից և հու-

նարենից կատարված թարգմանություններն իրենց լեզվամտածողությամբ, ոճով և բանաստեղծարվ նկատելիորեն տարբերվում են իրարից, որ հիմք է տվել Հ. Ն. Ալիխյանին V դարում վանական թարգմանական երկու դպրոց՝ ասորական և հունական⁴: Սակայն պատմագիրների կողմից հաստատված այն փաստը, որ միևնույն հեղինակները՝ Սահակ Պարթևը, Եվսիկ Կողբացին, Հովսեփ Պողոսյանը և ուրիշներ, թարգմանություններ են կատարել և՛ հունարենից, և՛ ասորերենից, ավելորդ է դարձնում նման հարցադրումը: Իսկ հունարենից և ասորերենից կատարված թարգմանությունների աչքի ընկնող ոճական տարբերությունները բացատրվում են ոչ թե վանական թարգմանական դպրոցների առկայությամբ, այլ այդ երկու լեզուների որոշակի առանձնահատկություններով:

Դասական շրջանի գլխավոր թարգմանական սկզբունքը եղել է բնագրի հարապատ, բայց ոչ ստրկական վերարտադրությունը, որ հնարավորություն էր տալիս առանց մեղանշելու հայոց լեզվի օրինաչափությունների դեմ, ճշգրիտ կերպով արտահայտել բնագրի բովանդակությունը և իմաստային երանգները: V դարի հայկական թարգմանությունները, որպես կանոն, աչքի են ընկնում լեզվի հարստությամբ ու մաքրությամբ և սահուն, նրբաճաշակ ոճով:

Ուսումնասիրողներից շատերը հայ թարգմանական գրականության դասական շրջանը սովորաբար սահմանափակում են 405—460-ական թվականներով՝ առաջնորդվելով ոսկեդարյան հայերենի գործածության ընդունված շրջանակներով: Սակայն իրականում դասական բնույթի թարգմանությունները շարունակել են կատարվել ոչ միայն ընդհուպ մինչև V դարի վերջը, այլև ամենայն հավանականությամբ, գոյատևել են նաև հետագայում, հունաբան դպրոցի թարգմանություններին պուգահեռ:

Հայ թարգմանական գրականության պարզագույն երկրորդ շրջանում⁵ եկեղեցական

⁴ Հ. Ն. Ալիխյան, Դասական հայերենը..., էջ 35—36:

⁵ Երկրորդ շրջանի՝ հունաբան դպրոցի թարգմանությունների մասին տե՛ս՝ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915. Հ. Մանանդյան, Զուհարան դպրոցը և նրա պարզագույն շրջանները, քննական ուսումնասիրություն, Վիեննա, 1928, Հ. Ն. Ալիխյան, Դասական հայերենը..., էջ 85—120. Ա. Մուրադյան, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տեքմոնաբանության ստեղծման գործում, Երևան, 1971. С. Арсватян, Формирование философской науки в Древней Армении (V—VI вв.), Ереван, 1973.

երկերն իրենց տեղը վիջում են ավելի տեսական՝ դավաճանական և փիլիսոփայական բնույթի հուշարձանների թարգմանություններին, որ կապված էր հայ իրականության նոր պահանջմունքների՝ անտիկ փիլիսոփայության և գիտության նվաճումների յուրացման անհրաժեշտության հետ: Այդ շրջանում հունաբան դպրոցի ներկայացուցիչների ջանքերով հայերեն են թարգմանվում Դիոնիսիոս Թրակացու «Քերականությունը», Աֆտոնիոսի «Պիտոյից գիրքը», Թեոն Աղեքսանդրացու «Ճարտասանական վարժությունները», Պորփյուր Փյունիկեցու «Արիստոտելի ստորոգությունների ներածությունը», Արիստոտելի և Պլատոնի կարևորագույն տեսական աշխատությունները, նորավատնական իմաստասերների՝ Յամբլիքոսի և Դավիթ Անհաղթի փիլիսոփայական մեկնությունները, Գրիգոր Նյուսացու և Նեմեսիոս Եմեսացու մարդակազմական երկերը, Փիլոն Եբրայեցու, Իրենեոս Լուզոնացու, Տիմոթեոս Կուփի, Դիոնիսիոս Արիոպագացու դավաճանական և աստվածաբանական երկասիրությունները և այլն: Նշված թարգմանական հուշարձաններն ընդգրկում են գիտությունների դասակարգման միջնադարյան ըմբռնման բոլոր բնագավառները՝ քերականությունը, ճարտասանությունը, փիլիսոփայությունը, բնագիտությունը և աստվածաբանությունը, որ վկայում է հունաբան դպրոցի ներկայացուցիչների հետևողական և նպատակադրված գործունեության մասին:

Հայագիտության մեջ զգալի աշխատանք է կատարվել հունաբան դպրոցի թարգմանությունների դասակարգման և թվագրման ուղղությամբ: Նորագույն դասակարգումը, որը պատկանում է Ս. Արևշատյանին⁶, և որտեղ հաշվի են առնված նախորդ հետազոտողների հիմնական եպրակագությունները, ներկայացնում է հունաբան թարգմանությունների հաջորդականության հետևյալ պատկերը. I ենթաշրջան (450—460-ական թթ.), II ենթաշրջան (480—510-ական թթ.), III ենթաշրջան (510—600-ական թթ.), IV ենթաշրջան (610—710-ական թթ.): Հունաբան դպրոցի հնագույն թարգմանությունն է համարվում Դիոնիսիոս Թրակացու «Քերականությունը», իսկ ժամանակով վերջինը՝ Դիոնիսիոս Արիոպագացու աստվածաբանական երկասիրությունների թարգմանություններն են:

Քերականական և փիլիսոփայական աշխատությունների թարգմանության ընթաց-

քում, բնականաբար, ի հայտ է գալիս հասկանալիության գիտական հասկացությունների հայերեն համարժեքների ստեղծման խնդիրը, որը հունաբան դպրոցի թարգմանիչները լուծում են արհեստական ճանապարհով՝ բառապատճենումների և նորաստեղծ բայական նախածանցների օգնությամբ: Դրանով հունաբան թարգմանությունները, Հայաստանում անտիկ մշակույթի տարածմանը և հայ միջնադարյան փիլիսոփայության ու գիտության վարճացմանը նպաստելուց բացի, նշանակալից դեր են խաղացել նաև հայոց լեզվի գիտական տերմինաբանության ստեղծման գործում: Այնպիսի նախածանցներ, ինչպիսիք են, օրինակ, ապա, առ, գեր, ենթ, հակ, ստոր, տար, փոխ, ներ և այլն, որոնք այնքան սովորական են ժամանակակից հայերենում և այսօր էլ կապում են նրա գիտական բառաստեղծման էական տարրը, առաջին անգամ հունարենի նմանողությամբ շրջանառության մեջ են դրվել հունաբան դպրոցի գործիչների կողմից:

Հունաբան դպրոցի ներկայացուցիչները, ի տարբերություն դասական շրջանի թարգմանիչների, առաջնորդվում էին բնագրի բառացի, նյութական վերարտադրության ըսկզբունքով, այդ պատճառով նրանց իրագործած թարգմանություններին բնորոշ են խրթին ոճը և հայոց լեզվին անհարապատ շարահասական կառուցվածքները: Սակայն հայ մշակույթը, յուրացնելով հունաբան դպրոցի բերած դրական արդյունքները, ժամանակի ընթացքում կարողացավ ապամոլել նրա բոլոր ծայրահեղություններին:

Ինչպես վերը նշեցինք, VIII—XI դարերը հայ թարգմանական գրականության պատմության մեջ բնորոշվում են որպես անկման դարեր: Դա բացատրվում է ոչ միայն այդ շրջանից մեկ հասած թարգմանությունների համեմատաբար փոքր քանակով, այլև միասնական թարգմանական սկզբունքների ու նպատակների բացակայությամբ: Այնուամենայնիվ, այդ դարերը նույնպես տվել են թարգմանական գրականության որոշ արժեքավոր արձանիքներ, որոնցից մի քանիսը կարևոր դեր են կատարել հայ մշակույթի վարճացման պատմության մեջ: IX դարում, հավանաբար արաբերենից, հայերեն է թարգմանվել Նանա Ասորու «Մեկնություն Անետարանին Յովհաննոս» աշխատությունը, իսկ IX—X դարերում Ատոմա վանքի վանահայր Գագիկի ձեռքով ասորերենից թարգմանվել են Մարութա Նփրկեղոսյանի վարքը և Բարդիշոյի, Ներսեհի ու Անանունի վկայաբանությունները: X դարի թարգմանություններից արժանի է հիշատակության Հովսեփ Կոս-

⁶ Տե՛ս Ս. Արևշատյան, «Формирование...», стр. 186—188.

տանդանուկությունը թարգմանած բյուզանդական Հայսմավորքը⁷, որի հիման վրա հետագայում կազմվեցին հայկական Հայսմավորքի պանական խմբագրությունները: XI դարում թարգմանության բնագավառում պգալի աշխատանք է կատարում Գրիգոր Մագիստրոսը՝ հունարենից հայերեն թարգմանելով Եվկլիդեսի «Երկրաչափությունը» և Պատոնի մի շարք աշխատությունները⁸: Իսկ XI դարի վերջում և XII դարի սկզբում թարգմանչական լայն գործունեություն է ծավալում նրա որդին՝ Հայոց կաթողիկոս Գրիգոր Վկայասերը, հունարենից և ասորերենից թարգմանելով տասնյակ վարքեր ու վկայաբանություններ և դրանցով հարստացնելով հայկական վարքագրական գրականությունը:

Կիլիկյան շրջանում⁹ դժվար է բացահայտել թարգմանչական գործունեության նույնպիսի հետևողականություն և նպատակադրված ընդգրկում, ինչպես դասական և հունաբան թարգմանությունների դեպքում, սակայն որոշ յուրահատկությունների առկայությունը հիմք է տալիս այն առանձնացնելու որպես հայ թարգմանական գրականության պարզագույն մի նոր հանգրվան: Այս շրջանի ամենաբնորոշ երևույթը գործնական գիտելիքների՝ քաղաքացիական իրավունքի, բժշկության, գյուղատնտեսության նկատմամբ եղած հետաքրքրությունն է, որ բխում էր Կիլիկյան պետության անմիջական կարիքներից: Այդ կարիքները բավարարելու նպատակով XII—XIII դարերում ասորերենից, հունարենից, հին ֆրանսերենից և արաբերենից հայերեն են թարգմանվում Ասորահռոմեական դատաստանագիրքը, Բյուզանդական օրենքների ժողովածուն, «Անտիոքի ասիկները», Աբուսայիդի և Իշոխ քահանայի՝ առնեյան աղբյուրների հիման վրա կազմված

բժշկագիտական և մարդակազմական աշխատությունները, միջադարի գյուղատնտեսական գիտելիքների հանրագիտարանը հանդիսացող «Վաստակոց գիրքը», Ֆարաջ Ասորու «Բժշկարան ձիոյ» անասնաբուժական ձեռնարկը և այլն: Ըստ մի թանկարժեք ձեռագրական հիշատակարանի՝ Կիլիկիայի Հեթում Ա թագավորի պատվերով հայերեն են թարգմանվում նաև պողպատաձուլությանը, ձիադարմանությանը, թրագործությանը և աստղագիտությանը նվիրված գրքեր¹⁰:

Մասամբ շարունակվում են նաև դասական շրջանի թարգմանական ավանդույթները. թարգմանվում են նորանոր վարքեր, վկայաբանություններ, ճառեր և մեկնություններ: Շարունակելով Գրիգոր Վկայասերի գործը՝ Ներսես Լամբրոնացին հին և նոր թարգմանությունների խմբագրությամբ կազմում է «Վարք հարանց» ժողովածուն և հունարենից թարգմանում Գրիգոր Պապի «Վասն քաղաքավարության հարցն, որք յիտալիա փայլեցին» համաբնույթ գրվածքը: Լամբրոնացին կատարել է նաև եկեղեցական կանոնների, թղթերի, մեկնությունների ու ծիսական գրքերի մի շարք այլ թարգմանություններ: XII դարում թարգմանական գրականության բնագավառում աչքի ընկնող դեր են խաղում նաև Գրիգոր III Պահլավունի կաթողիկոսը և նրա եղբայր Ներսես Շնորհալին:

Ասորիքի անմիջական հարևանությունը և Կիլիկիայում ասորի բնակչության առկայության հանգամանքը նպաստում են ասորական գրականության բազմաթիվ հուշարձանների, այդ թվում՝ Հակոբ Սրճեցու տասնյակ ճառերի ու ներբողյանների, Միքայել Ասորու «Ժամանակագրության», Դանիել Սալախացու «Սաղմոսաց մեկնության», Եփրեմ Ասորու, Բարսումա ճգնավորի, Սարգիս զորավարի վարքերի ու վկայաբանությունների թարգմանությանը: Ասորական գրականության որոշ նմուշներ այս շրջանում հայերեն են թարգմանվում նաև հունարենից, ինչպես Եփրեմ Ասորու Կտակը և նրա ճառերից մի քանիսը:

Կիլիկիայում կիրառություն է գտնում թարգմանական գործունեության մի նոր եղանակ, որի սկզբնավորումը կապվում է Գրիգոր Վկայասերի անվան հետ. թարգմանությունները սովորաբար կատարվում են օտար և հայ եղբիւնակների համագործակցությամբ, այսինքն՝ հույն և ասորի թարգմանիչները կատարում են բնագրի տողացի թարգմանությունը, իսկ հայ խմբագիրներն իրագործում

⁷ Տե՛ս Հ. Ն. Ալիկյան, Յովսեփ Կոստանդնուպոլսեցի թարգմանիչ Յայսմավորքի (991), «Հանդես ամսօրեայ», 1957, էջ 1—12:

⁸ Տե՛ս M. Leroy, Grégoire Magistros et les traductions arméniennes d'auteurs grecs, «Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales de l'Université de Bruxelles», t. III, Bruxelles, 1935, p. 263—294.

⁹ Կիլիկյան շրջանի թարգմանություններին նվիրված հատուկ ուսումնասիրություններ գոյություն չունեն. առանձին տեղեկություններ տե՛ս Հ. Գ. Չարքահանալյան, Մատենադարան...: M. Djanachian, Les arménistes...: Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, Համագրություն Հայկական Կիլիկիոյ և Լոն Մեծագործ, Վենետիկ, 1885, Հ. Ն. Ալիկյան, Ներսես Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսուի, կենանք և գրական վաստակները, հանդերձ ազգաբանությամբ Պահլավունաց և Լամբրոնի Հեթումանց, Վիեննա, 1956:

¹⁰ Տե՛ս Հ. Գ. Չարքահանալյան, Մատենադարան..., էջ 558:

են դրանց գրական վերամշակումը¹¹ Այդ կատաճառով հայերեն թարգմանությունները բնագրական տեսակետից երբեմն բավականին հեռանում են իրենց նախօրինակներից և փաստորեն դառնում նրանց ազատ փոխադրությունը:

Կիլիկյան շրջանի թարգմանություններն աչքի են ընկնում ևս մի ուշագրավ առանձնահատկությամբ. եթե եկեղեցական գրականության հուշարձանները՝ վարքերը, վկայաբանությունները, ճառերն ու մեկնությունները, թարգմանվում են դասական գրաբարով, ապա գործնական կիրառության համար նախատեսված թարգմանությունները, ինչպես՝ «Անտիոքի ասիկները», «Վաստակոց գիրքը», Ֆարաջ Ասորու «Զիարածարանը», բժշկագիտական աշխատությունները և այլն, կատարվում են ժողովրդին հասկանալի միջին հայերենով:

XIII դարում թարգմանական գործի որոշ աշխուժացում է նկատվում նաև բուն Հայաստանի հյուսիսային նահանգներում, որոնք գտնվում էին վրաց պետականության ազդեցության ոլորտում: Սիմեոն Պղնձահանեցու ջանքերով վրացերենից հայերեն են թարգմանվում Պրոկղ Դիադոխոսի «Շաղկապք աստուածաբանականք», Հովհաննես Դամասկացու «Աղբիւր գիտութեան», Հովհաննես Սինայեցու «Սանդուղք աստուածային եկից» երկերը, ինչպես նաև «Վրաց պատմությունը» և «Հունական ժամագիրքը»¹²: Վրացադավան հայերի միջավայրի գրական այս արտադրանքները, սակայն, իրենց բնույթով և հետապնդած նպատակներով որոշակիորեն տարբերվում են կիլիկյան թարգմանություններից և կապվում հաջորդ՝ միարարական շրջանի թարգմանությունների հետ:

Միարարական միջավայրի թարգմանությունները¹³, ի տարբերություն նախորդ շրջ-

անների թարգմանությունների, որոնք բր-խում էին հայոց հոգևոր մշակույթի ներքին պահանջներից, օտարների նախաձեռնությամբ և օտար նպատակների ծառայելու կոչված ձեռնարկում էին հանդիսանում: Անժխտելի է, իհարկե, որ միարարական շարժման ծագումը Հայաստանում կապված էր քաղաքական դրդապատճառների՝ պապականության օգնությամբ հայ ժողովրդի ազատագրման սին երապանքների հետ: Բուն գործունեության մեջ, սակայն, միարարությունը ոչ միայն որևէ դեր չկատարեց այդ նպատակի իրականացման ուղղությամբ, այլև պատճառ հանդիսացավ հայ ժողովրդի մի վզալի հատվածի օտարացմանը: Այնուամենայնիվ, չնայած իր խաղացած խիստ բացասական գործնական դերին, միարարական շարժումը որոշ հետք է թողել հայ մշակույթի, մասնավորապես բնագիտական և փիլիսոփայական մտքի պարզացման պատմության մեջ:

Հայաստանում միարարական շարժման մշակութային կենտրոններն էին Արտաշ գավառի Ծործոր բնակավայրում հիմնադրված հայ-ֆրանցիսկյան և Նախիջևանի Քննա գյուղի հայ-դոմինիկյան վանքերը, որտեղ քարույզական և գրական բուռն գործունեություն են ծավալել եվրոպացի միսիոներներից Ֆրա Պոնցիոնը, Բարթոլոմեոս Բոնոնացին կամ Մարաղացին և Պետրոս Արագոնացին, իսկ հայ միարարներից՝ Հովհաննես Ծործորեցին, Հովհաննես Քննեցին և Հակոբ Քննեցին: Հիմնականում այս անձնավորությունների ջանքերով շատ կարճ ժամանակի ընթացքում, XIV դարի 20—40-ական թվականներին, լատիներենից հայերեն են թարգմանվում մեծ թվով ծիսական, քարույզական, աստվածաբանական և մեկնողական գրքեր, ինչպես նաև մի շարք փիլիսոփայական և գիտական աշխատություններ:

Միարարական միջավայրի կարևորագույն թարգմանություններն են Զիլբերտոս Պոռետացու «Գիրք վեցից սկզբանց», Ալբերտուս Մեծի «Համառոտ հաղթումն աստուածաբանական ճշմարտության», Թովմա Աբվինացու «Յաղագս խորհրդոց եկեղեցւոյ», «Հաղթումն աստուածաբանության» և «Գիրք առաքինութեանց», Նիկողայոս Լյուրացու «Մեկնութիւն Յովհաննոս» և «Մեկնութիւն Երրայեցոց թղթոյն», Բարթոլոմեոս Մարաղացու «Յաղագս վեցօրեայ արարչութեան».

(«Յովհաննես Քննեցի, Յաղագս Քերականին» աշխատանքությանը L. խաչիկյանի և Ս. Ավագյանի, Երևան, 1977 թ. գրքում, էջ 5—51): Տ. Арешатян, К истории философских школ средневековой Армении, (XIV в.), Ереван, 1980.

¹¹ Հմմտ. Ն(որայր) եպս. Ծովակյան (Պողոսյան), Օտարազգի հայերենագետներ (ԺԱ—ԺԳ դդ.), «Սին», 1968, էջ 446—447:

¹² Հ. Ն. Ալիկյան, Սիմեոն Պղնձահանեցի և իր թարգմանությունները վրացերեն, Վիեննա, 1951:

¹³ Միարարական միջավայրի թարգմանությունների մասին տե՛ս F. Tournebise, Les Frères-Unitiens (Ounithorq, Miabanoghq) ou Dominicains arméniens (1330—1794), «Revue de l'Orient Chrétien», t. XXII, 1921—1922, p. 145—161, 249—279. M. A. Oudenrijn, Linguae haecanae Scriptores Ordinis Praedicatorum Congregationis Fratrum Unitorum, Bern, 1960: L. խաչիկյան, Արտաշի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը, «Բանբեր Մատենադարանի», № 11, Երևան, 1973, էջ 125—210. L. խաչիկյան, Քննայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քննեցու գիտական գործունեությունը

«Համառոտ հաաքում... ի դիպելիկէն որ է տրամաբանութիւն» և «Քարոզգիրք», Պետրոս Արագոնացու «Գիրք դատաստանաց հաաքեալ ըստ կանոնաց Եկեղեցւոյն Հռովմայ», «Համառոտ վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի», «Վերլուծութիւն ի վերայ գրոցն, որ կոչի Պերիարմենիաս», «Համառոտ հաաքումն ի վերայ ներածութեան Պորփիրի» աշխատությունները և այլն: Հայ միարարներն ունենում են նաև իրենց պատմագիրը՝ հանձին Ներսես Պալիանենցի, որը 1340-ական թվականներին Կաթողիկ Եկեղեցու ժամանակավորապես Ֆրանսիայի Ավինյոն քաղաքում հաստատված հոգևոր կենտրոնում էական լրացումներով լատիներենից հայերեն է թարգմանում Մարտիրոս Օպակիացու «Գավապանագիրքը»՝ Պապերի գահակալության ամփոփ շարադրանքը:

Վերոհիշյալ թարգմանությունները, սակայն, չեն լճանում միարարական միջավայրի նեղ շրջանակներում, այլ, շուտով դուրս գալով նրա սահմաններից, թափանցում են բուն հայկական ուսումնական կենտրոնները՝ նպաստելով եվրոպական սխոլաստիկայի բովոլ անցած անտիկ գիտության նվաճումների տարածմանը: Գլխավոր-Տաթևյան դպրոցի հոգևոր առաջնորդները՝ Եսայի Նչեցին, Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին, վճռական ու անսկիզբ պայքար են մղում կաթողիկական աղետաբեր գաղափարների դեմ:

XV—XVI դարերի անկման ժամանակներից հետո հայ թարգմանական գրականությունը թևակոխում է իր պարզացման վերջին՝ ուշմիջնադարյան շրջանը¹⁴: Թարգմանական գործի պգալի աշխուժացումը, որ նկատվում է XVII—XVIII դարերում, պայմանավորված էր հայկական գաղթավայրերի աճող կենսունակությամբ, միջպագային առևտրի մեջ հայ վաճառականների խաղացած նշանակալից դերով և հայ մշակույթի ընդհանուր վերելքով: Հայ ժողովուրդը Արևելքի ժողովուրդների մեջ թերևս առաջինն էր, որ թարգմանությունների միջոցով հաղորդակից

էր դառնում եվրոպական գիտության՝ աշխարհագրության, մաթեմատիկայի, քերականության, բնագիտության նորագույն նվաճումներին: Տպագրական գործի ծավալումը հնարավորություն էր տալիս այդ գիտելիքներն անմիջապես տարածելու գրասեր հասարակության մեջ, որ, անշուշտ, նպաստում էր հայ մշակույթի պարզացմանը և ժողովրդի կրթական մակարդակի բարձրացմանը:

XVII դարում հայ թարգմանական գրականության ասպարեկում աչքի ընկնող դեր են կատարել Հովհաննես Անկյուրացին, Ստեփանոս Լեհացին, Ոսկան Երևանցին և Հովհաննես Հոյովը: Առաջինի կողմից հայերեն են թարգմանվել «Լատինացւոց աշխարհացոյցը», Պետրոս Ապիանի «Կոսմոգրաֆիան», «Պտղոմեոսի աշխարհացոյցը», «Պատմութիւն աշխարհաց», «Մարմնապնութիւն», «Վասն հասարակաբար քարերուն» աշխատությունները և այլն: Ստեփանոս Լեհացու թարգմանություններից արժանի են հիշատակության Հովսեփոս Փլաբիոսի «Հրէից պատերազմի պատմութիւնը», Արիստոտելի «Մետաֆիզիկան», Պրոկղ Դիադոխոսի «Պատճառաց գիրքը», Դիոնիսիոս Արիոպագացու չորս երկասիրությունները, որոնք արդեն մեկ անգամ հունարենից հայերեն էին թարգմանվել VIII դարի սկզբում Ստեփանոս Սյունեցու ձեռքով, ինչպես նաև «Հայելի վարուց» ժողովածուն: Ուշագրավ է, որ, ի տարբերություն Ստեփանոս Լեհացու մյուս թարգմանությունների, որոնք կատարվել են լատիներենից, «Հայելի վարուց» ժողովածուն հայերեն է թարգմանվել լեհերեն բնագրից: Ոսկան Երևանցին լատիներենից հայերեն է թարգմանել «Արիեստ քերականութեան», «Տարերք տրամաբանութեան» աշխատությունները, մի փիլիսոփայական բառարան, ինչպես նաև աստվածաշնչական որոշ զորքեր՝ Աստվածաշնչի 1666 թվականի իր ձեռնարկած հրատարակությունն ամբողջացնելու համար: Հովհաննես Հոյովի կարևոր թարգմանություններն են՝ «Պարզաբանութիւն հոգեւուագ Սաղմոսացն Դաւթի», «Պարտեւ հոգեւոր», «Նորագոյն ծաղիկ պօրութեանց», Թովմա Գեմբեցու «Յաղագս համահետմանն Բրիստոսի», ձռան Պապիստա Պոռթայի «Գիրք բնապնութեան» աշխատությունները: Նրան է վերագրվում նաև 1675 թվականին Մարսելի Ոսկանյան տպարանում հրատարակված «Արիեստ համարողութեան» գրքի թարգմանությունը: Որոշ առումով թարգմանություններ, ավելի ճիշտ փոխադրություններ պետք է համարել նաև XVII դարի վերջում Ամստերդամում գործող Վանանդեցիների տպարանի հրատարակած գրքերի պգալի մասը:


¹⁴ Ուշ միջնադարի՝ XVII—XVIII դդ. հայերեն թարգմանությունների մասին տե՛ս «Հայ հետադարձ գրքի մատենագիտական ցուցակ (1512—1800 թթ.) Երևան, 1963. Գ. Անապան, Հայկական մատենագիտություն, հտ. 1, Երևան, 1959, էջ 1002—1024 (աշխարհագրական երկերի թարգմանությունների մասին): XVII դ. թարգմանությունների մասին տեղեկություններ ենք քաղել նաև Հ. Միրզոյանի «XVII դ. հայ փիլիսոփայությունը» ձեռագիր աշխատությունից, որից օգտվելու հնարավորության համար խորին շնորհակալություն ենք հայտնում հեղինակին:

XVIII դարում թարգմանական գործը կենտրոնանում է հիմնականում երկու քաղաքներում՝ Վենետիկում և Պոլսում, որտեղ կրթական-լուսավորական լայն ծրագրեր են իրագործվում ինչպես կաթոլիկ հայերի միջավայրում, այնպես և Հայոց Պատրիարքարանի հովանու ներքո: Դարավերջին բավմաթիվ թարգմանական հուշարձաններ են հրատարակվում նաև հայ տպագրության մյուս կենտրոններում՝ Տրիեստում, Մադրասում, Պետերբուրգում և Նոր Նախիջևանում: XVIII դարի թարգմանիչներից արժանի են հիշատակության Մխիթար Սեբաստացին, Պետրոս Թիֆլիսեցին, Հովնան Թոխաթեցին, Պետրոս Մուհուպյանը, Աթանաս Մերասյանը, Ղուկաս Խարբերդացին, Վրթանես Ասկերյանը, Մարգար Շահրիմանյանը և ուրիշներ: Հայ հնատիպ գրքի ցանկացած մատենագիտություն կարող է որոշակի պատկերացում տալ նշված և այլ թարգմանիչների ծավալած գրական գործունեության մասին, ուստի ավելորդ է այստեղ մեկառմեկ թվարկել նրանց հրատարակած բավաթիվ թարգմանական հուշարձանները: Անհրաժեշտ է նշել միայն, որ XVII և մանավանդ XVIII դարում գիտա-

գործնական գրականության կողքին մեծ տեղ են պաղեցնում կրոնա-դավանաբանական բնույթի հայերեն թարգմանությունները, որոնք կատարվում էին եվրոպացի քարուպիչների կամ կաթոլիկացած հայերի կողմից՝ հայ հասարակության մեջ կաթոլիկական գաղափարներ տարածելու նպատակով:

Թարգմանական գրականության ծաղկման նշված հինգ շրջաններից յուրաքանչյուրն, ինչպես տեսանք, որոշակի հետք է թողել հայ մատենագրության պատմության մեջ, այս կամ այն չափով պայմանավորելով նրա պարզացման ընթացքը և բավականորեն իրեն հարստացնելով հայ ընթերցողի գիտելիքների պաշարը: Որպես ընդհանուր եզրակացություն կարելի է նշել հետևյալը. թարգմանական գործը, որպես կանոն, բուն ծավալում է ստացել հատկապես հայկական մշակույթի վերելքի և ծաղկման ժամանակաշրջաններում, երբ հայ ժողովրդի հոգևոր կյանքը կարիք է պգացել սնուցման նոր և առատ աղբյուրների՝ իր հարաճուն պահանջներն ու հետաքրքրությունները բավարարելու նպատակով:





ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԼՄԲԱՏԱՎԱՆՔԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐԸ

Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցին գտնվում է Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջին, Արթիկի մոտ: Եկեղեցին պատկանում է հայկական փոքր կենտրոնագմբեթ կառույցների սերնդին: Շինարարական արձանագրություն չունի և, դատելով ճարտարապետական ձևերից, կառուցվել է VII դարի առաջին կեսին, կամ հնարավոր է՝ VI դարում¹:

Ինչպես նշում են մասնագետները, այդ գոյություն ունեցող եկեղեցին «...իսկական ճարտարապետական վարպետության և տաղանդավոր անանուն ճարտարապետի ստեղծագործություն է»²:

Լմբատավանքի համալիրի այժմ միակ կանգուն Ս. Ստեփանոս եկեղեցին հայտնի է նաև կառուցմանը ժամանակակից իր որմնակարով, որը հայկական վաղ միջնադարյան մոնումենտալ գեղանկարչության ինքնատիպ և մեծարժեք նմուշներից է:

VII դարը հայ մշակույթի և մասնավորապես ճարտարապետության համար եղել է առավելագույն վերելքի մի շրջան, իսկ որմնակարչական արվեստի առանձնահատկություններից է այն, որ նա անբաժան է ճարտարապետությունից: Հայկական եկեղեցիների ներքին հարդարանքում որմնակարներ են օգտագործվել դեռևս IV—V դարերում (Քասաղի, Երեբոյքի բազիլիկ եկեղեցիներում, Մանավերտի, Տեկորի տաճարներում և այլուր), սակայն դրանք գրեթե ամբողջո-

վին ոչնչացել են, և արվեստի այդ ճյուղի մասին մեր իմացածը գլխավորապես հիմնվում է VII դարի որմնակարների վրա, որոնք թեև պահպանվել են հատվածաբար, այնուամենայնիվ թույլ են տալիս դատելու նրանց և՛ գեղարվեստական արժեքի, և՛ պատկերազրույցի մասին: Բացի մեկ հասած որմնակարներից³, մատենագրական աղբյուրները նույնպես բավարար նյութ են ընձեռում հայ մոնումենտալ գեղանկարչության նշված ժամանակաշրջանի պատմության համար: Դեռևս VII դարի սկզբին, սուր դավանաբանական վեճերի բովում, Հովհան Մայրագոմեցին հանդես է գալիս ի պաշտպանություն որմնակարների⁴: Նույն շրջանում Վրթանես Քերթովը «Յաղագս պատկերամարտից» հայտնի երկում տալիս է հայ կերպարվեստի վաղմիջնադարյան տեսության դավանաբանական և գեղագիտական հիմնավորումը⁵: Հետաքրքրական է, որ այդ երկը հանդիսա-

³ VII դարի որմնակարները համեմատաբար լավ են պահպանված Արուճի և Թալիսի կաթողիկե տաճարներում, չնչին հատվածներ են մնացել Արթիկի, Կոջի, Սիսիանի եկեղեցիներում, Աջտարակի Կարմրավորում, Եղվարդի Ս. Ջորավարում: Որմնակարներ են ունեցել նաև Չվարթնոցը, Դվինի, Բագարանի և Մրենի տաճարները և այլ հուշարձաններ:

⁴ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Արվանից աշխարհի, Երևան 1969, էջ 207—209: Հ. Քենդերյան, Հովհան Մայրագոմեցի, Երևան 1973, էջ 37:

⁵ Հ. Քյուսեյան, Վրթանես Քերթովի «Յաղագս պատկերամարտից» երկը, «Պատմա-բանասիրական հանդես» 1981, № 2, էջ 178—190: Երկի քննական բնագիրը տե՛ս Երվ. Մկրտչյան, Վրթանես Քերթովը և պատկերամարտությունը, «Էջմիածին» 1970, 2—է, էջ 89—93:

¹ Վ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երևան, 1982, էջ 41—43:

² В. Арутюнян, С. Сафарян, Памятники армянского зодчества, Москва, 1951, стр. 42.

նում է «...պատկերամարտերի դեմ որևէ լեզվով գրված ամենափոքր գրությունը»⁶։ Այն միաժամանակ թույլ է տալիս ասելու, որ հայկական եկեղեցիներում պատկերներ էին նկարվում ոչ միայն համաքրիստոնեական, այլև տեղական սրբերի վերաբերյալ⁷։ Այս պատմաշրջանի մոնումենտալ գեղանկարչության հուշարձանների շարքում Լմբատավանքի որմնանկարն ուրույն տեղ ունի։ Այն համեմատաբար լավ պահպանվածներից է և իր պատկերագրությամբ՝ ինքնատիպ։ Իրենց ուսումնասիրություններում այդ հուշարձանին անդրադարձել են Լիդիա Դուրնովն⁸, Սիրարփի Տեր Ներսեսյանը⁹, ինչպես նաև հայ արվեստին նվիրված պանպան աշխատությունների հեղինակները¹⁰։ VII դարի հայկական որմնանկարների և մասնավորապես Լմբատավանքի որմնանկարի հետագա հետազոտման տեսակետից արժեքավոր են Ն. Բոթանջյանի և Վ. Փուցկոյի վերջին տարիներին կատարած ուսումնասիրությունները¹¹։

Լմբատավանքում որմնանկարն պահպանվում է եկեղեցու գլխավոր խորանի զմբեթարդը և նրան հարող արևելյան պատը։ Գմբեթարդում երևում են հրո լեզուների խոր-

քի վրա պատկերված Քրիստոսի մարգարտագարդ գահի ստորին պարզարուն պատվանդանը, որը դրված է ծիածանակամարի վրա։ Վերջինս եզերված է սպիտակ, կանաչ, կարմիր երկվերով և մի մեծ լուսապսակի պես առանձնացնում է ամբողջ հասակով կանգնած գահակալ Քրիստոսի պատկերը, որի միայն ներքևի մասն է պահպանվել։ Ծիածանակամարից դուրս, կենտրոնական պատկերի առաջ և ձախ կողմերում, պատկերված են երկու քառակերպ, մարդու, երեխայի, առյուծի և արծվի գլխով, երկու վեցթևանի սերովբե և երկու զուգ հրո անիվներ¹²։

Խորանին հարող պատերին պատկերված են դեպի կենտրոն շարժվող երկու հեծյալներ՝ Սուրբ Սարգիսը և Սուրբ Գևորգը։ Նրանք ձեռքերին ունեն խաչափայտ։ Չիերի սմբակների տակ չկան չար ուժեր մարմնավորող պատկերներ։ Որմնանկարում հատկապես լավ են պահպանված քառակերպերը։ Նրանց չորս ձեռնակ թևերը ծածկված են բաց աչքերով, իսկ մարդկային դեմքերն օժտված են խոր արտահայտչականությամբ։

Լմբատավանքի որմնանկարի այս հորինվածքի և արևելաքրիստոնեական արվեստի հուշարձանների համեմատությունը ցույց է տալիս, որ այն մի կողմից առնչվում է ասորա-պաղեստինյան արվեստի ստեղծագործություններին և մյուս կողմից աչքի է ընկնում զգալի ինքնուրույնությամբ։ «Ի տարբերություն հունական խճանկարի, որմնանկարի և դպտական նկարների, որտեղ Քրիստոսի կենտրոնական մոտիվի համար ներշնչման աղբյուր է եղել Հայտնությունը, հայկական որմնանկարները բավարարվում են բացառապես Հին Կտակարանի տեքստերով և պատկերում են սուկ այն քառակերպերն ու անիվները, որոնք հիշատակված են Եզեկիելի մոտ (Ս 5—21) և այն սերովբեները, որոնց մասին խոսում է Եսայի (Չ 2)»¹³։ Լմբատավանքի որմնանկարը ստեղծվել է գլխավորապես Եզեկիել մարգարեի տեսիլքի գրական հիմքի վրա և ոչ թե հայտնի պատկերագրական կառուցվածքի ընդօրինակությամբ։ Դրանով իսկ այս որմնանկարը հանդիսանում է Աստվածահայտնության տեսարանի պատկերագրական կառուցվածքի հայկական տարբերակ։ Ինչպես նկատում է վաստակաշատ բանասեր Ասատուր Մնացա-

⁶ Սիրարփի Տեր Ներսեսյան, VII դարի մի երկ, նվիրված պատկերների պաշտպանությանը, «Հայ արվեստը միջնադարում» ժողովածու, Երևան 1975, էջ 7։

⁷ Հ. Բոթանջյան, նշվ. աշխ., Ս. Տեր Ներսեսյան, նշվ. աշխ.։

⁸ Л. Дурново, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, стр. 9—10, նույնի Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, стр. 139—140. Լ. Դուրնովն 1953 թ. մասնակցել է նաև այս որմնանկարի ընդօրինակման աշխատանքներին։ Այդ ընդօրինակությունը այժմ պահպանվում է Հայաստանի պետական պատկերասրահում։

⁹ S. Der-Nersessian, La peinture arménienne au VIIe siècle et les miniatures de l'Evangile d'Échmiadzin, — Actes du XIIe Congrès international d'études byzantines, Ochrède, 10—16 Septembre, 1961, t. III, Belgrad, 1964, p. 49—57. նույնի L'Art arménien, Paris, 1977, p. 70—71. նույնի Հայ արվեստը միջնադարում (ժողովածու), էջ 56—58, 103։

¹⁰ Т. Измайлова, М. Айвазян, Искусство Армении, Москва, 1962, стр. 40. В. Brenjes, S. Mnazakanjan, N. Stepanian, Kunst des Mittelalters in Armenien, Berlin, 1981, p. 64, 239, և այլն։

¹¹ Н. Котанджян, Цвет в раннесредневековой живописи Армении, Ереван, 1978. В. Пуцко, Иконографические схемы армянских алтарных росписей VII века. «Глобализм-բանասիրական հանդես», 1980, № 3, էջ 141—158։

¹² Լ. Դուրնովն ենթադրում է, որ զմբեթարդից ներքև, խորանում, պատկերված են եղել տասներկու առաքյալները և տիրամայրը։ Տես՝ Л. Дурново, Очерки... стр. 140.

¹³ Ս. Տեր Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, էջ 57։

կանյանը, Եզեկիել մարգարեի տեսիլքը «Աստվածաշնչի ամենաբանաստեղծական և վառ երևակայական դրսևորումներից մեկն է՝ հնուց ի վեր սիրված բանաստեղծների, նկարիչների և այլ արվեստագետների կողմից»¹⁴։ Այդ տեսիլքի որոշ հատվածների ընթերցումը մեզ հնարավորություն է տալիս մասնակիորեն պզայ այն, ինչը ոգեշնչել է Լմբատավանքի նկարչին, սակայն, միևնույն ժամանակ, եթե որմանակարը Եզեկիել մարգարեի տեսիլքի գեղանկարչական մեկնաբանումն է՝ կատարված VII դարում, ապա այսօր կարծես տեսիլքն ինքն է մեկնում կիսով չափ պահպանված որմանակարը՝ այն դարձնելով ավելի հասկանալի և թուլիչ։ Ստորև մեջ ենք բերում Եզեկիել մարգարեի տեսիլքից մեզ հետաքրքրող հատվածը, որոշ բացթողումներով։ «Տեսի եւ ահա հողմ վերացեալ գայր ի հիւսիսոյ, ամպ մեծ ի կողման նորա, եւ հուր փայլատակեր ի նման։ Եւ լոյս շուրջ Վնովաւ, եւ ի մէջ նորա իբրեւ Վտեսիլ բազմագունի ականց եւ ճառագայթ ի նմա։ Եւ ի մէջ նորա կերպարանք չորից կենդանեաց, եւ այս տեսիլ նոցա... Եւ կերպարանք երեսաց նոցա... Եւ կերպարանք երեսաց նոցա՝ կերպարանք մարդոյ եւ կերպարանք առիւծու... Եւ կերպարանք եզին, եւ կերպարանք արծուոյ... Եւ թեւք նոցա տարածեալ ի վերուստ չորեցունց. իւրաքանչիւր երկու երկու խառնեալ ընդ միմեանս, եւ երկու երկու ծածկէին ի վերուստ Վմարմինս իւրեանց... տեսանէի եւ ահաաաիկ անիւ մի յերկրի Վհետ գաւանացն չորեցունց... լի էին աջօք թիկունք նոցա շուրջ Վչորեցումբք։ Եւ ի գնալ գաւանացըն՝ գնային եւ անիւքն ընդ նոսա, եւ ի վերանալ գաւանացն յերկրէ՝ վերանային եւ անիւքն։ Ընդ որ կողմ դիմէր ամպն եւ հողմն՝ երթային գաւանքն եւ անիւքն ընդ նոսին վերանային. Վի ոգի կենդանի գոյր յանիւսն։ ... Եւ ահա բարբառ ի վերուստ քան Վհաստատութիւնն որ էր ի վերայ գլխոց նոցա՝ ի կալն իւրեանց, եւ յամբառնայն Վթեա իւրեանց։ Եւ ի վերոյ քան Վհաստատութիւնն որ ի վերայ գլխոց նոցա, իբրեւ Վտեսիլ ական շափիղայ, նմանութիւն աթոռոյ ի վերայ նորա, եւ ի վերայ աթոռոյն նմանութիւն կերպարանաց մարդոյ։ ... Եւ լոյսն որ շուրջ Վնովաւ՝ բակ ունէր. Իբրեւ տեսիլ աղեղանդ, որ ձգի յամպս յաւուրս անձրեաց, եւ այսպէս ահացին տե-

սիլ լուսոյ շուրջ Վնովաւ։ Այս տեսիլ՝ նմանութիւն փառացն Տեառն» (Եզեկիել Ա 4—28)։

Լմբատավանքի որմանակարը կատարված է գծային գրաֆիկական եղանակով, սակայն ունի վառ գունահնչեղություն։ Պատկերի գունային վերլուծությունը ցույց է տալիս, որ այն «...նկարված է ինչ-որ առանձնահատուկ ստեղծագործական լարվածությամբ»¹⁵։ Որմանակարը մեծադիր չէ և չունի այն հանդիսավորությունը, որպիսին ունենին իշխանական մեծածավալ տաճարների կոթողային որմանակարը (Արուճ, Թալին), ընդհակառակը, այստեղ նկարը ստեղծում է մի մտերմիկ միջավայր, անկաշկանդ ու տրամադրող կապ դիտողի և պատկերի միջև։ Լմբատավանքի որմանակարը հասուն գեղարվեստական միջավայրի ծնունդ է և սերտ աղերսներ ունի յոթերորդարյան հայկական այլ որմանակարների հետ (Թալինի կաթողիկե, Կոշի Ս. Ստեփանոս և այլն)։ Բնորոշ է, որ այն ոճական ընդհանրություն ունի ոչ միայն որմանակարների, այլև հայկական մանրանկարչական հայտնի ամենահին օրինակների հետ։ Խոսքը Էջմիածնի Ավետարանի վերջում կարված երկու թերթերի չորս մանրանկարների մասին է, որոնց հնությունը հասնում է VI—VII դարեր¹⁶։ Մանրանկարչական այդ եզակի նմուշների և վաղմիջնադարյան հայկական որմանակարների միջև տարվող Վուգահեռները Վգալիորեն պարզում են հայ գեղանկարչության Վատմության նըշված ժամանակաշրջանի Վատկերը¹⁷։

Լմբատավանքի որմանակարը վկայում է այն ստեղծող արվեստագետի գեղարվեստական նուրբ ճաշակի և կատարողական բարձր վարպետության մասին։ Հապարեքհարյուրամյա այդ հուշարձանը հայկական վաղ քրիստոնեական արվեստի մեծարժեք ստեղծագործություններից է, որը մինչև օրս չի կորցրել իր հմայքը և օժտված է ներգործման մեծ ուժով։ Պատահական չէ, որ հայ գեղանկարչության հսկա Մարտիրոս Սարյանը այն բնութագրել է որպես **հրաշալի որմանակար**¹⁸։


¹⁵ H. Котанджян, *ibid.*, աշխ., էջ 48։

¹⁶ S. Der-Nersessian, *La peinture arménienne.*

¹⁷ H. Драмлян, Э. Корхмязян, *Художественные сокровища Матенадарана*, Москва, 1976, стр. 42.

¹⁸ Վ. Մաթևոսյան, Մարտիրոս Սարյան. Գրքային նկարապարունները, Երևան 1980, էջ 87։

¹⁴ Ա. Մազականյան, Անիի բանաստեղծ Վարդան Անեցին և նրա ներքողը, «Բանբեր Մատենադարանի», № 10, 1971, էջ 266։



ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆՅ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

ԳՈՀԱՐ ԽԱԹՈՒՆ

Ապրել է 13-րդ դարի սկզբներին, ամուսինն է Ալիասյանը:

1216 թվականին Գոհար խաթունը միաբանել է Նոր Գետիկի կամ Գոշավանքի Ս. Աստվածածին եկեղեցուն և ներքուստ, հարավային պատի արևելյան անկյունում, փորագրել է տվել. «Ի թուականին հայոց ՈԿԵ (1216), ես՝ Գոհար խաթունս ընդ առաջին միաբանության ետու վիմ այգին եւ շինական մի ապատ որ ի Թսագոմս ի սուրբ Աստուածածինս եւ պարտ ին յիջման սուրբ հոգւոյն Բ (2) խորան պատարագել»¹³³:

Գոհար խաթունի արձանագրությունը եկեղեցու թվական ունեցող հնագույն արձանագրություններից մեկն է: Արձանագրությունից երևում է, որ Գոհար խաթունը եկեղեցուն է նվիրել մի այգի և մի ապատ շինական, որը ապրել է Թսագոմ գյուղում: Հավանաբար շինականն այգեպան է եղել և այգով հանդերձ տրվել է եկեղեցուն:

Իջևանի շրջանի վիմագիր արձանագրությունների հրատարակիչները, վիմագրագետներ Հռիփսիմե Ջանփոլադյանն ու Սուրեն Ավագյանը կարծում են, որ Գոհար խաթունը և նրա ամուսինը՝ Ալիասյանը, եկեղեցու առաջին միաբաններից են: Այդ բանը հաստա-

տում է նաև եկեղեցու ներսում, հարավային պատին, լուսամտից ներքև, ամուսինների համատեղ արձանագրությունը. «Յիջեալ լիցին ի տէր առաջին միաբանքն մեր՝ Ալիասյան եւ Գոհար խաթուն: Եւ աւր մեծի հինգ-շաբթին նոցա լիցի պատարագ անխափան»¹³⁴:

ՄԱԼԻՔԱ

Ապրել է 13-րդ դարի կեսերին Դսեղում և Արագածոտնում:

Մալիքան Դսեղի Մամիկոնյան տան ծառայողներից էր, Մարզպան Մամիկոնյանի դստեր՝ Խորիշահի դայակը:

Մալիքայի անունն առաջին անգամ հիշատակվում է Դսեղ գյուղի մոտ գտնվող Բարձրաքաջ եկեղեցու հարավային պատի արևմտյան անկյունում, գավթի մեջ բացվող որմնախորշի վրա փորագրված արձանագրությունում: Մալիքան հայտնում է. «Ես՝ Մալիքա, դսեակ Խորիշահի, դստեր Մարձպանա միաբանեցա եկեղեցոյս»¹³⁵:

13-րդ դարի 20-ական թվականների վերջին Խորիշահին ամուսնանում է Արագածոտ-

¹³⁴ Նույն տեղում, էջ 77:

¹³⁵ Գ. Մարգարյան, «Բարձրաքաջ» վանքը և նրա արձանագրությունները, «Էջմիածին», 1951, սեպտեմբեր-հոկտեմբեր:

¹³³ Դիվան հայ վիմագրության, հ. 6, էջ 76:

նի, Նիգի տեր Վաչե Վաչուտյանի որդու՝ Քուրդ իշխանաց իշխանի հետ և տեղափոխվում է Վաչուտյանների աթոռանիստը՝ Ամբերդ: Մալիքան ևս խորիշահի հետ տեղափոխվում է Ամբերդ:

Խորիշահի հեպահոգի դայակն ու սնուցողը մշակութանապատ գործունեություն է ծավալել նաև Վաչուտյանների տիրույթներում: Նա նվերներ է տվել Հովհաննավանքի Սուրբ Կարապետ եկեղեցուն: Կաթողիկե եկեղեցու ներսում, հարավային պատին, դարի կեսերին Մալիքան փորագրել է տվել. «Ողորմութեամբն Աստուծոյ ես՝ Մալիքա, սն[ու]ցանող աստուածասէր տիկնոջն խորիշահի վըստահացա ի բարէխաւսութիւն սուրբ Կարապետիս եւ միաբանեցա սուրբ ուխտիս, ետու ընծա»¹³⁶: Ստացած ընծաների դիմաց եկեղեցու սպասավորները Բարեկենդանի տոնին Մալիքայի համար սահմանել են մեկ պատարագ:

Մալիքան իր հոգու փրկության համար կառուցել է բավականին մեծ, գեղաքանդակ խաչքար: Այն կանգնած է Հովհաննավանքի գավթում, կաթողիկե եկեղեցու մուտքի ձախ կողմում: Խաչքարի պատվանդանին փորագրված է. «Ես՝ Մալիքա, աղախին Քրիստոսի եւ սն[ու]ց[ա]նող աստուածասիրին խորիշահի կանգնեցի վսաչս ի փրկութիւն հոգոյս: Որք երկրպագէք յիշեսցիք ի Քրիստոս»¹³⁷:

ՆԱՍՆԱԹՈՒՆ

Ապրել է 14-րդ դարի առաջին կեսում Թավրիզում:

1336 թվականին Նասիաթունի պատվերով Թումա գրիչն Ավետարան է ընդօրինակել: Թումա գրիչն իր հիշատակարանում իրեն համեստորեն անվանում է տկար, փրցուն, անարժան, անարհեստ: Զեռագիրը հակառակ է ապացուցում: Գրված է 246 թղթե թերթերի վրա, երկայուն բոլորգրով, հստակապես հետաքրքրական են լուսանցապարդերը:

Զեռագրի 244ա էջի գլխավոր հիշատակարանում Թումա գրիչը ընթերցողներին խնդրում է «Յիշեսցիք... զաստուգող սուրբ Աւետարանիս զՆասիաթուն բարեսէր և աստուածասէր քրիստոնէ, և զբարի ծնողսն իւր, և եղբարսն, և զբարիպարմ տղայսն իւր՝ զԱլիպէկն և զԹաւաքալին»:

Խիստ հետաքրքրական է հիշատակարանի շարունակությունը: Թուման գրում է, որ մահմեդական աշխարհը կապանքների մեջ

է առել քրիստոնյա Հայաստանը և «հալածանս յարուցանէին ի վերա քրիստոնէից, կապոյտ տալպանդ ետուն փաթթել, և ի տեղիս տեղիս եկեղեցիք ի հիմանց տապալեցին անարէն չարագործ[ն] եր»¹³⁸:

Նասիաթունի պատվիրած Ավետարանը պահպանվել ու հասել է մեր օրերը և առհավետ մտել Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հավաքածուի մեջ:

ՖԻՄԻ

Ապրել է 14-րդ դարի երկրորդ կեսում Կիլիկիայի Այաս քաղաքում, ամուսինն է Վահրամ իշխանը:

1375 թվականին եգիպտական բանակը հարձակվում է Կիլիկիայի վրա: Ավերվում է նաև Լամբրոնի անառիկ բերդը: Եգիպտացի զինվորները գերության էին քշում անվանի ու ազնվատոհմիկ շատ հայերի ու հայտիկների: Նրանք գերության էին տանում նաև Լամբրոնի տեր Կոստանդինի նկարկեն ու գունագեղ Ավետարանը: Այասի նավահանգստում թշնամիները որոշ ժամանակ կանգնում են: Ֆիմի իշխանուհին իմանում է, որ Կոստանդինի Ավետարանը ևս գերություն է տարվում և մի կողմ թողած վախը, հանդիպում է մամուկ զինվորներին, բանակցում է նրանց հետ և բավականին մեծ գումարով փրկագնում է այդ չքնաղ Ավետարանը:

Ֆիմիի հայրենանվեր արարքի մասին Սիմեոն եպիսկոպոսի հրամանով Ավետարանի սպիտակ էջերից մեկի վրա հիշատակագրություն է թողել Հովսեփ դպիրը:

Ֆիմի իշխանուհու փրկագնած Ավետարանն այժմ գտնվում է Վենետիկի Մխիթարյան Մատենադարանում¹³⁹:

ՀՆԱԶԱՆԴ

Ապրել է 15-րդ դարի սկզբներին:

1403 թվականին Հնապանդը գնում է մի Ավետարան և հանձնում Սեթ անունով արեղային, որ կազմի: Սեթ արեղան իր հիշատակարանում գրում է. «Յիշեցէք զՍէթ սուտանուն արեղայս, որ զսուրբ Աւետարանս կալմեցի: Յիշեցէք զՀնապանդ անուն հաւատարիմ կին, որ գնեց և կապել երեստ»¹⁴⁰:

¹³⁸ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 283:

¹³⁹ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Խ. Ա, 1914, էջ 559:

¹⁴⁰ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 39:

¹³⁶ Կ. Ղաֆարյան, Հովհաննավանքը, էջ 84:

¹³⁷ Նույն տեղում, էջ 109:

Հաջորդ հիշատակարանից պարզվում է, որ Հնապանդն Ավետարանը գնել և կապել է տվել ի հիշատակ իր որդու՝ Տիրոտրի, ծնողների՝ Սեթի և Գոհար խաթունի, քրոջ՝ Մարիամթագի և հորեղբայրների՝ Ջատկարի և Խապարի ու 1404 թվականին հանձնել է Խալիքի եկեղեցուն:

Ձեռագրի վերջին հիշատակարանը գրված է Հնապանդ տիկնոջ անունից: Այստեղ նա հայտնում է, որ Ավետարանը հանձնել է Խաղաղությանի որդի Գրիգոր երեցին: Հնապանդ տիկնոջ պահանջը մեկն էր, որ Գրիգոր երեցը Ավետարանը «ոչ ծախե, ոչ պահե, այլ կարդայ հանապապ»: Հնապանդը հետագա սերունդներից նաև խնդրում է, որ ով Ավետարանը «առնու և կարդայ» խնամով պահե:

Հնապանդ տիկնոջ գնած Ավետարանը 1870-ական թվականներին Ամասիայի Սուրբ Աստվածածին եկեղեցում տեսել է մեծ բանահավաք Գարեգին վարդապետ Սրվանձույանը: Նա արտագրել է Ավետարանի հիշատակարանները և պետեղել «Թորոս Աղբար» գրքի առաջին հատորում¹⁴¹:

Հայ ժողովրդի, նրա հոգևոր ու նյութական մշակույթի, նրա անձայրածիր հող-քարտեպի հետ 1915-ի բռնություն հավանաբար մոխրացել է նաև Հնապանդ տիկնոջ Ավետարանը, որը նա մեծ փափագով՝ «յուսոյ գալստեան աստուծոյդոյն» գնել ու կապմել էր տվել:

ԹՈՒՐՎԱՆԴԱՅ

Ապրել է 15-րդ դարի սկզբներին, դուստրն է Մարգարի և Գոհար-Մելիքի:

1406 թվականին Թուրվանդան իր արդար վաստակով գնել է նախորդ դարերում ընդօրինակված մի Ավետարան: Թուրվանդան Ավետարանը գնել է ի հիշատակ իրեն, ծնողների, եղբոր՝ Բեգզարին: Նա Ավետարանը նվիրել է Հովանես արքեպիսկոպոսին:

1409 թվականին Հովանես արքեպիսկոպոսը դատարկ էջերից մեկին գրել է. «Որք հանդիպիք այսմ քառաբուխ վտակիս, զըստացող սորայ պարոն Թուրվանդեն, զդուստրը պարոն Մարգարին յաղաթս յիջեցեք»:

Թուրվանդայի գնած Ավետարանը անցած դարի վերջերին պահվում էր Ջմյուռնիայում: Այստեղ ձեռագիրը տեսել է Հակոբ վարդապետ Քոսյանը: Նա ձեռագրի հիշատակարանները հրատարակել է «Հայք ի Զմիռնիա» գրքում¹⁴²:

¹⁴¹ Գ. Սրվանձույան, Թորոս Աղբար, Հայաստանի ճամբորդ, մասն առաջին, Կ. Պոլիս, 1879, էջ 65—67:

¹⁴² Յակոբ վ. Քոսյան, Հայք ի Զմիռնիա և ի շրջակայս, Կ. Փ. Վիննսա, էջ 21—23: Նաև Ժե դարի

ԳԱՐԻԱՆԵ

Ապրել է 15-րդ դարի սկզբներին, ամուսինն է Սիմեոնը:

1412 թվականին Գարիանես մի ձեռագիր ձառնց է գնել և նույն թվականին նվիրել Հայտարարի գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցուն:

Ձեռագիրը մեծադիր է և ստվարածավալ, գրվել է 506 թղթե թերթերի վրա: Նկարազարդված է, ունի հետաքրքիր կիսախորաններ և լուսանցապարտեր: Ձեռագրի գրիչը հայտնում է, որ այն գրվել է Գարիանեսի ամուսնու, ծնողների, դուստրերի՝ Հայոցի և Ուստիանի, որդու՝ Մելիքի, վաղամեռիկ որդու՝ Հովհաննեսի և մյուս մերձավորների հիշատակին:

505-րդ էջում իր նվիրատվական հիշատակարանն է գրել Գարիանես: Նա ասում է, որ ձեռագրի խնամարկու և վերակազմու է նշանակել Հովհաննես քահանային¹⁴³:

1436 թվականին Գարիանեսի Ավետարանի 506-րդ էջում հիշատակագրություն է թողել Սիմեոն գրիչը: Նա գրել է, որ գիրքը գտնվում է Սուրբ Աստվածածին եկեղեցում և նրան սպասավորողները երբևէ այն չպետք է հանեն եկեղեցուց: Սիմեոն գրիչի հիշատակարանները կապմել է Մաղաքիա կրոնավորը¹⁴⁴:

Գարիանեսի ձեռագիր ձառնցը գտնվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում:

ԷԼՄԱ

Ապրել է 15-րդ դարի առաջին կեսում Տաթևում, ամուսինն է Թադեոսը:

1427 թվականին Էլմայի որդին՝ գրիչ Սարգիսը, Տաթևի վանքում հոր և մոր պատվին Ավետարան է ընդօրինակում: Նա 574 էջի իր հիշատակարանում գրում է, որ այդ բանն արել է «վասն բազում երախտացն, զոր ունին ի վերա իմ սակաւ մի փոխարեն հատուցանելոց, զի եղիցի սայ պատճառ բարեաց և ի փրկութիւն հոգոց նոցա»¹⁴⁵:

Ձեռագրի 22-րդ էջի վրա, Հիսուսի և Մարիամի նկարներից ցած, կանգնած դիրքով նկարված են Թադեոսը, Էլման և գրիչ Սար-

հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 64—65:

¹⁴³ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 140:

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 466—468:

¹⁴⁵ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 366:

գիսը: Կենտրոնում կանգնած է Սարգիսը, աջ կողմում՝ Թադեոսը, ձախում՝ Էլման:

Ավետարանի թուղթը գնել է Ուլու խաթունը (տես հաջորդը): Թղթերը հարթեցրել, պատրաստել է Մովսես արեղան:

Ձեռագիրը նկարապարզել է մանրանկարիչ Ղապարը: 162 էջի հիշատակարանում Ղապարը գրել է. «Ով եղբայրք, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք աստ, յիշեցեք ի սուրբ աղաթս ձեր փոզկոր վարդապետն իմ Հովնաթ, և զմեալսն իմ փայլն իմ խնդիր և փայլն իմ խնդիր, և զիս՝ վանայիտան ծաղկաղ սորայ»:

Էլմա լուխնոջ պատմին ընդօրինակված Ավետարանն այժմ գտնվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

ՈՒԼՈՒ ԽԱԹՈՒՆ

Ապրել է 15-րդ դարի առաջին կեսում Տերթում:

1427 թվականին Ուլու խաթունը օգնել է Սարգիս գրչին Ավետարան ընդօրինակելու: Նա գնել է ձեռագրի թուղթը:

Ավետարանի 161 էջում Սարգիս գրիչը դիմելով հետագա սերունդներին՝ ընդօրինակողներին, ուխտավորներին գրել է. «Աղաչեմ զձեզ, ով մանգունք սուրբ եկեղեցոյ, որք հանդիպիք աստ, յիշեցեք ի սուրբ աղաթս ձեր փոզկոր մայրն իմ Ուլու խաթուն, որ պթոլթս գնեց, և Աստուած զձեզ յիշէ»¹⁴⁶:

ԱՆԻ

Ապրել է 15-րդ դարի կեսերին Գեղարքունիքում, ամուսինն է Էսարը:

1460 թվականին Անիի և Էսարի որդին՝ Ղուպին, Մարտունու շրջանի Չոլաքար գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցու մոտ բավականին մեծ, գեղաքանդակ խաչքար է կանգնեցրել ծնողների հիշատակին: Խաչքարի շրջանակին և թևերի շուրջը փորագրված է. «Թվին ՋԹ (1460): Կաման Աստուծոյ, ես՝ Ղուպիս կանկնեցի խաչս հա[ւ]ր իմոյ Էսարին, մա[ւ]րն Անին, զեղբար իմ Միրանուշին: Որք երկրպագեք աղաթս յիշեցեք»¹⁴⁷:

ՄԱՐԻԱՍ

Ապրել է 17-րդ դարի առաջին կեսում Էջմիածնում, ծնողներն են քահանա Մինասը և Չուլալը:

Մարիամը 1649 թվականին մահացել է և նրա հիշատակին շուրջառ է պատրաստվել:

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 366:

¹⁴⁷ Դիվան հայ վիմագրության, հ. 4, էջ 191:

Շուրջառը սպիտակ մետաքսից է, ասեղնագործված է գունավոր թելերով: Մեջքի կողմից կանաչ մետաքսե վերադրությամբ մեծ խաչ է կարված, որի վրա կան կրոնական բովանդակությամբ պատկերներ: Խաչի հիմքից դեպի աջ և ձախ ձգվում են արմավենու և խաղողի ճյուղեր, որոնց պտուղների փոխարեն շրջանակների մեջ պատկերված են 12 առաքյալները: Շուրջառի ամբողջ ֆոնը ծածկված է ծաղիկներով, պտուղներով, ուտերով:

Խաչի գլխամասում, խաչված Հիսուսի գլխավերևում, գործված է. «Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից», իսկ խաչի չորս թևերի վրա՝ «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս»:

Բուն արձանագրությունը գրված է խաչի հիմքին. «Յիշատակ է շուրջառս Մարիամին հոգոյն և կենակցին Յովհաննէս իրիցին եւ ծնողացն՝ տէր Մինասին եւ Չուլալին եւ ամենայն արեան մերձաւորացն, ի դուռն սուրբ Էջմիածնա: Թվին ՌՂԸ (1649)»¹⁴⁸:

Մարիամի հիշատակին պատրաստված շուրջառն այժմ գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

ՄԱՐԻԱՆ

Ապրել է 17-րդ դարի վերջին Ալիծոր-Հալիծորում, Սուրբ Աստվածածին անապատում:

1690 թվականին Մարիանը պատմիրում է աղոթագիրք ընդօրինակել: Գրիչը քոյր Մարիանի խնդրանքը կատարել է բավականին ճաշակով: Աղոթագիրքը փոքր է, կապված է 95 թերթից, մեծությունը 11×8 սմ է, գրված է միասյուն, բոլորգրով: Սկզբի 34 թերթերը մագաղաթ են, հաջորդ թերթերը՝ թուղթ: Գլխատառերը գրված են կարմրադեղով:

Գրչի հիշատակարանը գրված է ձեռագրի 95ա-բ էջում: Այդտեղ կարդում ենք. «Գրեցաւ քաղցրաճաշակ սուրբ աղօթքս, որ է խօսք Եփրեմի ընդ Աստուծոյ ի յանապատն յԱլիծորու ի դուռնն սուրբ Աստուածածնին, ձեռամբ (գրչի անունը քերված է) ապաշխարողի, վայելումն քոյր Մարիանին, յիշատակ իւրն և ծնողացն, ամէն:

Ձեռքս փրտի և հողանա,
Մոխիր, փոշի, գավախ դառնա,
Գիրս յիշատակ առ ձեզ մնա,
Յիշեք առ տէր զգծող սորա»¹⁴⁹:

¹⁴⁸ Հայերեն արձանագրությամբ առարկաներ, աշխատասիրությամբ Եվգեն Մուշեղյանի, Ե., 1964, էջ 102:

¹⁴⁹ Վ. Պետրոսյանց. Ապարանի շրջանի ձեռագրերը, էջ 159:

Ձեռագիրը երկար ճանապարհ է անցել ու 19-րդ դարում հասել է Ապարան: Այժմ Մարիանի աղոթագիրքը մտնում է մեր հավաքածուի մեջ:

Մ Ա Ր Ի Ա Մ

Ապրել է 18-րդ դարի սկզբներին Կարինում:

1713 թվականին Մարիամը Սողովմի պատվերով Սուրբ Լուսավորիչ եկեղեցու համար գործել է մեծ ծածկոց:

Ծածկոցը վարդագույն մետաքսից է, կենտրոնում պատկերված է հոգևորական, ամբողջ ֆոնը ծածկված է ծաղիկներով: Պատկերները գործելու համար օգտագործվել են կլապիտոն և ոսկեթել:

Մարիամ նկարչի հիշատակարանը գործված է ծածկոցի ներքևի մասում երկու տողով: Ահա այն. «Յիշատակ է ծածկոցս գաղցի Սողովմին եւ ծնողացն Իսրաէլին եւ Գուլիստանին եւ հոգետր վարպետ Սինանին, ձեռամբ Մարիամին, ի դուռն սուրբ Լուսաւորչին, թվին ՌՃԿԲ (1713)»¹⁵⁰:

Հետագայում ծածկոցը Կարինից փոխադրվել է Արևելյան Հայաստան: Այժմ պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Ե Լ Ի Ս Ա Բ Ե Թ

Ապրել է 18-րդ դարի երկրորդ կեսում Հաշտարխանում, գանջեցի Սարգսի դուստրն է:

Ելիսաբեթը զբաղվել է ձեռագործով: 1776 թվականին նա մի խումբ հաշտարխանցիներից եմփորոն պատրաստելու պատվեր է ստացել:


Եմփորոնը պատրաստվել է Էջմիածնի նվիրակ և Հաշտարխանի առաջնորդ սանահնեցի Հովսեփ արքեպիսկոպոսի համար:

Եմփորոնի պատվիրատուների արձանագրությունը գտնվում է եմփորոնի վերին ծայրում: Նրանց անունից ասվում է. «Կալմեցաւ եմփորոնս այս մասնակցութեամբ բարեպաշտ անձանց, արանց եւ կանանց, նաեւ աղայ Մինասի կողակից Աննային, պարոն Խոսրովի կողակից Մարիամջանին, Մարութի որդի Գրիգորին, Գրիգորի որդի Սարքսին և Ազիկի որդի Վարդանին, ի վալելս Սիմէօն սրբապան կաթողիկոսի աջակերտ, սրբոյ աթոռոյն Էջմիածնի նվիրակ եւ Հաշտարխանայ առաջնորդ սանահնեցի Յովսեփ արքեպիսկոպոսին»: Արձանագրության շարունակությունը և Ելիսաբեթի հիշատակարանը գործված է եմփորոնի մյուս ծայրում. «Սիրահար հոգաբարձութեամբ հոգետր որդոյն իմոյ եւ դստերն մահտեսի Ազարիայի որդի, տերամբ զօրացեալ Վարդանին, եւ կողակցոյն իւրոյ Ծաղիկին: Թվին 1776, ի Հաշտարխան: Նկարեցաւ ձեռամբ գանջեցի Չարգսի դուստր Ելիսաբեթին»¹⁵¹:

Ելիսաբեթի պատրաստած եմփորոնը գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

¹⁵⁰ Հայերեն արձանագրությամբ առարկաներ, էջ 96:

¹⁵¹ Հայերեն արձանագրությամբ առարկաներ, էջ 103, 106:



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АПРЕЛЬ 1982 г.)

1. Проповедь Его Святейшества в праздник св. Воскресения в Первопрестольном Соборе (11 апреля 1982 г.) (стр. 3—5).

2. Проповедь Его Святейшества в Первопрестольном Соборе (25 апреля 1982 г.) (стр. 6—8).

3. Поздравительные послания Его Святейшества духовным пастырям Церквей-сестер по поводу праздника св. Воскресения (стр. 9—11).

4. Поздравительные послания Его Святейшества иерархическим престолом Армянской Церкви, начальникам епархий и церковным общинам (стр. 12—13).

5. Энциклика Его Святейшества, направленная благодетелю Первопрестола Аршавиру Кло-рикану, по поводу его награждения орденом св. Григория Просветителя (стр. 14).

6. Выражение высокой оценки Его Святейшества членам Лондонского армянского епархиального Совета и вспомогательной женской группы по поводу награждения их орденом св. Нерсеса Шнорали (стр. 15).

7. Энциклика Его Святейшества, направленная г-же Аракси Меотеметян по поводу 40-летия ее деятельности в благотворительных союзах (стр. 16).

8. Церковный амвоп, вести: о служениях в апреле месяце св. Литургий в Первопрестольном Соборе, произнесенных проповедях и других торжествах в св. Эчмиадзине (стр. 17—20).

9. Служение в Первопрестольном Соборе по поводу 67-летия апрельского геноцида (24 апреля 1982 г.) (стр. 21—22).

10. *Епископ Нарек Шакарян*—Таинство Страстного Четверга; религиозный очерк (стр. 23—25).

11. Церковные служения Страстной Недели в Первопрестоле (стр. 26—27).

12. Перевод на современный армянский язык жития св. Шушаник (стр. 28—36).

13. Дьякон Вардан Багдасарян—Когда священен корень; проповедь (стр. 37—38).

14. Дьякон *Смбат Аристакесян*—Вечное слово Господа; проповедь (стр. 39—40).


15. Жизнь общины в Калифорнийской епархии (стр. 41—42).

16. Юбилейные торжества в Буэнос-Айресе, посвящены 40-летию со дня рукоположения в духовный сан служителя местной армянской церкви архимандрита Арутюна Мушяна (стр. 43—44).

17. *Левон Тер-Петросян*—Опыт периодизации древней и средневековой армянской переводной литературы (научное исследование) (стр. 45—52).


18. *Карен Матевосян*—Фрески церкви св. Степаноса Лмбатаванка (стр. 53—55).

19. *Виктор Петросянц*—Женщины—защитницы отечественной культуры в 13—18 веках (стр. 56—60).



„ETCHMIADZIN“
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(APRIL 1982)

1. The sermon of His Holiness in the Holy Cathedral during the feast of Easter (11-th April 1982) (pages 3—5).
2. The sermon of His Holiness in the Holy Cathedral in memory of Marietta Shahinian (25-th April 1982) (pages 6—8).
3. The congratulatory letters of His Holiness to the spiritual heads of the Sister Churches, on the occasion of the Holy Resurrection (pages 9—11).
4. The congratulatory letters of His Holiness to the hierarchical Sees of the Armenian Church, diocesan prelates and church communities, of the feast of Holy Resurrection (pages 12—13).
5. The encyclical of His Holiness to Mr. Arshavir Glorikyan, the benefactor of the Holy See, on the occasion of their granting by the decoration of St. Gregory the Illuminator (page 14).
6. Patriarchal high appreciation to the four members of the Armenian Community Council and the four members of the Ladies' Auxiliary Union at London, on the occasion of their granting by the decoration of „St. Nerses the Graceful“ (page 15).
7. The encyclical of His Holiness to Mrs. Araksi Meutemedian, on the occasion of the 40-th anniversary of her public activity (page 16).
8. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of April (pages 17—20).
9. The recall of the 67-th anniversary of the Armenian genocide in the Holy See (pages 21—22).
10. *Bishop Narek Shakaran*—The mystery of the Maundy Thursday: sermon (pages 23—25).
11. The church festivities of the Holy Week in the Mother See (pages 26—27).
12. The translation into modern Armenian of the martyrology of St. Shushanik (pages 28—36).
13. *Deacon Vartan Baghdassarian*—When the root is holy: sermon (pages 37—38).
14. *Deacon Sembat Aristakessian*—The eternal word of the Lord: sermon (pages 39—40).
15. The diocesan life in California (pages 41—42).
16. Jubilarly festivities in Buenos Aires devoted to the 40-th anniversary of the church activity of Reverend Harootiun Mushian (pages 43—44).
17. *Levon Ter-Petrosian*—An essay of periodization of the literature of old and mediaeval Armenian translation (pages 45—52).
18. *Karen Matevosian*—The fresco of St. Stepanos church of Lematavank (pages 53—55).
19. *Victor Petrossiantz*—Armenian ladies who have been defenders of the Armenian culture, XIII—XVIII centuries (pages 56—60).



"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(AVRIL 1982)

1. Homélie de Sa Sainteté prononcée le 11 avril 1982 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de la sainte Résurrection de notre Seigneur Jésus-Christ (pages 3-5).

2. Homélie de Sa Sainteté prononcée le 25 avril 1982 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pages 6-8).

3. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs spirituels des Eglises soeurs à l'occasion de la sainte fête de pâques (pages 9-11).

4. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise arménienne à l'occasion de la fête pascale (pages 12-13).

5. Encyclique de Sa Sainteté annonçant l'attribution de l'ordre de "Saint Grégoire l'Illuminateur" à M. Archavir Glorikian, bienfaiteur du Saint-Siège d'Etchmiadzine (page 14).

6. En signe de haute appréciation, Sa Sainteté confère l'ordre de "Saint Nersès Chenorhalli" aux 4 membres du conseil diocésain de la communauté arménienne de Londres et aux 4 membres de l'Union des dames pieuses, auxiliaire du même conseil (page 15).

7. Encyclique de Sa Sainteté adressée à Mme Araxie Meutémédian à l'occasion du 40^e anniversaire de ses activités publiques (page 16).

8. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses

qui ont eu lieu à Saint-Etchmiadzine au cours du mois d'avril 1982 (pages 17-20).

9. Le 24 avril, commémoration au Saint-Siège du 67^e anniversaire du génocide perpétré contre les Arméniens en 1915 (pages 21-22).

10. *Evêque Narek Chakarian*—Le mystère du jeudi saint* (sermon)—(pages 23-25).

11. Solennités religieuses au Saint-Siège à l'occasion de la semaine sainte (pages 26-27).

12. La traduction en arménien moderne de l'histoire du martyre de sainte Chouchanik (pages 28-36).

13. *Diacre Vartan Baghdassarian*—Quand la racine est sainte* (sermon) (pages 37-38).

14. *Diacre Sembat Aristakessian*—La parole éternelle du Seigneur* (sermon) (pages 39-40).

15. La vie diocésaine dans la communauté arménienne de Californie (pages 41-42).

16. Festivités jubilaires à Buenos Aires consacrées au 40^e anniversaire de l'activité ecclésiastique de l'archimandrite Haroutioun Mouchian (pages 43-44).

17. *Lévon Ter-Pétrossian*—Un essai de division en périodes des traductions arméniennes à l'époque ancienne et médiévale (étude scientifique)—(pages 45-52).

18. *Karène Matévossian*—La fresque de l'église Saint-Etienne de Lembatavank* (pages 53-55).

19. *Victor Pétrossiants*—Les femmes arméniennes connues en Arménie aux XIII-XVIII siècles sous le nom de "défenseurs du patrimoine culturel des Arméniens" (pages 56-60).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճարում	3
Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում	6
Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատ- րիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծուբյուն Տ. Տ. Վալզեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	9
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ջնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետա- կան երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական հա- մայնքներին	12
ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնյակը Մայր Աթոռի բարերար տիար Արշավիր Կյուրիկ- յանին՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» ջջանշանով պարգևատրելու առիթով	14
Հայրապետական բարձր գնահատություն	15
ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը տիկին Արաքսի Մեղիսյանին՝ նրա հանրօգուտ գործունեության 40-ամյակի առիթով	16
ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ—Եկեղեցական բեմ, լուրեր	17
Ապրիլյան եղեռնի վաթսույնյոթերորդ տարեկիցի ոգեկոչումը Մայր Աթոռում	21
ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԸԱՔԱՐՅԱՆ—Ավագ Հինգշաբթի օրվա խորհուրդը	23
Ավագ Շաբաթու եկեղեցական հանդիսությունները Մայր Աթոռում	26
✓ Այսպիսով Սուրբ Հուլանիկի	28
ՎԱՐԴԱՆ ՍՐԿ. ԲԱՂՎԱՍՏԱՐՅԱՆ—Երբ սուրբ է արմատը	37
ՍՄԲԱՏ ՍՐԿ. ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ—Տիրոջ հավերժական խոսքը	39
Թեմական կյանք—Կալիֆոռնիայում	41
Հոբելյանական հանդիսություն—Բուենոս Այրեսում	43
Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ—Փորձ հայ հին և միջնադարյան թարգմանական գրականու- թյան պարբերացման	45
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Լմբատավառքի Ս. Ստեփանոս եկեղեցու որմնակարը	53
ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Հայրենական մզկույթի պաշտպան հայ կանայք	56
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата	61
„Etchmiadzin“ official journal of Holy Etchmiadzin	62
„Etchmiadzine“ organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	63



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՅԻՆ

«ԷՋՄԻԱՅԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 7.05.1982 թ.: Ստորագրված է տպագրության 5.07.1982 թ.
Տպագրական 4 մամուլ+1 ներդիր, թուղթ 60×84¹/₂, պատվեր 402

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1982 թ.